17
Q-88

№ 13296

100
77-ԱՐ.

100
77-ԱՐ

17 356-47 3719-4-2
Ա-88

# ԴԱՐԱՍՏԱՆ ԽՐԱՏՈՒՑ

Քաղեալ 'ի գրոց իմաստասիրաց ջանիւք
Ազնուական Գէորգայ Արծրունւոյ՝
որոյ ծախիւք եւս տպի

'Ի վայելս Մանկանց Հայաստանի։

'Ի Հայրապետութեան Տեառն
ԵՓՐԵՄԻ Սրբազնասուրբ
Կաթուղիկոսի ամ Հայոց։

Հրամանաւ Գերարժան Սրբազնութեան
Տեառն ՆԵՐՍԻՍԻ Առաքելագործ
Արհիեպիսկոպոսի եւ Առաջնորդի Հայոց
Վրաստանի եւ այլոց։

1004
18739
...ИЧНАЯ Библиотека 1922 имени А. Мясникяна

'Ի Տպարանի Ներսիսեան Դպրոցի՝ [illegible]
'ի նոյն Աշակերտաց

1829 ՏՓԽԻՍ ՌՄՀԸ

332
317

1 10 18 25

«Քաղցրութիւն զխրատ և ըզ-
գիտութիւն ուսո ինձ:

Սաղմոս. ՃԺԸ. 66.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Արդարև բազումք մարթացան զկա-րևոր ինչ թողուլ յառաքինութեան ձեռն հայրենեաց և ազգի իւրեանց 'ի դէպս գիտութեան և հրահանգութեան ազգաօգուտ իւրոց · այլ ես նուաստս՝ որ չունիմ զգրականական գիտութե այնքան՝ որ արարից ինչէն զնորագոյն մատեան գիտութեան, վասն որոյ ձեռնամուխ եղեալ ժողովեցի զգրուածս բարոյականս խրատուց և պատմութեանց հնոց Փիլիսոփայից և Աթենա-բանից . զորս ընթերցայ և ընտրանաւ քաղեցի զպիտանին օգտակարս բարուց մարդկան . որ զի կարօղ լիցի ամենայն ոք մատաղերոց ուղղաւորել զկանոնս մարդկային բնութեան իւրոյ : Քանզի արդարև ոչ թէ վասն գիտնական անձանց իմաստա-նոց է արարեալս այս աշխատասիրութիւն ժո-ղովելոյ զբազում գիտութե, որոց թէ կամք իցեն ապա 'ի երկրորդել՝ չմեղանչեն եթէ ունիցին զոյն . այլ ես ընծայեմ զայս յընթերցողաց նոր-ավարժից մանկանց և այլոց բազմաց թերավարժ հայրենակցաց իմոց, և ո աղեմ մի յանդուրժանս համարել . կամ 'ի դատ և 'ի պայքար քննութե մտանել պարսաւելով զերկս իմ . որոց վասն և խնդրեմ 'ի նոցանէ ներողութիւն անվարժու-թեանս յուսման .

Բայց յայսմանէ ձեռնարկեալ է իմ կազմել զերկու հատոր պատմութեանս և ըստ նմին գը-

կար-

Խաւարհացոյցս մասին ինչ Հայաստանի և Մա-դագասկարի և այլոց անձանօթ գաւառաց Աշխարհաց. նաև զամենայն ճանապարհորդու-թիւնս և շրջագայութիւնս իմ ընդ ծովս և ընդ բնակիչս աշխարհի. և ծանօթացի ինչ վարուց և բարուց նոցա. զոր և փութամ'ի լոյս ածել յօգուտ իմաստասէր հայրենեաց իմոց, եթէ յաջողեսցէ Տէր.

## Բան Քաղաքացւոյն առ Մերձանողս.

Ի խնդիր եղէ մտօք կաթոգին,
շրջիլ ԺԵ ամ ՚ի հրճուանս անձին.
ընտրելին ուստից ինձ ճանապարհ դիւրին,
փութալ տեսանել զհաճոյս իմ սրտին.
Գրեմ ձեզ ահա եղբարցդ Հայկածին,
խնդրեմ քաղցրութե̃ լսել իմ բանին.
պատմեմ զդիպուածս փոփոխ վիճակին,
զերբմունս հոլովմանց ճղկային բաղդին.
Եր ինձ նեղութե̃ փորձանք բազմադին,
՚ի հայրենիս իմ ընդ իս անցք անցին.
զի՞նչ օգուտ էր ինձ սիրել զհայրենին,
յումպէտս վատնել զքանքար շնորհին.
Ուստի զգացի մտօք մարդկային,
թէ չէք ճար բնակիլ յայլազգեաց միջին.
թողի զա̃մ զհայրենեաց բաժին,
՚ի սպառ թօթափել շոգեայ զհետ բաղդին.
Բամից գիտելեաց մեծութե̃ երկրին,
անտեղեակ դրէց, ծովու, ցամաքին.
զեմ գիծ տեսութ առ կէտ հայրենին,
սահման դատէի ծագաց աշխարհին.
Գարնանային օէր յառոյգ հասակին,
ոսկեքօղ զգուանք նինջ արշալուսին.
քան ամենիւք երկու ընդ նմին,
եղէ յիմ երկրէ պանդխտել ինքնին.
Եհաս ձայն առ իս ձայն բնաբանին,
ինձ բանակտնիս որ տէրս եմ նորին.

շէր-

չքնաղ է ոլորտս իւր Հողագընդին,
ընտրեալ ինձ տեղի բնակիլ 'ի նմին.
ՅԱրիայի մասն է Պարսկաստանին,
'ի Պարսից ծովէ Մարմարականին.
'ի Կասպից ծովէ ցմերձ Պոնտոսին,
բարս և վարս ազգայն առ 'ի զնին.
Րոպէ երգ երգոյ նկարք իմ գըրչին,
վերառեալ տանեն յԵւրոպացին.
համբաւ իմաստից որք հռչակեցին,
կրթութէ անձանց և հանճարք նոցին.
Ծ'եր լայնածաւալ 'ի Ռուսաստանին,
'ի տալ Գերմանեայ է Գաղղիային.
Անգղեայ Հոլանդեայ է Բոլոնիային,
Շուէցեր Սպան է Աւստրիային:
Րախձան զիս կրթէր 'ի Հայեցուածին,
իմաստ զգօնութե բնակչաց նոցին.
ուսմունք գիտութե և հրահանգին,
որք յառաջագոյն տխմար ոք էին:
Սրով ըղձացի զաղէտ մեր ազգին,
Թէ քանի՛ աղքատ եմք յուսման մասին.
ըղձիմեանս ատեմք նախանձու չարին,
այլոց հարազատ առօղ զմերային:
Ախծեալ դառնութե աչօք լալագին,
իբրև զվայրենի է երկիր քարշին.
կորուսեալ զանուն մեծ Աքանազին,
ողորմ և յիմար կեան թշուառագին.
Նոյն պարգևատուն Ա՛ծ տ՛ր Հոգին,
տացէ նոյն շնորհս որպէս ետ նոցին.

բաշխ-

բաշխեալ զգիտութիւն մեր Հայոց ազգին,
առնել միմեանց սէր շուհ առ Հայրենին.
Ի՝ խուսեցին մեզ փառք յաղթանակ կրկին,
Թէ ջանք և սէր մեր բոլորոքեան վառին.
մեզ աղխեալ դրունք շնորհաց բացցին,
և չիջեան սիրտք մեր ուսմամբ արծրծին.
Ուսումնական աչք մարդոյս իմներքին,
լոյս Հայաստանի և որդւոց նոցին.
զոր թէ ոչ տեսցեն աչք իմ կցանկալին,
ոսկերքս զուարճասցին 'ի գերեզմանին.
Յիշատակ կացցէ այս աշխատային,
հոգւով իմ ցանկալս բարուն ազգին.
որք թէ ունիցին զմիտս բանականին,
փութով թեւասցին շնորհօք երկնային.

## Վասն քաղաքավարութեան ամենայն հաստատի· ընկերութիւն ընդ միմեանս.

ԱՄԵՆԱՅՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՔ և իմաստուն անձինք քաղաքավարութեան բառս սովորութեամբ առեալ են 'ի տեղի առաքինութեան, որ ուղղէ և վայելչացուցանէ զբանս և զգործս մարդկան ընդ արտաքին և քաղաքական կենաց, զի է մասն բարեխառնութեան, ըստ որում 'ի գործողութիւնս մարդկան դնէ զօրինաւոր չափ և զվայելուչ եղանակ. ուղղելն և վայելուչ գործելն են կրկին պաշտօնք քաղաքավարութեան, զի այս առաքինութիւն կարգէ նախ՝ յուղղել և 'ի սրբել զբանս և զգործս մարդկան յարտաքին թերութեանց և յանախորժ խորթութեանց. և միւս ևս՝ որ հետևակ է առաջնոյն, առ ուսուցանել և առաջնորդել մարդոյ յազնուական շնորհս բա-

նից

նից և գործոց. ունելով յամենայնի չափ և կանոն զհայելումն, որում հնարի նմանեցուցանել զվարմունս մարդկան ՚ի միմեանս կենակցութեամբ:

Հանրական կանոնք կոչին ՚ի քաղաքավարութեան, որք ՚ի հասարակի հային առ ամենայն գործողութիւնս և վարմունս մարդկան միանգամայն, և համարին իբր ուղղիչ և կառավար համօրէն մարդկային կենակցութեանց. զի նոքօք և եթ հնար է զգօնամիտ մարդոյ տիրել և ուղղել և վայելչացուցանել զամ գործս և զբանս իւր յամ ընթացս քաղաքավարութ. այսպիսի կանոնք թէպէտ և մարթին լինել բազմապատիկ ըստ իւրաքանչիւր տեսակի մարդկային գործողութեանց, այլ որ գլխաւորքն են ՚ի նոսա և յաւէտ պիտանիք՝ զայնս միայն նշանակեսցուք աստանօր:

Առաջին կանոն քաղաքավարութեան զոր աւանդեն իմաստունք՝ է այն, զի պարտ է ամենայն ումեք արթուն մտօք ուշադիր լինել այնմ ամենայնի, զոր հանդերձեալ է խօսիլ կամ գործել. քանզի այր անխորհուրդ նման է անպարիսպ քաղաքի, յասել իմաստնոյն. Որպէս քաղաք կործանեալ ՚ի պարսպաց և

ան-

անդարձելի եղէ, նոյն՝ այր, որ ոչ խորհրդով գործեսցէ ‖. Սիրաք. ԻԷ. 28.

Վասն զի 'ի մարդկային կենակցութիւնս բազմապիսի թերութիւնք և տմարդութիւնք սովոր են յառաջ գալ յանմտածութենէ, յորոց առ 'ի զգուշանալ՝ պիտոյ է մարդոյ յա՟մի զգաստ և հսկօղ լինել 'ի վերայ բանից և գործոց իւրոց, զի մի՛ ինչ խօսեսցի կամ գործեսցէ աննախորհուրդ և ըստ բերման բնութեան, այլ դիտելով և կշռելով արասցէ զա՟մ.

Երկրորդ՝ պարտ է ամենայն մարդոյ քննել և տեսանել ոչ միայն զիրսն՝ զոր հանդերձեալ է ասել կամ առնել, զի իցէ բարի և վայելուչ. այլ և արժան է հայիլ յեղանակն առնելոյ. նախ՝ զի վայելչապէս և ըստ կարգի արասցէ. և երկրորդ՝ զի գործօղն 'յառնել իւրում այնպիսի օրինակաւ վարեսցի, որ իցէ յանկաւոր և պատշաճ իւրում վիճակի և հասակի, զի ո՛չ ամենայն գործողութիւնք և վայելչականք՝ ամենեցուն են 'ի դէպ, զո՛ր օրինակ չէ՛ արժան մեծամեծաց՝ ծերոց և չափահասից 'ի կենցաղավարելն ընդ հաւասարս կամ ընդ ստորինս՝ վարել զայնպիսի շարժմունս յար-

յարգուԹեան , զոր անկ է տղայոց ի կրտսերագունից առնել առ վերնագոյնս · որպէս համբուրել զձեռս , կամ մատուցանել զառաջին և զպատուաւոր տեղին և այլն · բայց եԹէ հանգամանք վիճակի իշխանուԹեան կրտսերոյն զնոյն պահանջեսցէ · Նոյնպէս չէ՛ օրէն մանկանց և ստորագունից 'ի վարիլն ընդ հաւասարս կամ ընդ վերնագոյնս՝ զձեռոց և զմեծամեծաց վարմունս գաղափարելով 'ի գործ ածել · Ոտս այսմ և գլխականաց անվայելուչ է ընդ կարգի ազնուականաց շարժել և վարել՝ այլ պարտ է ամենեցուն միտ դնել՝ զի վայելչագոյն արասցեն զպատշաճեալն վիճակի իւրեանց ·

Երրորդ՝ պարտ է քաջ դիտել 'ի ժամանակն՝ ,, յառիԹն և 'ի տեղին յորում գործէ ոք , խօսի և կենակցէ · զի Թէպէտ և գործ ինչ կամ խօսք կամ շարժմունք իցեն մարդավարականք և վայելուչք , սակայն Թէ լինիցին 'ի տարադէպ ժամու և առԹի կամ յանյարմար տեղւոջ՝ համարին տմարդուԹիւնք , զոր օրինակ 'ի կամիլ ուրուք շնորհակալ լինել զումեքէ վասն երախտեաց նորա , եԹէ գտցէ զնա 'ի սուգ կամ 'ի տկարուԹեան մարմնոյ , կամ զբաղեալ յան-

յաջողութեան ինչ գործոց, չէ՛ օրէն տանել զայն յայնժամ. զի յայսպիսի առիթս և 'ի ժամանակս՝ յաւէտ մխիթարութիւն և քաջալերութեան կարօտէ բարեկամն՝ քան շնորհակալութեան.

Չորրորդ՝ պարտ է միտ դնել սովորութեանց Եւրոպիացւոց. որք վայելուչ համարեալ է ամենայն կերպիւ քաղաքավարութեան նոցին, զի 'ի տեսանել բարեկամաց զմիմեանս՝ բանալ գլուխ և խոնարհիլ իրերաց. միմեանց ձեռն ընկալնուլ և սիրահար բարեկամութեամբ շարժել զձեռս, և 'ի հրաժարելն խնդրել 'ի միմեանց չմոռանալ զբարեկամութիւն, կամ արժանի լինել կրկին միմեանց տեսութեան, քանզի այս քաղաքավարութիւն օտար գոլով 'ի սովորութենէ Արևելեաց և անգործածելի առ նոսա իբր տմարդութիւն և ծաղրածութիւն համարի. ուստի պարտ է խոհական անձին քննել և իմանալ, և ըստ տեղւոյն և քաղաքին և ազգին 'ի գործ արկանել ըստ սովորութեանց նոցին.

Հինգերորդ՝ որովհետև հարկ է մարդկային ընկերութեան կենակցութիւն ունել ընդ բազումս, որոց վիճակ՝ հասակ և հանգամանք բնութեան անհնար է, թէ իցեն միօրինակ. նմին իրի պարտ է

մար-

մարդոյ յամենայնի 'ի վարմունս իւր միտ դնել և հայիլ, թէ ընդ որս և առաջի որո՛ց կենցաղավարի. որպէս զի ըստ այնմ յարմարեսցէ զանձն վայելուչ օրինակաւ վարիլ ընդ նոսա. առ որ 'ի նպաստ վարժութեան գիտել արժան է.

Նախ՝ զի զոր օրինակ պէսպէս են մարդիկ բնութեամբ, նոյնպէս ևս այլ և այլ են բնական բերմունք և ախորժակք նոցա զոր ունին առ զանազան իրս. Իբր զի՝ ոմանք բնապէս ցանկան մեծութեան՝ փառաց և իշխանութեան, այլք՝ ընչից և ստացուածոց. իսկ կէսք՝ կերակրոց, ըմպելեաց և զբօսանաց, և այլք՝ այլոց իրաց, առ որս իցեն հակամիտեալ 'ի բնէ. վասն որոյ և յամենայն ձկտին խնդրել զայնս՝ զորս ախորժեն, բայց քանզի անհնար է նոցա յամենայն իրս և յամենայն տեղիս զնոյն գտանել. փափաք նոցա և ցանկութիւն յայնպիսիս ուղղի՝ զոր հնար է նոցա ընդունիլ յայլոց. վասն որոյ տեսանեմք յաշխարհի, զի որ ընչասէրն է՝ կամ որ փափաքի ստացուածոց յայնպիսի տեղիս, ուր ոչ գոյ յոյս օգտի, զոր օրինակ 'ի հասարակ կենցաղականութեան, սէրն ընչից ձկտի երբեմն 'ի սէր պատուոյ և մեծարանաց. Վասն որոյ և այնմ փափաքի և զնոյն խնդրէ.

քէն. Սմին իրի պարտ է ամենայն ումեք խը-
նամով գիտել, զի 'ի կենակցիլն ընդ այլս,
յորժամ ոչ կարէ լինել ղեուն ախոր-
ժակ նոցա, մի՛ արասցէ կա՛մ ասասցէ զայն-
պիսի ինչ, որով տացի առիթ քստմնելոյ։
Երկրորդ՝ գիտել արժան է, զի զոր օրի-
նակ բնութիւն տայ մարդոյ յօժարիլ առ
զանազան իրս, նոյնպէս առնէ և հասակն.
վասն որոյ և տեսանեմք՝ զի ծերք այլ
իրաց ցանկան, և մանկունք այլում իրի,
սմին նման գործէ և վիճակ մարդոյ, զի
այլ է բաղձանք մեծատանց, և այլ՝ աղ-
քատաց. այլ՝ քաղաքացւոց, և այլ՝ շինա-
կանաց. այլ՝ իմաստնոց, և այլ՝ տգիտաց,
և այլ՝ սորկաց. այլ՝ եկեղեցականաց, և այլ՝
աշխարհականաց. այլ՝ հիւանդաց, և այլ՝
առողջաց. զնոյն է տեսանել և յայլևայլ
արհեստաւորս իսկ. զի ըստ պէսպէս և
ըստ զանազան գործոց, յորս պարապին,
համահանգէտ այնմ՝ իղձս և յօժարու-
թիւնս կրեն 'ի սրտի, զոր գիտելով մար-
դոյ՝ պարտի 'ի կենակցութիւնս իւր խո-
հական ընտրութեամբ և մտադիր արթ-
նութեամբ գիտել և կշռել զիւրաքան-
չիւրոցն բնութիւն՝ զվիճակ և զայլ հան-
գամանս, զի կարասցէ վայելուչ կարգօք
վարիլ ընդ ամենեսեան. սակայն առ 'ի
երաս

խրատ ընդհանրական պարտ է զգուշանալ յասելոյ կամ 'ի գործելոյ առաջի այլոց զայնպիսի ինչ՝ որ իցէ նողկալի կամ անհաճոյ. և զզուումն բերէ զգայութեանց, կամ տայ յիշատակել զանախորժս, կամ ընդդէմ ելանէ սիրոյ և պատուոյ այլոց. ևս և որ կարգի 'ի վնաս ընկերին.

Վեցերորդ՝ պարտ է միտ դնել քաղաքավարական շարժմանց և խոնարհական արարողութեանց, զոր Եւրոպիացիքն կոչեն (չէրէմօնի) որով ընծայի ումեք պատիւ և յարգութիւն. սակայն գիտել արժան է՝ զի կրկնակի լինի այն, առաջինն է՝ որ լինի 'ի պարտուց, որպիսի է պատիւն և մեծարանքն՝ զոր պարտի առնել փոքրն առ մեծն. որպէս ծառայք առ տեարս. որդիք առ ծնօղս. և հպատակք կամ ժողովուրդք առ իշխանսն և առ առաջնորդ իւրեանց, և զայս ստիպին նոքա առնել 'ի բնական իրաւանց, զորովք եթէ զանց արասցեն անիրաւին առ նոսա, քանզի 'ի նուաստագունից առ մեծամեծս՝ ոչ այնչափ քաղաքավարութիւն պահանջի, որչափ խոնարհ հպատակութիւն. իսկ երկրորդն է՝ որ լինի 'ի սիրոյ և վասն մարդավարութեան զոր 'ի կիր առնուն մարդիկ 'ի կենցաղավարութեան. և

սոյն

տոյն եւ պարտաւորին, մինչ 'ի հարկէ՝ զի
է կամաւորական ինչ, այլ վասն վա-
յելչութեան որովհետեւ է վայելուչ սո-
վորութիւն ինչ գործածութ̃ մտեալ 'ի
մարդիկ, զոր եւ չառնելն համարի տմար-
դութիւն մեծ. սակայն պա՛րտ է խնամով
դիտել եւ զգուշանալ, զի մի՛ յայսպիսի
քաղաքավարական շարժմունս եւ յարգու-
թիւնս՝ զոր առնէ ոք, անցցէ ը̃ չափ.
այլ արասցէ զպատշաճականն եւեթ, զոր
վարեն առաւելագոյնքն եւ խելահասքն
'ի մարդկանէ, քանզի այսպիսի վարմունք
թէ ըստ չափն անցանիցեն՝ համարին մար-
դելուզունի, ծաղրածութի̃ եւ թեթեւա-
մտութիւն՝ քան զորս չիք տգեղ ինչ եւ
անարժան 'ի մարդ ազնուատոհմ. սակայն
եւ այս հաւաստի է, զի որովհետեւ 'ի
մէջ մարդկան ախորժական են այսպիսի
վարմունք եւ ներելի է թէ առ փոքր մի
աւելազանց լինին՝ քան թէ նուազ. քան
զչափն. բայց յայնմանէ եւս պա՛րտ է զգոյշ
կալ, զի մի՛ ըստ անխոհեմ դերձակաց 'ի
'ի կամիլն ձեւել զբաճկոն սիրոյ եւ քա-
ղաքավարութեան առ կարի իմն լայնութ̃
եւ երկայնութեան՝ ելցէ վերարկու տը-
մարդութեան, զի ա̃մի օրէն է ունել զիւր
կոպար եւ սահման պատշաճաւոր. Մարդ՝
պա՛րտ է

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Государственная Библиотека
7/XI-1922
18739
1004

պարտ է մարդոյ ՚ի քաղաքավարին շարժ-մունս զգուշանալ նախ՝ ՚ի լկտի՝ յաճախ և յանարմար ընկրկմանէ մարմնոյ, գլխոյ ձեռաց և ոտից անդամոց. կամ ընդ հակառակ այսմ՝ ՚ի լոյծ ՚ի դանդաղ շարժ-մանէ. այլ պարտի ջանալ՝ զի ամենայն շարժ-մունք իւր լիցին հանդարտ, համեստ և վայելուչ, որ տեսողաց իցէ ախորժելի. երկրորդ՝ ՚ի բանս յարգութեան և սպաս-ուոյ պարտ է զգուշանալ ՚ի կարի սե-թևեթ՝ չափազանց և յաւելորդ խօսից, կամ ՚ի գծծութեամբ նուաստացուցանելոյ զանձն, որ զզուելի է իմաստնոց, մանաւանդ վեհաբարոյ անձանց.

Եօթներորդ՝ առ ՚ի կանոնաւորել մարդոյ զկեանս իւր ըստ վայելուչ կարգի քաղաքավարութեան, և ախորժելի ըն-ծայել զայն յաչս այլոց, պարտ է յաւէտ յայն լինել ուշադիր, զի ՚ի կենցաղավա-րութիւնս մի՛ լիցի զհետ խնդրելոյ զհա-ճոյս անձին, կամ վարելոյ ըստ կամաց և յօժարութեան բնութեան իւրոյ. այլ մանաւանդ միտ դիցէ հաճել զկենակիցս իւր, խորհելով յամենայնի՝ զինչ իրք վայելչա-կանք իցեն՝ ընդ որ ախորժեն առաւելագոյնքն ՚ի մարդկանէ. և զինչ՝ որ զնոսին խրտնե-ցուցանէ, զի այնու դիւրաւ մարթասցէ

՚ի միտ

'ի մէջ առնուլ, թէ յորոց իրաց պարտ է
իցէ խորշել, և զորս առնել արժան իցէ.
այս արթնութիւն և աչալրջութիւն՝
որով ուղղին ամենայն գործք մեր. (յաւէլ
Սինտէրէսիս,) ոչ դոյզն ձիրք է բնութեան և
բանի, զի 'ի կենդանիս՝ միայն մարդն իմա-
նայ, թէ զինչ իցէ կարգն. զինչ իցէ վա-
յելուչ. և զինչ եղանակ գործոց և բա-
նից. . . զայս համեմատութիւն, բնութեան
և բանն 'ի տեսութենէ աչաց 'ի տեսութիւն
հոգւոյն վերառեալ՝ ևս քան զևս ար-
ժանավայել համարի պահել, զգեղեց-
կութիւն, զբարեյարմարութիւն և զկար-
գաւորութիւն 'ի խորհուրդս և 'ի գործս.
և զգուշանայ՝ զի մի ինչ անվայելուչ
գործեսցէ։

Խորատական և բարոյական բանք՝ հանեալք յի-մաստասիրական գրոց և 'ի պատմութեանց հնոց առ ուղղութիւն վարուց և բարուց մարդկան։

### ա. Հրաժարումն 'ի շքեղանաց աշխարհի։

Զսխալէ Արիստոտէլ՝ յասել իւրում, թէ մենացեալն կմ ած ումն է, և կամ անբան ոք. այսինքն կամ բոլորովին է անիմաստ, որ յամէ երկնչի. կամ բոլորովին մեծամեծ, որ զամենայն արհամարհէ. Նա ոչ խռովեն զառանձնութիւն նր սիրելի բարեկամք՝ զի նոյն են ընդ նմա։

### բ. Թէ պարտ է երջանկամիտ ընդունել դիպուածոյ կենցաղոյս։

Սոկրատէս փիլիսոփայ սկիզբն արարեալ իւրոյ գիտնաւոր խօսից ընդ միումն յիւրոց համբակաց, եհաս նմա յանկարծակի գուժկան, թէ Սոփրոնիսկոս որդի քո մեռաւ։ Յայտ է ամենայն մտաւորի թէ բարբառ նորա և գոյն և արիւն վազեցին 'ի սիրտ. և կսկծագին ցաւք

ցաւք թէ ո՛չ զկենաց՝ գէթ զխօսից նո՛ր կտրեցին զթել ։ Բայց և այնո՛ւմ Սոկրատ անխռովս զսկսեա՛լ խօսսն տարաւ ՚ի գլուխ, և ապա ասէ · Ո՛վ Երթիցուք տար Ասկղեպիոսի շնորհակալութեան պատիւ ։ Նոյս է արժան իմանալ, թէ իմաստութիւնն միայն է ազատ, և այլք ամենեքին ծառայք ։

Գ. Մեծութիւն և ազնուութիւն սրտից մարդկան.

Փոքրիկ անդամ է նաւի՝ ղեակն. բայց ամենայն փոքրիկ շարժումն ղեկի շարժէ զմեծ զայն մեքենայ լայնատարր շրջանաւ յաջ և յահեակ ։ Նոյն ամենայն փոքրիկ շարժումն սրտի որ կայ ՚ի մէջն՝ պատճառ է ՚ի շրջանակ մրդկային մարմնոյ՝ շարժմունս մեծամեծս, որում՝ նըման ծովու Ովկիանոսի տուաւ ՚ի բնուէ սեպհկն ինչ և կարգաւորեա՛լ հոսումն, որ կոչի տեղատուութիւն և մակընթացութիւն, զի կալով յերերի, ո՛չ տղայ յօրոցի · յիւրում շարժման ՚ի քուն լիցի · բայց թէ ՚ի ցըրտասարսուռ հողմոց Հիւսիսոյ, և ՚ի տապախառն հողմոց Հարաւոյ յուզի, ո՛չ ևս կարացեալ զուսպ կալ, է՛ զի գայ՝ և է՛ զի գնայ, է՛ զի յամպս վերանայ, և է՛ զի յանդունդս իջանէ ։ Նոյն տե-

սութիւն եւ սրտի մշտնջենաւոր ցնծ
և բնաւոր շարժումն պատշաճօղ խառն-
ուածոյ անհատին, լայնեալ և կծկեալ
բաղմօրինակ չափու, 'ի տուրեւառութե
շնչոյ և 'ի ծաւալել զկենսականն ոգիս
ընդ ամենայն մարմին։
Բայց թէ յուզի նա 'ի հողմոց կրից՝
յայնժամ օտարոտի լայնմամբ կամ կրծկ-
մամբ այլայլեալ զհամեմատութի բնաւոր
շարժմանն՝ այլայլէ զզգայարանս. և այն-
չափ են փոփոխութիւնք սրտի, որչափ
և կրից։ Տեսարան լինէր զուարճալի,
եթէ ընդ ապակի ինչ 'ի կրծոց անտի
հնար լինէր երևել շարժմանց սրտի՝ իբրև
ժամացուցացն։ Եթէ ըմբռնողականն ա-
ռաջի առնէ զառարկայ ինչ սիրելի, սիրտն
զլխովին խանդակաթ՝ յառաջ մատչի,
և ընդարձակի գիրկս արկանել նմա.
և թէ զառարկայ ինչ ատելի, սիրտն
զլխովին զզուանօք կծկի և որպէս թէ
փախչի։ 'Ի կարի իմն ուրախութեան,
կայթէ սիրտն և ոստոստէ, և 'ի վիշտս
ամփոփի և լքեալ երևի։ 'Ի բարկութե՝
սիրտն եռայ, և արիւն 'ի դուրս տայ.
և յերկիւղի սառի և քաքաւէ և դողայ.
և առհասարակ են արտաքին գործք
ներքին շարժմանց սրտի։ Նաև նման

ով

ովկիանոսի ընդ լայնատարր ջո ծաւալէ տարագ ընթանայ և շրջի յամենայն տեղիս. նաև տրտմի և զուարթանայ.

Դ. Աշխարհն և մարմին Թշնամի են մարդկան.

Աշխարհս և մարմինն ոչ յայլ ինչ պարապին՝ եթէ ոչ մարտնչին ը̄ մեզ, զի բոլոր կեանք մեր տրտում անցանէ.

Ե. Առաքինութիւն Աստուածութեան.

Առաքինութիւնն առնէ զօտարն ընտանի. և մոլութիւն զընտանին դարձուցանէ յօտարականութիւն.

Զ. Արձանագրութիւն ողորմածաշնորհ Թագաւորի.

'Ի կիպրոս կղզին 'ի լեառն Ա.րկադեայ կայր դամբարան մի թագաւորի միոյ յոյժ հռչակաւորի, գթածի, և ողորմածի. կայր շուրջանակի զգերեզմանաւն հելլենական լեզուաւ գրեալ այսպէս.

Ես վասն իմ միշտ ընկալայ ըզխորհուրդս զայս. զայն՝ զոր կարէի առնել բարութեամբ, ոչ երբէք արարի չարու.

բութեամբ, զայն առ որ կարէի համա-
նել խաղաղութ՟բ, ո՛չ երբէք ՚ի կիր արկի
պատերազմութ՟բ. զնա՝ զոր կարէի յաղ-
թել աղաչանօք, ո՛չ երբէք զարհուրե-
ցուցի սպառնալեօք. զնա՝ զոր կարօղ էի
խրատել ընդ ազդեցութեամբ, ո՛չ երբէք
պատժեցի գանիւք և ձաղանօք. զնա՝ զոր
կարէի շահիլ ՚ի գաղտնի առանձնա-
կար՝ ո՛չ երբէք պատժեցի հրապարակաւ.
նմ՟՝ զորս պատժեցի հրապարակաւ՝ նախ
ազդ էի արարեալ ՚ի գաղտնի. և վերջա-
պէս ո՛չ երբէք պատժեցի զոք՝ որում
յառաջագոյն ո՛չ էի ներեալ և թողեալ
զկանոնս չորիցս անգամ: Այս ցաւիմ
այժմ վասն նմ՟ զորս պատժեցի. և ունիմ
զմեծ ուրախութիւն վասն նոցա՝ որոց
ներեցի, քանզի ծնայ որպէս մարդ՝ ըն-
մարմին իմ աստ ուտեն որդունքն, և մ՟տ
զի կեցի որպէս առաքինի՝ հանգչի հո-
գի իմ ընդ դիմն:

Է. Թէ դժուարին է կրթել զուսեալ յաւէն:

Տիմոթէոս ուսուցիչ քնարերգութ՟ն
կրկին վարձս խնդրէր յաշակերտաց ան-
տի՝ որք կանխաւ աշակերտեալ էին ան-
դէտ քնարահարի, զի դիւրագոյն է ու-

սու-

սուցանել զչուսեալ բարին , քան մո-
ռացուցանել զուսեալ յոռին։

Է. Ամոն զբաջան խրատատուաց։

Ամուլ են խրատք՝ որք գտանեն զխիրտ ՚ի վատթար սննդենէ խոպանա-ցեալ չար սովորութեամբք. զի կրկին աշ-խատութեան պէտք են՝ խլելոյ զչար ար-մատս և սերմանելոյ զբարեբեր սերմանս։

Թ. Չարաճարոյք յաւիտեան ոչ կարեն ճարել գործել։

Դեռածին մոլութիւն գլխովին ընդ ձեռամբ է ծնողին. բայց իբրև ա-ճէ ըմբոստանայ առ ծնօղն և ծերացել ընդ մարդոյ՝ այնչափ զօրանայ , որչափ մարդ տկարանայ։

Ժ. Բնաւորաչու և չար անձինք տանջեն զանձինս։

Դիւրին է միոյ մոլելոյ ախտաւո-րել զբազում բարեկեցիկս . քան բազում բարեկեցկաց շրջել ՚ի բարի զմի ոք մոլի։

Խա-

ԺԱ. Խոհեմութիւնն բարձր է քան զիմաստութիւն.

Տեսանեմք զիմաստունս պատառատուն ձորձով մուրանալ առ դրունս խոհեմաց.

ԺԲ. Պահպանել պարտ է զպատիւ քան զամենայն ինչ.

Որ տայ զինչս՝ պահէ առ իւր զպատիւ. որ մերկանայ զպատիւ՝ պահէ զանպատուութիւն. որ կորուսանէ զպատուութիւն, պահէ զկեանս. բայց որ տայ զկեանս, տայ զամենայն, բաց յառաքինութենէ՝ զոր ընդ իւր տանի. և բաց 'ի համբաւոյ՝ զոր թողու յերկրի.

ԺԳ. Գովիչք և գրիչք ոչ նուազան ծնանիլ բարի համբաւոյ.

Ճշմարիտ է՝ թէ վաղ մեռանի համբաւ, եթէ ոչ հաստէ զնա 'ի կեանս շունչ գովչաց, և սակաւ թուի՝ թէ շունչ թեւս գրչաց անուանի մատենագրաց.

Կործք

ԺԴ. Գովութիւն առաքինի նախնեաց խրախոյս է յետնոց.

Ո՛չ ինչ բոմբիւն Թօթափէ զքուն քնեալ որդւոց, որպէս նուագ ներբողից քաջաց նախնեաց.

ԺԵ. Առաքինին զինաւորեալ զինու եւ զօրանայ.

Յորժամ Աղեքսանդր զէն առնոյր զանձամբ՝ դողայր գլխովին, այլ յետ զգենլոյ դողացուցանէր զամենեսին.

---

ԺԶ. Ի ձայն եղջեր փողոյ շունք որսականք հաչեն. այլ շունք՝ որ առտնին կաղկանձեն. սոյնպէս 'ի հնչել մարտադրգեռ փողոյ, արին խայտայ, եւ վատասիրտն սասանի. նորա դէմք՝ զուարթ եւ աշխոյժ, սորայս ոգեսպառ եւ կիսակենդան: Միումն Թուի օր հարսանեաց, միւսումն՝ հանդէս յուղարկաւորութեան.

ԺԵ. Որ կորուսանէ զպատկառանս, կորուսանէ և զյարգ անձին.

Պիրոմն փիլիսոփայ ուսուցանէր քաջազանց՝ չերկնչել՛ի յարձակմանէ առիւծուց, և երկնչել յամօթոյ անարգ գործոց. զի որ կորուսանէ զամօթ, այլ ոչ ևս ունի պատիւ.

ԺԶ. Փորձ Բարեկամեան մարդոյ.

Փորձաքարն ցուցանէ զյարգ ոսկւոյ, և ոսկին ցուցանէ զյարգ անձին.

ԺԷ. Ո՞վ է ճշմարիտ Իմաստուն՝ որ շատանայ իւրովքն.

Զափաւոր բեռն աներկիւղ դընացուցանէ զնաւս, իսկ անչափ բեռն ընկղմեցուցանէ. Նոյնպէս և մարդ՝ որ ունի բոլորովին զչափ անձին, թէ յուտելն և թէ յըմպելն և թէ յառնելն զամենայն գործս իւր՝ հաստատուն լինի յամենայն գնացս իւր. իսկ քան զկարն առաւել ձգտելն ընկղմեցուցանէ զկեանս և զժամանակ իւր.

Ան.

## Ի. Անջակ հնազանդութեան ըստ հարկաց.

Հարստութիւն և ոսկի ըստ ստացողին փոխեն զբնութիւնն. 'ի ձեռս շռայլի է նախատ ինչ. 'ի ձեռս ագահի է անպիտան ինչ, բայց 'ի ձեռս առատաձեռնի է գործ բարի և գլխովին կամաւոր. զի 'ի պարգևել իւրում՝ ծածապէս բերկրի. և թէ չէ ձեռնհաս՝ տխրի: Իբրև զի շռայլն միշտ յուսայ, թէ նմա ինչ ոչ պակասեսցի. և ագահն միշտ երկնչի թէ նմա ինչ նմ պկսեսցի. յայսմանէ՝ բուն հասակ առատաձեռնին լինելոյ է միջասահման, ոչ կարի շռայլ և ոչ կարի ժլատ՝ այլ թէ չափաւոր. իսկ մեծագործութիւնն է յատուկ անուն յաւիտենական.

Առաւել առատաձեռն լինի անզաւակն, քան զայն՝ որ ունի զզաւակ. Զի թէպէտ առատաձեռն հայր է հայրենեաց և բարի առնէ քաղաքացւոց՝ ոչ իւրոց որդւոց, բայց և այնպէս իղձն առաքինական ոչ բառնայ զկարգ բնական. Վասն որոյ բառնալ յիւրոց և պարգևել օտարաց՝ ոչ է առատաձեռնութիւն, այլ անիրաւութիւն. և չտալ օտարաց 'ի պարգևել իւրոց՝ ոչ է գործ առատաձեռնութեան;

նուն, այլ՝ պարտք արդարութեան: ՚Ի վախճանի առատաձեռնն ասէ՝ լաւ է ճոխացուցանել քան ճոխանալ. Ժլատն ասէ՝ լաւ է վայելել քան այլում պարգեւել. այլ արժանի գովութեան է կշիռն չափաւորութեան՝ որով բարւոք կենցաղավարին կեանք մարդկան.

Որպէս մեռանիլն բարեկամօք և Թափուր ՚ի դրամոց. ապաՀն մեռանիլն դրամօք և Թափուր ՚ի բարեկամաց: Գանձ վաճառականաց նաւարկէ Թռուցիկ առագաստիւ՛ բախտի: Գանձ մեծամեծ կալուածոց կախեալ կայ ղամպոց. Գանձ մեծամեծ իշխանաց է հանք ոսկւոյ, եթէ գէ ոչ պակասին նոցա հարկք, Թէ ոչ պակասին ժողովուրդք.

Թէ արեւն չէր լուսատու, չէր արեւ. և Թէ իշխանն ոչ օգնէ, չէ իշխան: Թէ արեւն անցուցանէր օր մի՝ անլոյս, այն օր ոչ լինէր տիւ, այլ մԹին գիշեր, և Թէ իշխանն անցուցանէ օր մի, յորում չօգնէ այլոց, այն օր կորուսեալ է վասն նորա, որպէս ասէր Տիտոս որդի Վեսպիանոսի յայնմ աւուր յորում բարի ինչ չէր արարեալ. Սիրելի՛ք, զօրս զայս կորուսի, զի ոչ

թէ գործեցի ինձ՝ որպէս իշխան։

Իւրաքանչիւր ոք սիրէ զիւր մտաց ծնունդ. և տոյժ մեծ համարի և անշքուէ վատնել զիւր ինչս առ ՚ի կատար հատուցանել զայլոց խորհուրդս ըստ տխմար հաւուն՝ որ ՚ի թուխս նստի ՚ի վր̅ ձուոց, որ ոչ իւր իցեն։

Պօղոս Եմիլիոս ասէ, նոյն արուեստ է քաջ կարգել զպատերազմ, և քաջ յարդարել զսեղան, զայն յահարկութիւն թշնամեաց, և զայս ՚ի ձգել զսէր քաղաքացեաց։

ԻԱ. ՅԱՂԱԳՍ ԱՀՈՒԹԵՆԷ ՉԱՐԵԱՆ ԱՌԻ ԵՐԿՆԵԼԻՍ։

Միդաս արքայ Փռիւգացւոց որ շինեաց զԱնկիւրիայ քաղաքն Գաղատացւոց, ասեն թէ՝ էր արծաթասէր յոյժ և ոսկեմոլ։ Արդ ընձայեցաւ սմա, թէ յոր ինչ և մերձեսցի՝ ոսկի լինիցի, և կատարեցան իղձք սորա, և յոր ինչ մերձենայր ձեռամբ կամ բերանով՝ ոսկի լինէր. և այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր, այլ ուտել ոչ կարելով՝ մահուամբ կորուսեալ լինէր. զի տուեալ նմա կերակուր՝ ՚ի ձեռն

քե

բերանոյն ոսկեացեալ լինէր. վասն որոյ ապականեցաւ սովով:

Ամենայն ոք սիրէ զիւր ինչս և առաւել սիրել զայն հարկաւոր է, որ պահպանիչն է կենաց մերոց:

ԻԸ. Թէ որքան է ուղղադատ լինել 'ի չենոյնութեան:

Տեսեալ զապակի 'ի մատին ազնուականի՝ համարի թէ իցէ անդամանդ (ըստ ելմաստ.) և զանդամանդն 'ի մատին գռեհկի՝ կարծէ լինել ապակի: Ըստ այսմ առ ըշխմն՝ մոլորին վեհանձանց պատուի ոչ առաքինուի, և առաքինուի ցածունց քամահի՝ որպէս մոլութիւն: Բայց այն է ճշմարտուի՝ որոշել ընդ մէջ նոցին, տալ արժանոյն զպատիւն, և զվարկ արժանաւորութեան նմ:

ԻԹ. Ամուսնութիւն ընդ համեստաչէնոյ կնոջ:

Կարի իմն դիւրին է առն մտաւորի՝ գիտել 'ի ձեռն բերել զվարդ անփուշ՝ ընտրել կին գեղեցիկ, ազնուական, և հարուստ. բայց և պարկեշտ, իմաստուն

 և

եւ հանդարտ։ Նո՛յն է միայն դժուարին, թէ ո՛ւր գտանիցի։

## ԻԴ. Սրտին հասարակաց հարկէ։

Սո՛ւր է հպատակ, ա՛նդ է և հարկ. և ամենայն հարկ՝ բնաւորապէս ցաւ բերէ հարկատուի. որպէս եթէ հատցի միս կենդանի ՚ի մարդկային մարմնոյ։ Բայց որպէս հիւանդն յանձն առնու վէրս ցաւ, յորժամ սակաւն այն՝ որ հատանի, պահպանէ զմարմինն. սոյնպէս հարկն բռնական լինի կեւոր. յորժամ տեսանեն զայն կարգեալ առ հասարակաց օգուտ, ՚ի խաղաղութեան կամ ՚ի պատերազմի։ Նաև քաղցր եղանակ պահանջողուն՝ առնէ զհարկն քաղցրիկ։ Պերիկլէս յորժամ կամէր նոր ինչ հարկս հանել յաթենացւոց՝ յառաջագոյն ուրախ առնէր զնոսա հասարակաց խրախութեամբք և մեծահանդէս տօնախմբութեամբք, և թատերական հանդիսիւք, և յորժամ ջերանէին յուրախութեան, ապա առաջի առնէր զխնդիրն, ըստ օրինի Ճարտար երակահատի՝ որ մեղկաշօշափ շփելն զբազուկն, մինչ զնշտրակն յերակն և առնու արիւն անցաւ. սոյնպէս ամենայն

որ պարտ է նախկզութեամբ գտանել զե՞ր դժուարին ելաց։

## ԻԸ. Վասն հարախօսութեանց

Մարդիալէս լատին բանաստեղծն ասէ. թէ դիւրին է ինձ առնուլ 'ի բերան կայծ ինչ վառ, քան զրոյց ինչ չարախօս ապականիչ այլոց և զուարճախօսութեանց։

## ԻԹ. Վասն ուղղոյ հաւատարմութեան պանուաջեանն։

Սոկրատէս ասէ. տանուտէրն մտցէ յանկողին յետ ամենեցուն, և յարիցէ յանկողնոյ յառաջ քան զամենեսեան, զի 'ի քուն լինիլ նորա՝ ծառայք դադարեն գործեն։ Մի կալցի առ իւր ծառայս ամուսնացեալս, զի ամենայն կենդանւոյ՝ որոյ է ծնունդ, բնութիւնն ուսուցանէ լինել գող. Մի թողցի դեգերիլ 'ի տան զկարօտեալս թէպէտ և հաւատարիմ թուիցին և բարեպաշտ. 'ի չարաչար ազգէ է գողոց, զոր հարկն ստիպէ գողանալ։ Լաւ ես են վարձուոր ծառայք քան զարծաթագին գերիս, զի նոքա ծառայեն

'ի

՚ի լրումն պիտոյից՝ և ոչ բանութեամբ, վասն որոյ սիրեն զտեարս՝ ոչ զբարերարս. սոքա ծառայեն բանի, վասն որոյ են ներքին թշնամիք, զի որ ատեայ զծառայութիւն, ատեայ զտէր։

ԽԷ. Սէր տանուտէրն է ազատ, ծառային լինի գող. վասն զի տեսեալ սորա՝ թէ ազատն ոչ վարէ ՚ի պէտս՝ զոր ունի յաճախութեամբ, լինի նմա զիւրն ապակասորդ. և գթութիւն համարի հանել ՚ի բանտէ զբանտարկեալ ճոխութիւնն։

ԽԸ. Թէ բարեպաշտն է ձեռնտու հարերոյ։

Սերկրութիւնն այնմ ընկալընու զմիտս այնորիկ՝ որ ՚ի վայելս իցէ, մինչ զի ոչինչ ուշ եդեալ՝ նորա յաջորդական տևողութեան ժամանակի միակցէ զառաջին վայրկեանն ընդ յետնոյն որպէս որ ՚ի քուն իցէ, վասն այնորիկ երկարաւոր ինչ ժամ թուի նմա բոպէ. և զսորին հակառակն՝ որ ՚ի ցաւս է և ՚ի վիշտս. ոչ այլ ինչ բղձանալով որպէս հասանելոյ ՚ի վերջ՝ չափէ զամենայն բոպէս,

և

և ամենայն՝ րոպէ՛ թուէր նմա դար։

### ԻԹ. Վասն ճարտար սնուցանելոյ զզա-ւակունս։

Մարկոս աւրէլիոս Կայսրն Հռովմայ 'ի կիր արկանէր զգոյնս սովորութիւնս. իբր զի 'ի ծնանիլ զաւակաց իւրոց առաքէր 'ի մօտակայ գիւղ մի արտաքոյ Հռովմայ առ 'ի սնուցանել. և ոչ երբէք թոյլ տայր սնուցանել զուստերս և զդստերս իւր 'ի մէջ պալատին Հռովմայ, և ոչ կամեցաւ՝ թէ ջամբեսցեն զկաթն 'ի ստեանց կանանց փափկանից և սիրէր զաշխատասէր դայեակսն և առողջս՝ որք թէպէտ էին գռեհիկ, սոցա միայն յանձնէր 'ի սնուցանել զզաւակս իւր. զկնի տալոյ զնոսա դայեկաց, ոչ կամէր՝ զի դարձցին 'ի տուն. և առաւել աշխատ առնէր զվարձս հատուցանել դայեկաց, քան թէ հարսնացուցանել զդստերս իւր։

### Լ. Վասն բարեկամութեան։

Այն է բարեկամութիւն ընտանի, միշտ հոգ տանել անկեղծ սիրով շաղ-կապ-

կապամամբ ընդ միմեանս բարեկամ է բարեկամի, 'ի պիտոյսն ոչ խնայել միմեանց . որպէս աղաւնւոյն արկեալ 'ի գետն զշիւղ մի ապրեցոյց զփոքրիկ մրջիւնն 'ի հեղձմանէ. և մրջիւնն խածեալ զոտս հաւորսին զերծոյց զբարեացապարտ աղաւնին յորսողէ, զոր լարեալ էր հաւորսին առ որսալոյ զաղաւնին ։

Նաև պարտ է փոխարինել հաւասար երախտիս ընդ երախտեաց, շնորհակալութիւնս ևս ։ Զի թէ բարեկամն քո է առաքինի և գիտուն, զնոյն առնել ունի առ քեզ որպէս և դու. ապա թէ է յիմար և մոլի, չէ ճշմարիտ բարեկամ, թօթափեա 'ի քէն . և կորուստ սուտ բարեկամի է մեծ գիւտ բաղդի քո ։

Օրէնք բարեկամութեան համաբերեան փիլիսոփայք փոխանակ ձեռնագրի առեալ զերդումն, և փոխանակ վկայից զԱստուած ։ Քանզի դաշանց սրտից անմարթ է լինել այլ վկայ , բայց ակնն սրատես ։ 'Ի դառնալ ուրուք և ասել թէ բարեկամն իմ անհաւատարիմ և ապաշնորհ է. այդ գանգատ առաւել յամօթ առնէ զգանգատաւորն՝ քան զայն, զումմէ

զուսմն է գանգատոյ։ Եթէ չճանաչէիր զու զնա, ապա անմիտ էիր. էր նա սուտ բարեկամ՝ չէր բարեկամ, ոչ կորոյս նա զհաւատարմութիւն՝ այլ զկեղծիս. որ ոք ունի բարեկամս երկուս, նոյնքան ունի խէթ զմիմեանց, և դու նոցին երկոցունց բարեկամ. ոչ է կարելի բարեկամին չար կամիլ. հարկ է կամ բաժանիլ ՚ի միոյն և սիրել զմիւսն, կամ բաժանիլ յերկոցունց. և կամ հաշտեցուցանել զնոսա ընդ միմեանս զի մնասցէ կցորդ երկոցունց, ուստի սիրել զբարեկամն իբրև զանձն՝ այն է օրէնք. և ոչ կարես թերատ զմին սիրել և զմիւսն ատել. զի յայտնի է զմին խաբես, և ոչ թէ զնա խաբես, այլ զանձն քո, և անիրաւես. և պարտ է քեզ պաշտպանել զբարեկամդ որպէս զանձն քո։

Եւ այն է բարեկամութիւն եթէ գայցէ ՚ի վերայ վնաս ինչ՝ միմեանց պարտաւորութիւն է խափանել, քանզի երկոցուն ևս հնար է դիպել դժբախտութեան, առաւել պտրոտկան պարտ է լինել և հնարել յամենայն անձնէ, այս է կատարեալ բարեկամութիւն և օրէնք Աստուածային։

Այնչափ արժէ բարեկամն՝ որ չօգնէ, որչափ թշնամին՝ որ չվնասէ։

Աստ

### ԼԵ. Վասն նախանձու.

Մարկոս աւրելիոս կայսրն Հռովմայ ասէ. միշտ ընթերցայ զգրեանս և լուայ ՚ի նախանձողաց իմոց, և տեսի ՚ի քաղաքացիս իմ և ՚ի դրացիս՝ զի առատութիւն և յաջողութիւն իմ պատճառէ զկատագոյն նախանձաւորութիւնս. Ահա թէ որքան ՚ի մէջ վտանգի իցեն եղեալք նոքա՝ որք կամին երևելի յառաւել պատուով զինքեանս նշանակել ՚ի մէջ այլոց. Այնպէս և ծառք որքան բարձրանան առաւել ցուցանեն նոցա հողմունք ըզզօրութիւնս իւրեանց, և շինուածք բարձրաշէնք առաւել բաղխեցեալ լինին ՚ի կայծակէ. և ՚ի լերինս յոյժ բարձրագոյն առաւել զօրանան խստութիւնք ցրտոյ. կամիմ ասել թէ ՚ի նոսա՝ յորս առաւել յաճախէ բախտն յաջողութեամբ, այնքան առաւել հեղու նախանձն զմեծագոյն թոյնս իւր, և զինչ առնիցէ առն ողորմելին այն, քանզի զաշխատանս կրէ առ ՚ի փոլ յաջողիլ և բուռն լինել և այլքն չկամին.

### ԼԶ. Վասն ծառայելոյն Քնուն և ցանկութեան.

Կամիմ ասել, թէ այր ոք թէ և իցէ

իցէ պատուականագոյն քան զքարն ադամանդ զետեղեալ 'ի մէջ ոսկւոյ. և տեսանէ զըղձալին իւր երկաթ ցանկանայ նմա առանց պատճառի, այսպէս մարդն հեշտացեալ փափկանայ, մինչ լինի ընտանացեալ ընդ կանանց։

Նոյն և մարմինս այս թունաւորեալ թէպէտ պատժի ախտիւք հիւանդութեան և ցամաքի բազմօք աշխատանօք և տառապանօք, և մաշի ամօք բազմօք, սակայն միշտ մնայ 'ի նմին շանթն ցանկութեան՝ ևս 'ի մէջ ոսկերացն. զինչ պիտոյանայ մեզ պարծիլ զառաքինութեց և ուրանալ զբնութիւն մեր։ Իրաւի ոչ գոյ երկիւղ ծեր անքան երկչոտ և անդամալոյծ՝ որ տեսանելով զմատակ ձի մի՝ ոչ տացէ զոյգ իմն հառաչանաց և խընխնջացէ, ոչ գոյ ծեր այնքան ծերացեալ, և ոչ մանուկ այնքան առաքինի, որք տեսեալ զաղջկունս ոչ տացեն զոյգ մի հառաչանաց և ոչ փորձիցեն։ Իրս բնական և բնութենական խոստովանիմ, եթէ այր և եթէ կին՝ կամի լինել 'ի մէջ բարեկամութեան և փորձել առաքինի և զգաստ։

Բազում անգամ կերակուրք ա-
խորժք

խորժք եւ փափուկք ապականին 'ի մէջ վատթար ամանից եւ կճճից. եւ լաւ գինիք առնուն զհոտ ինչ 'ի վատթար ամանէ. նոյնպէս զայս չար եւ զանկար մարմին 'ի կողմն իւրեանց քարշելով տան միշտ զվատթարութիւն հոտոյ ինչ եւ նիւթոյ եւ զկենաց մերոց ապականումն.

## ԼԶ. Թէ զոր է փոխանակի յատուկէն զեղծումն.

Ընդ այս ոչ զարմանամ, զի զգուշ ձեռն ոչ է սպարտաւորեալ առնել զայն՝ զոր ասէ լեզուն հեղգագար. զի լեզուն բարբառի վաղվաղուն եւ փութանակի, եւ ձեռքն գործեն ամրապէս. նշան մարդավարութեան այն է, զոր խոստացաւ լեզուաւ, կատարել եւ փութանակի գործով.

## ԼԷ. Սուտ օժանդակութեան ճարտարաց.

Պղատոն ասէ 'ի քաղաքավարութեն իւրում՝ թէ յաջողակաց տացի խորհուրդ, զի մի՛ անկցին. եւ ողորմելեացն տրտմեցելոց տացի ճարակ հնարից, զի մի՛ յուսահատեսցին. իրաւի ոչ հան-

դուր-

գուրժեն օրէնք բարեկամութեան, զի մինչ ես խնդրիցեմ 'ի բարեկամէ իմմէ զօժանդակութիւն մի ինչ, իսկ նա նատիցի երկարութեամբ ժամուց առ 'ի տալ ինձ զխորհուրդ. զի սիրտ մշտացեալ տակաւ մխիթարի բանիւք քաղցրութ̄ և լոկ խօսակցութեամբ, եթէ ոչ երթիցեն ներ ծրարեալ է նմա գործք իմն բարիք:

լե. Թէ պարտ է որպէս յառաջ նայել և 'ի
գործս ընկեր հաստատարարեան:

Յառնուլն փութով և ուրախութ̄, և 'ի տալն յամեցմամբ և տրտմութ̄. զի զընդունումն նուաղեցուցանեմք մոռանալով, և զորս ուրանան զմեզ՝ մեծացուցանեմք գանգատանօք: Սիրտ Ճանաչի 'ի գործոյ. որպէս առողջութիւն 'ի շարժե բազկի.

լզ. Պիտանիք կենցաղավարութեան մարդկան.

Երեք են սատկանելի մարդկային կենաց, եթէ գտանիցին 'ի միասին 'ի կատար՝ (օգտակարն, բերկրականն, և բարոյականն) յորս է հաստատութիւն. առողջութիւն և առաքինութիւն, կեն-

ցա-

ցաղաւլարին բարոյական առաքինութիւն՝ որ ընդ իւրն տանի, և բարի համբաւ՝ զոր Թողու յ՚ետ։

## ԼԷ. Թէ մարդիկ չգիտեն զհետն կենաց իւրեանց·

Ըստ Սենեկայ մատենագրին. ՚ի հայրենիս մեր կեամք տգիտութեամբ և ոչ իմանամք. այլ իբրև ելանեմք անտի՝ բանամք աչս մեր. և յայնժամ միանգամայն տեսանեմք՝ թէ որչափ է տգիտութիւն մեր. յառաքականաց առ հասարակ համարեալ եմք արարածոց, այլ մերս կարկամութիւն և փոխմական ծանրութիւն և ինքնահաճ եղանակ կենաց, որք ոչ ներեն մեզ խորհիլ կշռել զոր այլ ազինք աշխարհի ունին։

## ԼԸ. Սուտ նախանձու·

Ի ժամանակս ինչ՝ մի եղեն երկու յոյնք ամենայնիւ չափազանցեալ գործովք և հռչակեալք, բայց յոյժ համբաւեալն էր նախանձու՝ որ կոչիւր Ս. Բէլլէս. և միւսն յոյժ նշանակեալ էր ՚ի չարութեան խայտառակ իւր գործովք. և ոչ որ բնաւին ունէր նախանձ ընդ նմա՝

որ

որ կոչէր Տրեստէս, իրաւի լաւ է անուն բարի՝ զոր Աքիլլէս է նախանձու. քան թէ Տրեստէս չար անուն՝ առաւել նախանձու:

Արդ դիցուք թէ ամենքն վնասեն զմեզ նախանձու, սակայն յոյժ առաւել վնասեն զմեզ բարեկամք քան թէ թշնամիք. քանզի 'ի թշնամեաց կարեմ զգուշանալ, բայց բարեկամն բարեկամութեամբ իւրով խաբէ զիս, և ես վասն հաւատարմութեան ոչ զգուշանամ 'ի նմանէ, 'ի մէջ մահաբեր թշնամեաց ո՛չ գոյ այնքան չարագոյն թշնամի, որքան բարեկամն այն՝ որ նախանձի ընդ յաջողութիւն իմ. և թէ դու հսկես առ 'ի պահպանել զքեզ յօտար թշնամեաց, առաւել պարտիս տըքնիլ վասն քոյոց ընտանի թշնամեաց:

## ԼԹ. Վասն ծուլութեան.

Ծիծաղիցաւ Դիոս 'ի վերայ երկրագործին՝ որ ուխտս դնէր, զի սայլն իւր ելցէ 'ի տղմոյ՝ յոր խրեալն էր. և ինքն չարկանէր ձեռն 'ի գործ.

### Խ. Սրտին վշտացելոյ.

Օրէն այս է, զի սիրտ վիրաւորեալ առաւել հանդարտանայ պատմելով զչար դիպուածս իւր սեփհական, քան թէ լսելով զմխիթարութիւնս այլոց.

### ԽԱ. Թէ անհնար է մարդոյ լինել միշտ ճոխաւոր.

Որպէս չէ հնար երկնից միշտ պարզութեամբ, և ծովու միշտ կալ հանդարտ անդորրութեամբ, նոյնպէս և մարդոյ մինչ ցվախճան իւր միշտ բախտաւորութեամբ և յաջողութեամբ.

Եթէ տեսանես զոմանս անցուցանել զկեանս իւրեանց երկարապէս երջանկութեամբ թարց ունելոյ երբեմն զհակառակութիւն բախտի՝ մի՛ նախանձիր ընդ նոսա, զի այն ոչ է վասն երջանկութեան նոցա այլ վասն մեծի թշուառութեան նոցա. քանզի Աստուած է այնքան նենդաւոր, մինչ զի անդ սպասէ պատրաստել և լա-րել զդաւաճանութիւն իւր՝ ուր յետոյ գահավիժեալ տայ 'ի գետին մեծագոյն աւա-

ուսաղութեամբ։ Րաւել փութանակն մեռանելին, որք յոյժ առողջ են քան զսա- կաւ հիւանդութեամբ աւուրց, քան թէ երբեմն երբեմն տկարութեամբ և հի- ւանդութեամբ բաղձում աւուրց և ամաց։ Քանզի մարդ որովհետև ոչ կարէ անցու- ցանել զկեանս իւր թարց թշուառուե, բարիոք համարիմ ճաշակել զտառա- պանս սակաւ առ սակաւ. քան թէ կլա- նիցէ համանգամայն ՚ի միասին զկորուստ։ բազում, իմիք ուտեն պատառ առ պա- տառ, զոր թէ կերիցէ ոք ամբողջ հա- մանգամայն ՚ի միասին, խեղդի իսկոյն։ Նմանապէս զանազան յաջողութեց և աշխատանաց և բախտաւորութեց ըմբե- րեմք. այն է լաւն խառն ընդ փոքր փոքր միասնաւ թշուառութե երկայն աւուրք կեն- ցաղավարել, և է գովելի՝ քան թէ զայն՝ որ մշտ իցէ ՚ի յաջողութեան, որոյ վերջն լինի կորուստ և անկանգնելի թշը- ուառութեամբ։

ԽԲ. Մասն Ճանուն։

Մի պարծեսցի մեծն ՚ի մեծութիւն իւր. և մի պարծեսցի հզօրն ՚ի զօրութիւն իւր, այլ որ պարծի Աստուծով պարծեսցի և

և սպասեալ կեցցէ ՚ի դիպմանց և ապա-
հովութեամբ բախտի․ ոչ գիտելով զի սա
է բարձրացեալ պարիսպս մարտնչելոյ, զա-
նազան առնէ չէն մարդաբնակ․ և զչէն
տեղիս, անմարդաբնակս առնէ և աւերակս․
՚ի թշնամեացն առնէ բարեկամս և ըզ-
բարեկամս առնէ թշնամիս․ զխաղաղութիւն
կողոպտէ և զխաղաղեցեալսն յաղթանա-
կաւ պսակէ․ զդաւաճան նենգագործս
առնէ հաւատարիմս՝ և զհաւատարիմս
առնէ երկբայելիս և կասկածելիս․ և
վերջապէս սա լինի է՝ որ վրդովէ զթա-
գաւորութիւնս, պարտէ զզօրս պատե-
րազմի, ցածուցանէ զթագաւորս և բարձ-
րացուցանէ զռ̃նաւորս, տայ կեանս մե-
ռելոց, և մահ՝ կենդանեաց, տայ զհամբաւ
գերահռչակ՝ միոյն, և առնէ վատահամ-
բաւ զմիւսն։

Թագաւորն ] անկեղեմնացուցո՞ւ-
նէր կախեալ զդրանէ պալատի իւրոյ
որ ասէր․ Ո՛.յս է տուն աւանդապահիցն
բախտի․ իրաւի են բանքս այս, և դերա-
դոյն ՚ի մակացութիւն․ քանզի պարտ է
ամենայն մարդոյ ունել զինքն իբրև աւան-
դապահ, և ճանաչել զինքն պահապան
ամենայն ընչից իւրոյ, և թողլոյ է զնմա
նիս

Տիս և մերկ դնալոց է. և ոչ ժառանգող մշտապէս բախտի և ընչից իւրոց, միայն տանի ը՟ իւր լաւապէս աւանդապահուի, ց՟ զբարեգործութիւն. քանզի առնելով զմեզ աւանդապահ և մեք ապստամբեն՟ ՚ի նմանէ առնեմք զմեզ իբր ժառանգ և տէր այսր ստացուածոյ՝ որ ոչ է մեր. Նա՝ որ կենդանի է, ժառանգէ զինչս մեռելոցն. և ոչ թէ մեռեալն ժառանգէ զինչս կենդանեացն. ուրեմն մեռանին ամենեքեան. ինչք և Տն մնայ, և որ ծնանի՝ ժառանգէ. և որ մեռանի՝ թողու զամ՟, բաց յերկուց՝ բարի կամ չար նովաւ եղանէ, ը՟ իւր տանի, նոյնպէս թողու յետ բարի կամ չար համբաւ.

### խր՟. Վասն Երեխայութեան դաստիարակութեան.

Ո՛վ հարք և մարք զաւակաց, եթէ կամիք դուք բառնալ ՚ի ձէնջ զհոգս և զվտանգս ՚ի զաւակաց ձերոց, ՚ի մանկութե կալարուք զնոսա միշտ ՚ի կրթութեան և յամբոփակութեան. զի միշտ ձեռքն զբաղեն, ՚ի գործ ինչ բարի կրթութեան զբաղելով. յայնժամ սիրտն եղիցի դատարկ ՚ի յունայն մտածութեանց. իւրաքանչիւր ընթութի գործեցեն ՚ի մանկու-

թենէ՝ աւերէ, և քակէ զհիմն և զխարիսխ կենաց իւրեանց. զի ուր դիւրակեցութիւն է, անդ մտանէ թշնամին. որ բանայ զդրունս ամենայն մոլութեանց, քանզի ողորմելի զաւակունքն այնք՝ յանհոգութենէ հարցն և փափկասնուցմամբ մարցն՝ թողուն զաւակունս իւրեանց առանց աշխատանաց. և զորդիս աշխատանս առնեն անարգար զբօսանս, 'ի դատարկ անցուցանելոյ զժամանակս, 'ի յանպատեհ մտածմանէ և 'ի յընդարձակութենէ աչաց, այսոքիւք այլադութիւն խելքն, և ապականին կամքն, մտածեն զոլնպատակք նետից. ուր ուղղէ սիրահարութիւն, մինչ լինին նշանատեղք լի հողով՝ հասարակօրէն վասն ամենից մոլութեանց.

Ոչ եթէ մարմինս այս կատաղի հպատակիցէ զենքն բանականութեան, բարուք էր, բայց որովհետև ըղձականութիւն մարմնոյ յայսմիկ դիպուածում աքացէ բանականութեան. և ոչ է պարտ հաւատալ զդստերս ոչ բարեկամի, և ոչ ընտանեաց. տեսանես դու փորձառութեամբ՝ զի որպէս 'ի փայտս ծնանի ցեց, որ գոյանայ 'ի նոյն փայտէ, և 'ի զգեստս ծընանի ուտիճ՝ որ ուտէ զնոյն զզգեստն,

կամիմ տեսանել, թէ այր ոք որ 'ի տան իւ-
րում մնուցանիցէ զոք կարէ լինել՝ թէ
յետոյ բառնայցէ զկեանս և զպատիւ.
Իրաւ է՝ եթէ հարքն իցեն ճշմարիտ հարք,
և մարքն իցեն ճշմարիտ մարք, մինչդեռ
մանկունք իցեն, իսկոյն պարաւանդեա-
ցեն կապեալ զսիրոյ դստերաց իւրեանց
մերկութեամբ և կուրութեամբ. և ոչ
երբէք իցեն արձակեալք և բացեալ ա-
չօք նկատել զբարի և զչար, միթէ մինչ
հասանիցեն պտուղքն այդւոյ, և ապա՞ գտնեն
զայգեպան և զհսկողս, ո՞չ այլ թէ մինչ
է հասեալ ժամանակն դստերն՝ դո-
լով աղջիկ. հարկաւորի ունել զայր ըն-
պահապան, և հայրն՝ որ զայս առնէ, մեր-
ժէ 'ի տանէ իւրմէ զվտանգս, հանէ զինքն
'ի հոգացողութենէ և տայ զմխամտութիւն
և զհանճութիւն դստերն իւրոյ։

Խրտ. Աղջկանցն երբայց ճանաչումն է գովելի։

Յորժամ յաղթեաց Կիւրոս՝ Կրե-
սոսի, ըմբռնեալ զնա հրամայեաց յեր-
կաթեղէն տապակի խորովել զնա։ Յի-
շեաց Կրեսոս զբան Սողոնի աթենացւոյ
իւրմէ բարեկամի, յոգւոց եհան և գոչեաց
'ի ձայն ողորմագին, ո՛վ Սողոն, Սողոն։

Պատ-

Պատմեցին Կիւրոսի թէ Կրեսոս՝ զնոր ոմն ստացուած կոչէ իւր յօգնութիւն. Կիւրոսի գթացեալ ՚ի վ՛ր՝ հրամայեաց ածել առաջի իւր, հարցանել ցնա, զինչ բարբառէիր. ասաց. յոյժ եղեն ինձ բանք Սողոնի, որում հարցեալ իմ երբեմն՝ տեսեր զոք յաւէտ երջանիկ քան զիս, ետ պատասխանի. Ոչ մարթ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ց-վախճանն։ Վերջին օրն է մարդոյ գովելի թէ երջանիկ է՝ եթէ թշուառ. Զի զգործն՝ վախճանն, և զտիւն՝ երեկոյն առնէ գովելի։

Այլ իբրև սկսան զօրքն Կիւրոսի աւար հարկանել զքաղաքն, տեսեալ Կրեսոսի եցոյց զինքն զարմացեալ. ՚ի հարցանել Կիւրոսի զպատճառ զարմացմանն, ասէ Կրեսոս. զարմանամ. զի զօրքն քո յաւարի առնուն զքաղաքդ՝ որ չէ Կրեսոսի՝ այլ Կիւրոսի.

Արգիլ զաւարդ, և դի՛ր պահապանս քաղաքիդ. զի որք տեսանեն զվայելչութի դ՛ր տացեն պարծանս այնմ՝ որ էառ զդա. Իսկ եթէ զօրք քո յափշտակեսցեն զաւար քաղաքիդ՝ ոչ միայն քաղաքդ անշքասցի. այլև նոքին իսկ զօրք փարթամացեալ անխոհ լիցին քեզ.

Սան

## ԽԵ. Սնան յաղթութեան և չափաւորութեան:

Սեստոր թզուր Եգիպտացւոց գէպ եղև ճոխանալ յամենայնի յաջողուածովք և բարձրանալ 'ի փառս և 'ի մեծութիւնս, տիրեաց բազում թագաւորութեանց, և նկուն արար զամենեսին. և գերի վարեալ զբազում թագաւորս՝ այնչափ եհաս բարձրամտութեան, մինչև 'ի նստիլ իւրում 'ի կառս ոսկեղէնս, փոխանակ կառաձիոց ետ լծել զթագաւորս. և այնպէս ընթանայր շքով ընդ ճանապարհ. և եղև յաւուր միում, զի մին 'ի թագաւորաց անտի՝ որ լծեալ ընդ սայլս ձգէր զկառս, դարձուցեալ զդէմս իւր 'ի թիկունս կոյս՝ ուշադիր լինէր յանիւն՝ որ հոլովէր անդադար զկնի նր. զայն տեսեալ Սեստորի արքային որ նստեալն էր 'ի կառս՝ ասէ ցնա, զի՞ գործես այդ դու, և զի՞նչ ոչ հայիս 'ի քեզ, թէ ո՞ իցես: Նա պատասխանի տուեալ ասէ. մտախոհ լինիմ տէր իմ 'ի վր անուոյս. որ միշտ փոփոխի շրջանաւ, և ոչ մնայ երբէք 'ի միում տեղւոջ. հանապազ տաբուբերի վեր 'ի վայր, ստորին կողմն 'ի վեր ելանէ՝ և վերին կողմն ստոր իջանէ:

Զայս

Զայս իբրև լուաւ Մեստոսար՝ դարձաւ յանձն, և խորհեցաւ իմաստութեամբ. եթէ քանի՛ փոփոխական են անցաւոր ճոխութիւնք և յաջողուածք բախտից ըստ օրինակի անուո՛յ, և զմտաւ ածեալ թէ լցէ զի և ինքեան դիպեցին ձախողակի եւք, եթող զնոսա.

խզ. Աղքատութիւն հարց՝ չէ որդւոյ.

Ասէ Յովհաննէս կաթուղիկոսն. աղերս առաջի մատուցանեմ ձեզ պիտաւորութիւնս զայս բանի. Մի՛ պարծանս հարցն առաքինութեանց ձեր բաւական մարկեալ՝ 'ի նոյն ապաստանեալ պղերգութեամբ անձանց 'ի վի՛հս խորափիտս ընկղմեսջիք. զի թէ հօր հմտաբար տեղեկութեամբ ղեկավարեալ իցէ, զի՞նչ օգուտ յայնմանէ որդւոյ բերիցի, եթէ 'ի նաւաբեկուն կորնչին. Այս զի ոչինչ շահ զհօրն հմտութիւն կարծեմ լինել որդւոյ նաւաբեկութեան.

խէ. Աստուծոյ պճանմանակն չհորբանանելոյ.

Սրատ եւ Աղէքսանդրի՝ վարժապետն իւր Արիստոտէլ, հանդարտ ածել զանձն առ ժամանակ մի 'ի պատե-

տերագմակյան շարժմունս, մինչև Հատատեսցի ասէ զօրուն և ոյժ մարմնոյդ։ Եւ պատասխանի Աղեքսանդր. Ի մեր տանուլ պայքար է պճամանակին, որոյ դեղոցուԹեան ոչ կարէ պէտոյ մերոյ։

ԽԷ. Վասն ծեծածեծոց է հարպատ կալ յոր տանեն։

Լուաւ Աղեքսանդր եԹէ Լամպակեցիք ձեռնտու են ՚ի Դարեհ արքայ Պարսից ընդդէմ իւր. նմին իրի ահագին զօրուԹեամբ խաղաց ՚ի վերայ նոցա, և եդեալ ՚ի մօտի ՀարԹայատակ քանդել զԼամսակ. զայս գիտացեալ Անաքսիմենեայ իմաստասիրի՝ որ էր ՚ի քաղաքէ անտի՝ ել ընդ առաջ Աղեքսանդրի գիջուցանել զցասումն նորա, զի էր մտերիմ սիրելի նորին. իբրև ետես զնա Աղեքսանդր ՚ի հեռաստանէ՝ ծանեաւ, եԹէ վասն աղաչելոյ ՚ի դիմաց քաղաքին գայ առ ինքն. զայրացաւ և ասէ՝ երդնում ՚ի գլուխ, զի ոչ լուայց աղաչանաց նորա յայս նուագ, այլ զոր ինչ խնդրեսցէ ընդդէմ գործեցից։ Յայնժամ եկեալ առ նա Անաքսիմենեայ՝ ասէ. Խնդրեմ ՚ի քէն արքայ, զի քանդեալ կործանեսցես

Լամ-

զԼամսակ և 'ի սուր սուսերի մաշեալ՝ սպառնեցեն զամենայն ընտանիս նորա։ Յայս բան պաշարեալ և ափշեալ Աղեք-սանդրի՝ ժպտեցաւ. և առ կատարումն երդման իւրոյ՝ զոր արար Է դէմ գործել բանից Անաքսիմենեայ՝ ներեաց Լամ-պսակեցւոց. և ոչինչ արար Է նոսա չար։

ԽԹ. Ձախորդութիւն հայրենեաց չար է հայրենասիրաց։

Մելիտոն Բուլկիտեցի դանդա-ռեալ Հռովմայեցւոց ծերակուտին, ասէ. Ամենայն անդամք մարմնոյ իմոյ առ-ախտաժետութեան անգործ կան, և չե-քիմ մասն անցաւ՝ բայց 'ի լեզուէ, առ-ողբալ զթշուառութիւն իմոյ Հայ-րենեաց։

Ծ. Առն ուղղութեան դատաստանաց։

Առաքեաց արքայն Սպանիոյ զՖր-անչեսկոս յԱմերիկայ կատարեալ իշ-խանութբ և քննիչ և դատաւոր գործոց Քոլոմբոսի, տուեալ նմա իշխանութիւն, զի թէ գտցէ ճշմարիտ զամբաստանութիւնս, ինքն լիցի փոխարքայ համօրէն կղզեացն Ամե-

Ամերիկոյ։ Ահա սովին իսկ իշխանութ̃ե իրաւարարին անկաւ կործանեցաւ առհասարակ իրաւունքն. զի անհնարին է նոյն իսկ անմեղին անդատապարտ ելանել յատենէ դատաւորին, որ կորստեամբ կարծեցեալ յանցաւորին՝ ունի ինքն մեծանալ.

ԾԱ. Իրաւունք է հարց պատժել զորդիս.

Ռոմուլոս կանոնեց զբացարձակ իշխանութիւն հարց ՚ի վերայ որդւոց, ցոր հասակ և ցոր աստիճան հասանէ զօրութեամբ իշխանութեան, թոյլ տուեալ էր արկանել ՚ի բանտ, գան հարկանել, պնդել ՚ի կոճղս, առաքել յանդաստանս ՚ի մշակութի, վաճառել՝ մինչ և մեռուցանել.

ԾԲ. Չի՞ք վաստակ առանց գործոյ.

Չի՞ք ուրեք՝ ոչ վաստակ առանց օգտի՝ և ոչ գոգցես օգուտ առանց մեծի վաստակոց։ Աշխատութիւն և հեշտութի աննմանագոյնք, ՚ի բնէ բնաւոր իմն ընկերութեամբ լծորդին միմեանց.

Ասէ

ԾԳ. Ասէ Տիտոս Լիվիոս. Թէ իմաստութիւն է, երբեմն խրոխտանալ 'ի գործն. զի խորհուրդք երկչոտք ոչ միշտ են յաջողագոյնք.

ԾԴ. Յոչինչ աշխատութե հրաժարելն ձեռք՝ որք անցանեն յարօրադրութեն 'ի զէնս.

ԾԵ. Փաբիոս խրատէ զԷմիլիոս Հիւպատոսն և ասէ. Ախորժելի է ինձ՝ զի երկիցէ 'ի քէն իմաստուն թշնամին, քան գովեսցեն անմիտ քաղաքացիք.

ԾԶ. Անտիոքոս արքայ մեծ Ասորւոց պաշարեալ զԵգիպտոս. արքայն Եգիպտացւոց Պտղոմէոս Եւերգետէս և Կղէոպատրէ քոյր նորա՝ փութով դեսպանս առաքեցին 'ի Հռովմ առ ծերակոյտն խնդրել օգնութիւն: Ծերակոյտն առաքեաց զՊոպիլլիոս երթալ առ արքայն Անտիոքոս և ասել 'ի կողմանէ ծերակուտին 'ի բաց կալ յամ թշնամութենէ, և փոխան առնել մարտի. և եթէ մի յերկուցս չառնուցու յանձն անսալ.

անսալ, ժողովուրդն Հռովմայեցւոց ոչ ևս համարեցաւ զնա իւր դաշնաւոր. Գիտելով թէ վտանգն էր ստիպօղ 'ի վնաս ոչ լսողացն.

Մինչ Անտիոքոս պաշարէր զԵ-գիպտոս, չոքաւ Պոպիլլիոս առ արքայն, որում քաջ ծանօթ էր նա, ձգեաց ըզ-ձեռն իւր 'ի նա իբրև 'ի վաղնջուց բա-րեկամ: Հռովմայեցւոյն' որ յայնմ վայրէ ոչ ևս համարէր զանձն առանձնաւոր դը, այլ հասարակապետութեան պաշտօնեայ, կամ եղև գիտել յառաջ քան զընդու-նելութիւն ողջունի, մերժեաց ընդ բա-րեկամի՞ խօսիցի, թէ ՟ը թշնամւոյ Հռով-մայ. առաջի արար նմա զվճիռ ծերա-կուտին, ասէ. կարդա՛ զայդ: Անտիոքոս իբրև ընթերցաւ, ասէ. խորհեցայց ընդ խորհրդականս իմ, և տայց քեզ պա-տասխանի.

Պոպիլլիոսի բարկացեալ ընդ յա-պաղումն արքային, գծեաց 'ի վր̄ աւազոյ ծիր զթագաւորաւն' ցպով, զոր 'ի ձեռին ունէր, և խրոխտանօք և ահեղ բարբա-ռով' որ էր նմա բնաւոր, ասէ. Մինչ չե-լեալ ես դու 'ի շրջանակէս այդի' տուր ըզ-պատասխանի զոր հաղորդեցից եմ տանել 'ի

քս չոզմանէ առ Ծերոնիոյն։

Նեղշեալ արքայի ընդ այնպիսի խորոխտ գնացս նր, և վայրենի մի մտախորհ լեալ պատասխանի ետ խոնարհութեամբ։ Աղբարց որչափ էինչ խնդրէ Ծերոնիոյն։ Յայնժամ Պողիկլիտս ձգեաց զձեռն, ոմ առ թագաւոր ոք բարեկամ և դաշնաւոր հասարակապետութեան։

Որ անվեհերութեան սրտի, ով համարձակութեն լեզուի։ Հռովմայեցիս մի միայն բանիւ, ահաբեկ առնէ ըզթագաւորն Ասորւոց, և ապրեցուցանէ զԵգիպտացւոցն։ Որ ազդէրն միում այդչափ համարձակութ, և միւսումն այդչափ լռութիւն, էր նորոգալուր հռչակ մեծի յաղթութեան Հռովմայեցւոց 'ի վերայ Պերսէոսի արքայի Մակեդոնացւոց։

ԺԷ. Օրոյց Անձնիշխանութեան ընդ Ռեգուղոսի

Նմանայորդոր փափաք սրտի իմոյ էր, թէ չխորհէին երբէք Հռովմայեցիք և Կարքեդոնացիք ընդարձակել զաշխարհակալութիւնս իւրեանց, նոքա յԻտալիոյ և այսր, և սոքա յԱփրիկոյ և անդր։

անդր․ այլ միայն երկաքանչիւրն յիւրեանց գեղեցիկ ինքնակալութիւնս, որոց՝ երևի թէ բնութիւնն իսկ ետ կոչար և կէտ։ Բայց երկոքեին իսկ բազմօք վերջացաք՝ այսպիսի ունել գնացս։ Նախ՝ սպառազինեցաք 'ի սակս Սեկիլեոյ․ յետ այսորիկ կռուեցաք վասն տէրութեան Սպանիոյ․ և հուսկ ուրեմն կուրացեալք 'ի բարեբաստութենէ, բուռն հարաք փոփոխ եղծանել զմիմեանս։ Դուք ցայն վայր հասիք, մինչև պաշտպանել յերեսաց իմոց զպարիսպ ձերոց հայրենեաց․ և մեք ևս արդ կամք 'ի նոյն վիշտ վտանգի։ Ժամ է արդ յետ ցածուցանելոյ զցասումն դից՝ խորհել մեզէն՝ վտարել 'ի սրտից մերոց զայն կամակոր նախանձ, որ զինեացն զմեզ ցայս վայր ընդդէմ միմեանց։ Իմ ուսեալ 'ի փորձոյ, ցո՛ր վայր հասանէ յեղափոխումն բախտի, որպէս 'ի վայրկենի ժամանակի ծնուցանէ ահեղ փոփոխումն, և որպէս ախորժէ խաղ առնել զմարդիկ, ամենայնիւ յօժարամիտ եմ 'ի հաշտութիւն։ Բայց խիթամ ոչ սակաւ՝ Փիլիպոն, գուցէ 'ի քում սրտի ոչ կայցէ այս յօժարութիւն։ Դու ես յառոյգ հասակի․ ամենայն ինչ յաջողեաց ըստ քում ըղձի, 'ի Սպանիա, և Իտալիկէ․ ոչինչ ցայժմ

ըն-

ընկրկեաց զընթացս ՛քոց յաջողուա-
ծոց։ Ապա յիրաւի՞ է ինձ երկուանալ,
դուցէ յիմոց ազդու պատճառաց 'ի
յորդոր հաշտութեան, ոչ համոզեսցիս։
Բայց և այնպէս, ած զմտաւ՝ աղաչեմ,
քանի՞ թերայոյս արժա՛ն է լինել 'ի վե՛ր բախ-
տին։ Եւ առ այս ոչինչ պիտի քեզ 'ի խնդ-
դիր լինել բացի՛ն օրինակի. շատ է քեզ յիմ
հայիլ. Ես այն Աննիբաղ եմ, որ տիրեն.
գոգցես բովանդակ Իտալիոյ, պատերազմաւ
կաննեայ, մերձեցայ երբեմն 'ի Հռովմ,
և բնակեալ քառասուն ասպարիզաւ 'ի
բացէ, ինքնիշխան տր կարծէի զիս Հռով-
մայեցւոց և հայրենեաց նց. Եւ այսօր՝
դարձեալ յԱփրիկէ, հարկիմ գալ խօսել
ը ումեմն Հռովմայեցւոյ զպայմանաց՝
որովք հաճիցի շնորհել ինձ և Կարքե-
դոնի իմում հայրենեաց՝ փրկութիւն։
Ուսի՛ր յայսմ օրինակէ չհպարտանալ.
և յիշել թէ մարդ ես և դու, ներքոյ
անկեալ յեղափոխութեան բախտի։ Յո-
րոշմունս իրողութեց կամք են իմաստութե,
զի 'ի բարեց ընտրեսցի մեծն, և 'ի չարեց
առցի փոքրն։ Արդ ո՞ր զգօնամիտ կա-
միցի անպղտոր անձամբ դիմադրաւել
վտանգի մեծի, որպիսի է այն՝ որ կայ քո
առաջի։ Թէ յաղթեսցես, փոքր լիցի

առա-

առաւելութիւն փառաց քոց, և հայրենեաց բայց թէ յաղթեսցես, կորուսցես 'ի վայրկեան ժամանակի զամենայն պատիւ և զփառս՝ զոր ցայս վայր ստացար: Իսկ Ա՛նչ յանդիմն այս ամենայն իմ կրոյք: 'Ի յորդորել զքեզ, զի հաւանեսցես հաստատութեան այսց պրակաց:

ԾԷ. Պատասխանի Շէխեանն Աղեքսանդրայ:

Եթէ յառաջ քան զանցանել Հռովմայեցւոց յԱփրիկէ, եղանէիր յԻտալիոյ և առաջի առնէիր զպայմանքս՝ զոր առաջադրես մեզ այսօր, ոչ կարծեմ թէ հրաժարէաք լսել քեզ: Բայց արդ՝ որ ընդդէմ կամաց քոց հարկեցար թողուլ զԻտալիա, և մեք յԱփրիկէ ուրեցաք դաշտավայրաց, շրջեցան իրք: Նուրովհետև բռնադատեցի զքեզ՝ ակամայ թողուլ զԻտալիա և դառնալ յԱփրիկէ (Ներեսցես ասել,) ոչինչ իրաւունք կամ պատշաճողութիւնք ստիպեն զիս զիջանել քոց ընձանաց: Նման այսորիկ, եթէ 'ի մերայ հայցուածոց ձերոց քաղաքակցաց, դաշն որոց գրեալ կան, տացեն 'ի դուրս Կարքեդոնացիք զամ զմեր կալանա-

Նաւորս, զսարտուցեալս և զտորուկս. և հրաժարեցին ամենայն իրաց 'ի ձեռներեցութենէ 'ի վերայ Սպանիոյ և 'ի վերայ ամ՛ կղզեաց, որ է մէջ Ամերիկոյ և Իտալիոյ. Թողցեն 'ի ձեռս Հռովմայեցւոց զիւրեանց պատերազմական նաւս. զի տացեն մեզ հինգ հարիւր հազար դրիւ ցորենոյ, և երեք հարիւր հազար գարւոյ, հնդետասան միլիոն լիրայի. և զի առ ապահովել զայս ամ՛ տացեն մեզ պատանդս. այս պայմանք են՝ որ 'ի մէջ մեր եղան յայնժամ դաշին, մեք առաքեցաք զայնս 'ի Հռովմ, զի հաստատեսցի 'ի ծերակուտէ, զոր խոնարհ աղաչանօք ժտէին, բայց և այնչ՛ 'ի տկարյոյս քոյոյ եկւորութեդ ապասէին, սկսան անդրէն առ մեզ թշնամանալ: Յայսուհետև չէք հնար նորոյ պատգամաւորութեան 'ի Հռովմ. Արդ եթէ խնդրես կնքել ինձ զբանս, զայս ասեմ կարճ 'ի կարճոյ, լաւ է ձեզ անձնատուր լինել 'ի կամս դու և հայրենիք քոյ, ապա թէ ոչ՝ պատերազմ որոշեսցէ զձեր օգուտ.

Յաւարտ խօսից դարձան երկոքին զօրագլուխք, իւրաքանչիւր 'ի խումբ իւր.

Զօրոյ

## ԾԹ. Զրոյց Սկիպիոնի Հանդիպելոյ ընդ Աննիբաղ Կարթագենացւոյն յետ յաղթութեան.

Հարցեալ Սկիպիոնի ցԱննիբաղ՝ զեամբք թուի քեզ, զի արժան իցէ համարել մեծ 'ի զօրագլուխս Կարթագենացին ասէ. զմեծն Աղեքսանդր. զի սակաւաւոր Մակեդոնացւովք ցրուեաց զանհամար զօրս. և տարաւ զիւր յաղթական գունդս մինչև 'ի ծագս աշխարհի հեշտեաւ՝ քան զճանապարհորդուն լոկոյ զբօսանորուն: Սկիպիոն ասէ. զո՞ դասես յետ Աղեքսանդրի. Աննիբաղ ասէ. զՊիւռոս. զի նախ առաջին ուսոյց մեզ զարուեստ քաջ բանակելոյ, գեղեցիկ տեղակալելոյ, և զդաստ դասս գնդաց յիւրաքանչիւր տեղիս զետեղելոյ, մինչև փոփոխակի միմեանց 'ի Թիկունս հասանելոյ. և զի ոչ ումեք 'ի մարդկանէ երբէք յաջողեաց՝ ոչ սմա, շահել զսիրտս. և այս ձիրք էին նորա այնպէս կատարեալ, մինչև՝ Թէպէտ և օտարոտի ոք էր, ազգք Իտալիոյ վերադասէին զինքնակալութիւն նորա քան զՀռովմայեցւոցն, որք 'ի վաղ ժամանակաց հետէ նախապատիւ էին յերկրին. Կրկնեաց անդրէն Սկիպիոն. Կամէի գիտել, ո՞ւմ տայցես

զերրորդ տեղին ։ Աննիբաղ ասէ․ զայդ ինձ պահեմ անտարակոյս ։ Ասէ Շիպիոն ժպտելով՝ իսկ զի՞նչ ասէիր, եթէ ինձ յաղթէիր ։ Աննիբաղ ասէ․ յայնժամ համարձակ վերադասէի զքեզ քան զԱղէքսանդր, քան զՊիւռոս և քան զամենայն մեզ ծանուցեալ մեծամեծ զօրագլուխս աշխարհի ։

Է․ Արարքն գործոյ բարեաց, ոչ երբէք և ոչ ուրեք կարեն յաշխատանալ ։

Կոռնելիոս Շիպիոն ասէ․ Չեղէ երբէք պարապորդ ՚ի պարապորդութեան, և ոչ միայնակ ՚ի միայնութեան ։ Օրոյց գեղեցիկ ցուցանէ՝ թէ յանգործութեան իսկ էր նա պարապեալ ՚ի գործ․ և ՚ի միայնութեան անդ գիտէր կենցաղել ընդ անձին ։ Զիր սակաւադիւտ յանձինս ընդելակրթեալս ՚ի զբաղական ծուփս, որք իբրև ՚ի հանդիստ դադարին և յառանձնութիւն՝ ընկղմին ՚ի տաղտկութիւն և յանախորժութիւն, առ ամենայն և ՚ի յօգնաթախիծ տխրութիւն, մինչև յամենայնի անձամբ անձանց ծանրացեալք՝ ընկճին ընդ դժուարակիր բեռամբ անգործութեան ։

կա՟. Պորճ արտարախորհուրդ զօրավարայ
Կոմիտայ յամենայն ըղուայ:

Յետ յաղթելոյ Հռովմայեցւոց զՓիլիպպոս արքայ Մակեդոնացւոց եւ ազատս կացուցանելոյ զամենայն Յունաստան. յորժամ ամենայն Յունաստան նկեալ էր յիսթմեան խաղս, Հռովմայեցիք յիւրաքանչիւր գահ մատուցեալ՝ յասպարէզ կոչեցին զՄուննետիկն՝ որ քարոզ կարդայ ՚ի ձայն բարձր եւ ասէ, Ծերակոյտն եւ Ժողովուրդն Հռովմէական եւ Կուինտիոս Փլամինինոս զօրավար զօրաց նոցա յետ յաղթելոյ Փիլիպպոսի եւ Մակեդոնացւոց, ազատս առնեն յամ սրօհակապանաց եւ յամ հարկաց զՅունաստան. . . . . եւ Թողացուցանեն նոցա դնել ըստ իւրեանց օրինաց եւ սովորութեանց: Ո՞չ գեղեցիկ օրինակիս կուսակալաց եւ գաւառպետաց. ո՜վ բարեբախտուժողովրդոյ՝ որք այսպիսեաց վիճակին: Իբրեւ յանկ ելին խաղք, առ հասարակ խուռն դիմեցին առ զօրավարն Հռովմայեցւոց (առ Կուինտիոս) համբուրել զձեռս նորա եւ արկանել առ ոտս նորա պսակս եւ ծաղկեայ հիւսս: Իսկ արգ Հարցանեմ. զի՞նչ իցեն յաղթակին հան-

դէսք

դէպ աշխարհի, առ ձայնիւ քննութե ան համար բաղմութեան, և առ օրհնութք բղխեցելովք 'ի սրտէ, որք էին բնաւորկն արգասիք անկեղծ շնորհապարտութեան: Եղջեցին 'ի մի վայր' ամ յաղթանակք, և յաղթութիւնք և աշխարհակալութիւնք մեծին Աղեքսանդրի. իցե՞ն ինչ առ այս- ուիկ գործով բարութեան և մարդասի- րութեան, և արդարութեան. Աւաղ. թէ ոչ յորդորեցին իշխանք' որպէս արժան է, յայսմ անապակ խնդութենէ և 'ի մեծէ պարծանաց' երախտիս առնել այլոց: Աւելին զարմացմամբ և իբր ապշութք:
„Ոչ կայ յաշխարհի ազգ' որ իւրովք
„ծախիւք, և վտանգի յանձնառութեամբ
„մատչի 'ի մարտ, 'ի շնորհել այլոց հան-
„գիստ և ազատութի, առ մի միայն բարեա-
„մունետկի։ Խորհիլ իսկ զայս' գործ է
„վեհանձին, բայց 'ի կատարումն ածել
„պտուղ է չնաշխարհիկ երջանկութե,
„և կատարեալ առաքինութեան":

ԿԲ. Աղէտ հրձգութեան հեռւոյ Ֆերնեյ գաւառ է
ահեղ ողբերգութ:

Ասէ Մեսիէլլա. Եթէ մարդկա- յին ընկերութեան հնար էր կալ առանց

իգաց

եգաց, մեք ամենեքեան զերծ լինէաք յամ՟ տաղտկութեանց և Հոգոց զորս կրեմք վասն նոցա. բայց քանզի կամք եղեն բը-նութեան՝ ոչ ընդ նոսա ապրիլ կարէ լինի յանդորրու, և ո՛չ ամենևին առանց նոցա կեալ: Նաև ևս է խնամ ունիլ սիրելոյ զազգ մարդկան, քան խորհիլ միայն անվիշտ վարել զկեանս, որ է այս-չափ սակաւատև:

ԿԶ. Կաշառ կուրացուցանէ զաչս դա-տաւորաց:

Յուգուրթ արքայ Նումիդացւոց վասն յանցանաց դատաստանի բե-րեալ ’ի Հռովմ, բայց կաշառատուութեամբ Ծերակուտին և Հիւպատոսին փախեաւ ’ի Հռովմայ. Յերթալ իւրում՝ Հայե-ցեալ ստէպ ’ի քաղաքակողմն և ասաց. Հռովմ ո՛չ իմիք ողանէ այլ ’ի վաճառել, եթայց գնողի. և ընդ փոյթ մի ոք մնայր, վա՛ղ եւս կործանեսցի:

ԿԷ. Զախորդութիւնք և յաջողութիւնք ո՛չ փոխեն զառաքինիս:

Ատիլլոս Հիւպատոս ’ի ղուր աքսո-

աքսորել 'ի Հռոդոս. կայր անդ 'ի գնդին խաղուց ինչ. յորժամ մատուցին նմա զհրովարտակսն աւետաւորս իւրոյ անդրէն դարձի. Մնաց կատարածի տեսարանին և ապա ընթերցաւ, ոչինչ երևեցուցեալ յերեսս փոփոխութիւն. Եղև միշտ միօրինակ 'ի յաջող և 'ի ձախող բաղդի. միշտ տէր անձին, և իշխեցող ամենայն կրից. Որպէս աքսոր իւր ոչ ընկղմեաց զնա 'ի տխրութի, նոյնպէս և դարձ՝ չերևեցոյց 'ի նմա անչափ ուրախութիւն.

## ԿԵ. Ազատութեան ծառայոյ փոյթն յերջանկութեն 'ի վատաբաղդութեան նորա.

'Ի հայցել Կիւրենացւոց 'ի Պղատոնէ տալ իւրեանց խրատ յելս բարիս. զայս տուեալ էր նոցա 'ի պատասխանի. Ոչ հնար է տալ ձեզ օրէնս՝ ցորչափ վայելէք 'ի բարութիւնս. և արդարև չիք ինչ դժուարին 'ի կառավարել և 'ի նուաճել՝ որպէս զայր, որ 'ի բարեբախտութիւնս իցէ, և զօրին հակառակն, ոչ ոք այնպէս դիւրաթեք է և հլու, իբրև զվշտատեսն.

Ատո

## ԿԴ. Սան Ճարէհամայ.

Սէնէրան ասէ. Ոսկեան դարինք գաղտնիք և անխորշելիք քան զայնս՝ որք զօղեն ընդ պատրուակաւ բարեկամութեան և նուիրական կցորդութեանց։ Սան զի հնար է քեզ դիւրաւ պատսպարել զանձն յառաջագոյն զգուշաւորութբ՟ ՚ի հարուածոց այնոցիկ՝ որք են քո յայտնի ոսոխ։ Բայց ընտանի և ներքին հաւատադրժութեան՝ ոչ միայն չերևէ, այլ և ճնշէ՝ մինչև յառաջատես լեալ է քո և խորհեալ անձնապահ լինել։ Սմին իրի հա՛րկ է զգուշանալ, յայն՝ որ թշնամի ցուցաւ խորոց ՚է հասարակաց թշնամի։

Եթէ ստանաս զբարեկամ, ՚ի փորձութեան ստացի՛ր զնա. և մի դիւրաւ հաւատասցես նմա.

## ԿԵ. Ախօրէնաց յարգելի էն Պրաժէայ ու Պրաժանութեան Իարէանց.

Պոմպէոս մինչ ՚ի գարնանամուտ պարապ գտեալ պատաղեցաւ յայց կղզեաց ինչ երևելեաց . . . ՚ի Հռոդոս ունկն-

ունկնդիր եղև ամենայն փիլիսոփայից, և պարգևեաց միոյ միոյ 'ի նոցանէ մէն մի տաղանդ. Առանձինն իմն պատուասիրեաց զՊոսիդոնիոս. մինչև յերթալն անձամբ այց առնել նմա ոչ թողացոյց, թէ իւր դահլիճք բաղխեսցեն իւրեանց բրզք՝ որպէս էր սովորութիւն, զդուռն փիլիսոփային. Որով յաղթականն արևլից և արևմտից ընթադրեաց իրօք ինչ զիւր մեծութիւն՝ փառաց Գրականութե.

Պոսիդոնիոս ունէր ոտնացաւ, և Պոմպէոս յետ ողջունելոյ զնա ըղձում յարգանօք, զդացոյց նմա, թէ ցաւ է ինձ յոյժ. զի ոչ կարեմ մխիթարել 'ի քոց բանից. Փիլիսոփայն ետ պատասխանի. «Այո՛ կարող ես մխիթարել. զի անմարմին է ցաւս, Ոչ ցաւն եղիցի ինձ պատճառ թողուլ զայսպիսի նշանաւոր այր ձեռնդ. Եւ ընկողմնեալ 'ի մահճի անդ իւրում, սկսաւ երկարել ճառ ինչ բարոյական, յորում առաջի առնէր ցուցանել, թէ ոչ զայլ ինչ արժան է կոչել բարի, բայց յառաքինութե. Խիթք ցաւոց այնպէս սաստկանային 'ի փիլիսոփայս, մինչ և բազում անգամ ասել. «Ցաւ դու՝ չզօրես ինչ. Թէպէտ և նեղես, այլ ես չասացից երբէք՝ թէ չար ես»:

Արժա.

Արժանագոյն իմն էր սրտապնդութիւն փիլիսոփայիս՝ վշտակիր գոլով՝ զննել զնիւթս իմաստասիրականս, որոց պիտի հանդարտութիւն ինչ մտաց, և չկոչել զցաւն չար ինչ,'ի ժամանակի՝ յորժամ տայ ողորմ ճչել.

ԿԸ. Անաքսագորայէ. Ո՞ինչ պիտո՞յ են մեզ ուսմունք և գրականութիւն, յորժամ չլինիմք բարերարք և մարդասէրք և հայրենասէրք: Այլ թէ՝ արթուն լեր և յիշեա՛ զապաւինիլ'ի մարդիկ. զի յայս հաստատեալ է զօրութիւն խոհեմութեն.

ԿԹ. Պատկեր դիմաց բարկացելոյ.

Պղատոն խորհուրդ տայր առն բարկացելոյ հայիլ'ի հայելի. զի մարդն'ի սրտի իւրում լինի անկերպարան. երեսքն այլագունին. աչքն լինանին արեամբ. շրթունքն սևանան և երակունքն շարեալ կապուտին.

Հ. Օրինակ առն բարեգործի.

'Ի կորովամտութեան չնաշխարհիկ համարիմ քան զամենայն մարդ

ւՅա–

զՅուլիոս կեսար իշխանապետ, որ իրա-
ւամբք համարի 'ի Պլինիոսէ այր՝ որ
կալաւ միանգամայն զզօրութիւն և զընդ-
արձակութիւն ոգւոյ վերագոյն քան զամենայն
ոք: Նա այսոքիւք 'ի վերայ յաւելոյր
ընտելութիւն և քաղցրութիւն ինչ
բարուց՝ որ առնէր զնա կարի իմն սի-
րելի: Որպէս 'ի չուել իւրում երբեմն՝
մրրիկ և յոյզք օդոց բռնադատեցին զնա
խոյս տալ 'ի հիւղ ինչ յարդածածուկ,
յոր ոչ կայր՝ բայց մի միայն խուց, որ
հազիւ բաւէր միում միայնոյ: Յայնժամ
ասէ Կեսար ցբարեկամս որք ընդ նմայն
էին. առաւելութիւնք պատուոյ վայել
են գահերիցանց, բայց կարևոր դիւ-
րութիւնք պահեալ են վասն տկարա-
գունից: Կ̃ակ ստիպեաց զՈպպիոս որ
էր հիւանդագին ունիլ զսենեակն. և
ինքն ընդ այլս անցոյց զգիշերն 'ի դա-
ւիթ նորին տան: Ո՞չ լինէր համանման
Կեսարու, եթէ ընդ այս ամենայն գերապանծ
կիրս ծորդէր և զակնածութիւն առ իրաւունս
արդարութեան և առ սէր առաքինութեան:

Հմ. Զնարաճանութիւն Աղէքսանդրի:

Յորժամ միացան Կեսար և Պոմ-
պէոս՝

պէոս՝ և Արատոս 'ի ծածուկ, վասն փոխարկելոյ հասարակապետութեան յեռապետութիւն: Կիկերոն բարեկամ էր Պոմպէոսի, և թշնամի Կեսարու և Կրասոսի, բայց զի միայն Կիկերոնիւ ոչ լինէր հնար փոխարկութեան կամ դիմադարձութեան երեցունց, վասն որոյ Պոմպէոս զդացուցանէ Կիկերոնի չմտնել յայնպիսի երկիւղալի իրս, այլ ծեքել միայն յիւր կողմն, որոյ վասն և միացան: Ապա և Կիկերոն գրէ առ Լենտուլոս սպինթեր թէ զկարգ շրջեցան ակրգայք. 'ի մի բերէ՝
„ թէ զխաւոր հեղինակութիւն պե-
„ տութեան չէ բռնաբարել յանօրէնաց,
„ յորում պահու պիտէր դիմամարտել
„ ցյետին ձ՛իգն. այլ 'ի ձեռս է առա-
„ ջամեծար անձանց Պոմպէոսի և Կե-
„ սարու: Նու յայսմ ամէ 'ի մի բերէ,
թէ պերտ և պատշաճ եղև ինձ յերիւրիլ ըստ ժամանակին:
„ Վասն զի (ասէ), գիտուն քաղաքավարք
„ չենտուն երբէք կանոն, յամի անայլ-
„ այլակ զհետ երթալոյ մի և նոյն խոր-
„ հրդոց: 'Ի նաւարկութեան արուեստն
„ օրինադրէ տեղի տալ մրրկի, թէ-
„ պէտ և այնուիկ ոչ լիցի հասանել
„ 'ի նաւահանգիստ: Բայց թէ հնար
„ իցէ

,,ւեցէ փոփոխութեանցս այսուիկ ժա֊
,,մանել յայն, անմտութիւն է վտան֊
,,գիւ ակն ունել զառաջադիր ուղին, և
,,ոչ զհետ վարիլ ուղւոյ՝ որ հասուցանէ
,,զմեզ 'ի նպատակ յոր ըղձանամք.
,,Սոյնպիսի է և մատակարարութիւն
,,հրապարակական իրողութեանց՝ և առ֊
,,հասանելոյ վախճանին՝ զոր առաջա֊
,,դրեմք, որ է հանդարտութիւն վա֊
,,յելչական և շքեղ, ոչ է պարտ միշտ
,,ունել զնոյն լեզու, թէպէտ և պարտ
,,է մեզ միշտ հայել 'ի նոյն նպատակ''։
Բայց իբրև երաց զիւր ոխրա Ստոի֊
կոսի, այնուհետև անփոյթ լեալ պա֊
ճուճելոյ զիւր դնայս, այլ առաջին ա֊
քարեալ զնկուն վիճակ՝ զոր յանձին
զգայր, ողքայր զայն այնպէս թախծա֊
գին, մինչև շարժել յախտակցութիւն.

,,Բանի՞ երջանիկ ես դու (ասէ
,,առայս իւր հաւատարիմ բարեկամ)'ի
,,համեստ և 'ի միջասահման աստիճանի՝
,,յոր կեաս։ Ունիս դու ծառայութիւն
,,ինչ անձնական, և 'ի հասարակաց ծա֊
,,ռայութենէ չքառնաս՝ բայց զքո բա֊
,,ժին միայն իբրև զայլսն։ Բայց ես թէ
,,ասեմ զիմ կործիս 'ի հանրէկց իրողութեան՝

,,ում

,,որպէս արժանն է, անմի՛տ եմ, որ կամիմ
,,զիմ կործանումն. Թէ խօսիմ ըստ սի-
,,տերոյ իմոյ օգտի, ստորո՛ւկ եմ՝ որ վեհե-
,,րիմ. Թէ լռեմ, խոստովանիմ զիմ վիճակ
,,ճնշման և ստրկութեան: Իսկ որպիսի
,,եցէ իմ ցաւ: Ի՛նելոց է այնպիսի՝ ոչ
,,երօք յանձին զգամ: Իւ զգայուն ցաւոց
,,ես քան զես արծարծանի յիս, զի չկա-
,,րեմ ՚ի ցոյց ընծայել, երկուցեալ երեւել
,,ապաշնորհ առ Փոմպէոս՝ որում ճմիւ
,,եմ պարտի՛ն: Իւ զի՞ գործեցից.... ընտ-
,,րել յիմում վիճակի զկեանս ոչ մարթելոյ
,,և գովել զայն՝ ընդ որ հարկաւ լծոր-
,,դեալ կամ, ո՛չ կարեմ: Իւ ես ներեմ
,,բանաստեղծին Փիլոքսենոսի՝ որ նախա-
,,մեծար ընտրեաց դառնալ ՚ի բանտ,
,,քան գովել զոտանաւորս բռնաւորին,
,,որ բանտարկեալն էր զնա:

ՀԷ. Օրոյց Պղէյտաքրոսի առ Աղրասոս ՚ի վերայ հատանէ նորա:

Արասոս ցուցաւ յամենայնի այր զաչացուցոր ոչինչ մտածութիւն առնէր ՚ի վերայ անձին իւրոյ: Հասակի նորա և եթ մի՛րթ էր լինել բաւական պատճառ շրջելոյ զնա ՚ի մտաց անձնատուր լինելոյ վշտաց

վիճակաց վտանգի և աշխատութեանց, որ այլ չէին նմա 'ի Ճահ: Այր նա անցեալ զվաթանամանիւք, և թուէր ծերագոյն ես: Այս սակս առիթ տուաւ Պէյրոտարոսի ազդ առնել նմա: Օրն այն ինչ անցանէր նա ընդ Գաղատիա, ուր աւերեալ իշխանս հիմն արկանէր նորոյ քաղաքի, կամեցեալ Սրասոսի կծանել զնա յայս սակս, ասէ: Աշխարհոյդ Պաղշահիս, չեմն արժանիս շինել՝ յորժամ մի միայն ժամ կայ ցերեկոյ: Պէյրոտարոս 'ի Ճահ ետ պատասխանի: Ես գոյ Տէր, չէլէր ինչ կամուռն՝ երկնայ պահ պահերաց ընդ Պարթևս: Զինք գիտել, արդեօք Սրասոս բարկացաւ է զրոյց: բայց ոչ յետնեցաւ 'ի յոջ վարելոյ զսկսեալն:

## Հզ. Օրինակ խոնարհութեան:

Այս է այր, որ գործէ՝ և լռէ. Թողեալ զի գործն քարոզեսցէ զնա, և ոչ ընդվայրապար պարծանք շրթանցն: որում յաւէտ նսեմանայ գործն և գործողն: Համեստութիւնն գովեստ մեծ է ոչ միայն 'ի սոսկականս, այլ և 'ի քաջ զօրավարս և յանուանի անձինս, և առաւել քան զայն՝ խոնարհութիւն, որում ոչ յանձին քա-

քաջութիւն և հմտութիւն, այլ յամենազօր Տեառն օգնականութիւն ապաւինեալ՝ գործէ մեծամեծս և սքանչելիս. որոց առաւել սատար՝ լինի խոնարհ պաշտամանք առ Աստուած և ազատեալ լինին 'ի բազմութենէ ամբարշտական թշնամեաց.

ՀԴ. ՊԱՐՏԱՒՈՐԵԱԼ ԱՃԷ. Թէ չիք գազան այնպէս ամեհի՝ որպէս մարդ, յորժամ կրից նորա 'ի վերայ յաւելցէ իշխանութիւն, որ անկ հասանիցէ նմա.

ՀԵ. ԱՂԱ ԶՕՐԱԳԼԽԱՒՍ ՈՐԴՒՈՅ՝ ՀԻՑ Է ԸՆԴ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂՑՐ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՀԱՆՁՆՈՒԹԵԱՆ.

Աւսաւկայն Պոնտոսի Պոմետիոս պատեալ պաշարեալ 'ի Յուլիոս կեսարէ, որում 'ի բազում ամաց հետէ յայտնեալ էր անձնական թշնամի, քաջալերեալ յերկիւղէ եդ 'ի մտի երթալ զինքովի, զի մի մնասցի ընդ հաճոյս և ըստ հրամանի նորայ թշնամւոյ. Պատուէր ետ խորում բժշկի՝ զի պատրաստեսցէ նմա դեղ մահու. իբրև բերին առ նա զըմ-

գըմպելըն էարբ քաջութեամբ, և ընկղմ-նեցաւ յիւր մահիճս ։ Իբրև ժամք ինչ անցին ՚ի վերայ, եհաս Մենտուրոս՝ որ պատմեաց նմա զգթութիւն Կեսարու։ Յայնժամ Դոմետիոս յուսահատեալ ողբս առնու, և չարախօս լինի զանձնէ վասն շտապելոյ իւրոյ և կուրութեան։ Բժիշկ իւր քաջալերեաց զնա և ասէ. ,,Քաջալերեա՛ց։ Այս արբուցի քեզ թըմբ-,,րադեղ ինչ՝ և ոչ թոյն մահու. ոչ լեցի ,,քեզ չար ինչ’’. Դոմետիոս ողի առեալ գնաց առ Կեսար, տարեալ ը̅ իւր վեց միլիոն սեստերտոս տուեալ նմա ՚ի Պոմ-պէոսէ ՚ի ռոճիկս զիւր գնդին։ Այս էր միոյ հասարակապետութեան. և Կեսարու մա՛րթ էր առնուլ իւր ՚ի միտս Բայց և այնպէս դարձոյց ՚ի Դոմետիոս, ոչ կամեցեալ երևիլ, թէ արդեօք իցեն յաչս նորա միայն կեանք մարդկան. այլ՝ թէ զերծ է յագահելոյ յարծաթ նոցա։

## ՀԶ. Պարտութիւն և փախուստ Պոմպէոսի Մեծի կրթէ զմեզ չապաստանիլ յու-նայնութիւն բաղդի։

Յետ յաղթելոյ Յուլիոսի Կեսա-րու զմեծն Պոմպէոս՝ և կոտորելոյ և անձնա-

անձնատուր առնելոյ զա՟մ զօրս նորա ։
Պոմպէոս դաշտադնաց լեալ յիւրմէ
բանակէ անպատսպարը փախեաւ ձիարձակ
արշաւանօք առ վայր մի ։ Իբրև ետես
թէ այլ չէ՞ք ոք հետամուտ խաղաց համ-
դարտին՝ մղձկեալ 'ի ցաւագին և 'ի
տխուր խորհրդածութիւնս ։ Այլ զիա՞րդ
լինէին ծուփք խորհրդոց առն՝ որ յետ
երեսուն և չորից ամաց ան՟ը հատ յաղ-
թութեանց՝ մուտ առնէր յիւրում ծե-
րութեան 'ի նորընծայութիւն ամօթոյ,
պարտութեան և փախստեան ։ Զանի՞
մրցմունս, քանի՞ մարտ պա՟րազմի մղեաց
առ հաստանելոյ փառաց և իշխանութե՟,
զոր այպ 'ի վայրկենի կորոյս ։ Ո՞րպիսի
խոտիր յիւրում վիճակի ։ Այր մի յա-
ռաջ զիւրև 'ի սպասու կային անթաւութիւք
մարդկան և երիվարաց, և նաւաց առա-
գաստելոց ընդ ծով ամենայն, և արդ
խոյս տայ այնպէս փոքրկացեալ և ամ-
փոփեալ, մինչև չանկանիլ նմա ընդ
տեսութեամբ թշնամեաց՝ որք 'ի խնդիր
էին նորա ։ Ի այսպիսի տագնապանօք՝
Պոմպէոս եհաս 'ի Լարիսսա. ուստի ան-
ցեալ ը՟ ձորն Տեմպէի, և զհետ երթեւ-
ըթացից գետոյն Պենէոսի՝ եգիտ հիւղ-
ձկնորսաց, և անդ անցոյց զայն գիշեր ։

ե . Իբրև

Իբրեւ լուացաւ, եմուտ 'ի կուր մի փոքրիկ ազատ արամբք՝ որ ընդ իւր, եւ արձակեաց զիւր ստրուկս՝ որք ընկերէին նմա։ Այսու օրինակաւ եհաս 'ի ծով. եւ 'ի պատել զծովափամբ՝ ետես նաւ մի բեռնաբարձ մեծ յոյժ, որ թուէր պատրաստական 'ի նաւել։ Տէր նաւին՝ որ էր Հռովմայեցի Պետրիկիոս անուն. տեսեալ էր 'ի գիշերի երազ, յորում թուէր նմա տեսանել զՊոմպէոս առաջի իւր 'ի տխուր եւ 'ի գծուծ կերպարանս։ Պատմէր նա յայնժամ զայս երազ՝ որոց անդն կային. եւ աՀա մի 'ի նաւավարաց եկն զգացոյց նմա, թէ տեսի վարքայ մի՝ ուստի նշանացի կոչեն զմեզ։ Պետրիկիոս դարձոյց զաչս յայն կողմն, եւ անդէն ծանեաւ զՊոմպէոս՝ որպէս տեսեալ էր զնա յերազի։ Ծեծեաց զիւր գլուխ 'ի նշան ցաւոց, եւ իջուցեալ զմակոյկն 'ի ծով երթալ առնուլ զնա, ձգէ ձեռն 'ի նա եւ ընդունի զնա յիւր նաւ։ Անդէն վաղվաղակի 'ի վեր էառ զխարիսխն եւ Հասոյց յամփիպօլիս ուր ոչ կամեցաւ մտանել Պոմպէոս, բայց երաշխիկ լեալ՝ թէ Կեսար չէ ինչ կարի Հեռի, եւ տագնապաւ եւ շոգաւ 'ի Միտիլենէ, ուր թողեալ էր

նորա զԿոռնելիա զիւր կին բացական
՚ի թնդմանց զինուց և պատերազմի .

Կոռնելիա մայր միտ եդեալ լրոյ
լինելոյ յաղթութեան : Կարծէր՝ թէ զՊոմ-
պէոսէ՝ այլ ոչինչ լսի, բայց զհետ պնդիլ
Կեսարու փախստէի, մինչ դեռ զայս խոր-
հէր, տեսանէ մտեալ զգուժկան ոք, որ
ողջունել անգամ չհամարձակեալ՝ գու-
ժէր զմեծամեծ ձախողութիւնս առա-
ւել արտասուօք քան բանիւք . Յորդորէր
զնա երագել՝ թէ կամէր տեսանել
զՊոմպէոս ՚ի մի միայն նաւ, որ և այն
չէր իւր : Յայն բան ըմբռնեալ ՚ի կսկծա-
գին ցաւոց՝ որում ոչ ակն ունէր,
նուաղեալ անկաւ, և եկաց հարուստ մի
անզգայ և անբարբառ : Իբրև զգաստա-
ցաւ, տեսեալ թէ չէ ժամանակ անձնա-
տուր լինելոյ յողբս և յարտասուս,
ընթացաւ ՚ի ծովափն, անցեալ ընդ քա-
ղաքն ամենայն : Պոմպէոս գիրկս ար-
կանէ զնովաւ անխօսիկ՝ և ՚ի վեր ունի,
զգուշացեալ . զի մի անկցի միւսանգամ
նուաղեալ :

Կոռնելիա յիւրում յուսահա-
տութեան՝ անձին ընծայեալ զձախողու-
թիւն իւրոյ փեսայի, ինքեան վերագրէր զպատ-
ճառն . խօսեցաւ և ասէ . ,, Տեսանեմ,

,,շքեղ

,,զքեզ ընծակից իմ, ( ոչ գործ քումդ
,,բաղդի՝ այլ իմոյս ) տատանել միով ևեթ
,,մակուկաւ, որ յառաջ քան զընդ Կուռ-
,,նելիա ընծայութեիդ հինգ հարիւրովք
,,նաւուք ընդ այս ծով խաղայիր. Ոչ ի՞
,,եկիր տեսանել զիս, և ոչ թողեր դը-
,,ժընդակ բաղդին, որ և զքեզ յայսչափ
,,վարակեցի յաղէտս. Քանի՞ բարեբաս-
,,տիկ լինէի կին, եթէ մեռեալ էր իմ յա-
,,ռաջ քան զգոյժ որ 'ի Պարթևս մա-
,,հուն Պուպլիոսի՝ ընդ որում կուսութե
,,ամուսնացայ. և քանի՞ իմաստուն, թէ
,,'ի վախճանիլ նորա թողուի զկեանս՝
,,որպէս հաստատեալ էր 'ի մտի. Այլ
,,պահեցայ լինել հարուած և Մեծիդ
,,Պոմպէոսի.

Պոմպէոս ամենայնիւ ջանացաւ մխիթարել զնա, առաջի արարեալ զյեղափոխութիւն մարդկային իրաց. Ասէ.
,,արիութիւնն զոր բաղդի շնորհեալ էր
,,ինձ, խաբեաց զքեզ. Կարծեցեր թէ
,,բաղդն իցէ մշտատև. Բայց չէք ինչ
,,անյողդողդ և աներկեան 'ի տկար մահ-
,,կանացուս. Նա այս իսկ է՝ որ զիս
,,վստահացուցանէ զչափ առնուլ միւս-
,,անգամ բաղդի. Նա զի յայնմ բարձր
,,դահէ հնար եղև ինձ անկանիլ յայս
,,ողորմ

»ողորմ վիճակ՝ յոր զեան տեսանեմ.
»Զեա՞րդ 'ի վիճակէ յոր այժմս կամ՝
»Համբարձայց 'ի վիճակ՝ յոր վայելեցի
ամս բազումս։

ՀԷ. Կեղծ է յայտնէ՝ յետ մահուն թշնամւոյ
լալ զնա·

Թէոդոտոս Նիգիպատցի՝ Հռետորն Թշուառականն, այն ինչ մատոյց Կեսարու զգլուխ և զմատունս Պոմպէոսի՝ խորհրդով իւրով սպանելոյ, տեսեալ Կեսարու զայն ողորմ նշաւակ՝ արտասուեաց. բայց պատճառ արտասուելոյ նորա էր անգիտելի. Զոր անշուշտ պնդեաց Կիոն՝ թէ կեղծ եղեն այս արտասուք. Զնոյն ապացոյց և խորհրդածութիւն՝ զոր մի 'ի մերոց քաջաց հագներգուաց արկ 'ի բերան Կոռնելեայ.

Ո՞վ դառնագին հառաչանաց,
Ո՞վ յարգական ակնածութեց·
քանի՞ քաղցր է՝ լալ զթշնամի,
երբ այլ երկիւղ չի՛ք 'ի միջի·

ՀԸ. Սողոնայ փիլիսոփայի խրատք են այս·

Զծերս և զպատուաւոր անձինս
պատ-

պատուեալ. յանդգնութիւն, զրկողութիւն և նեղութիւն՝ մի՛ ումեք առնիցես. խորհեալ յառաջագոյն և ապա տուր իրաւունս. քանզի երկու իրք հակառակք են խորհրդականութեան, շփոթումն և բարկութիւն.

## ՀԹ. Ազատաբերան համարձակութիւն Հիբրէասայ ատենաբանի առ Անտոնիոս.

Մարկոս Անտոնիոս եռապետական՝ այն ինչ 'ի Յունաստան պահանջեաց կրկին հարկս 'ի ժողովրդոց, Հիբրէաս մի 'ի մեծամեծ ատենաբանից արար նմա յանուն Ասիոյ ասերս.

,,Եթէ կարօղ ինչ ես (ասէ) ձգել ,,'ի մէնջ հարկս կրկին 'ի միում ամի, ,,ապա կարօղ ես և տալ մեզ երկու ,,ամառն և երկու աշուն. Յայլում նուագի նոյն ատենաբան խօսեցաւ ընդ նմա կարի ազատաբերան՝ որ լսոյէր 'ի սիրտ. Յետ երկերիւր հազար տաղանդաց քաղելոյ յԱսիոյ, Անտոնիոս պահանջէր դեռ նորանոր տուրս, Հիբրէաս իշխեաց ասել առ այդ առաջարկութէ.

,,Եթէ

,,Եթէ չընկալար դու՝ զոր ինչ մեք ,,տուաք, մա՛ռ զհաշիւ 'ի քոց հարկահա-,,նաց. ապա թէ առեր՝ և այլ չե՛ք առ-,,քեզ, վա՜յ է մեզ, կորեաք ուրեմն.

Ծ. Օգոստոս կայսրն հանապազ ունէր 'ի բերան զառակն Յունաց թէ՝ փութա՛ յուշիկ. և սիրէր յառաջ բերել զոտանաւոր ինչ՝ որոյ այս է իմաստ՝ թէ Զօրավար զգուշաւոր, է վերագոյն քան զյոխորտ.

ԾԱ. Ձե՛ռ տան պատերազմութեանն յետ դառնալոյն.

Յետ պարտութեան Անտոնիոսի Օկտավիանոս Կեսարոսէ, և տեսանելոյ զմտերիմ բարեկամս իւր զերեսս դարձուցեալ յինքենէ, ընկղմեալ 'ի մաղձամակարդ թախծութիւն՝ փակեցաւ 'ի փոքրիկ և 'ի հեռաւոր տան ուրեք: Ուր մեկուսացաւ առ ժամանակ մի՝ փախուցեալ յընտանութենէ մարդկանց՝ ատելով. օրինակ առնում 'ի Տիմոնէ մարդատեաց անուանելոյ, և խոշտանկեալ՝ իբրև զայս աթենացի յապերախտու.

տութենէ և 'ի հաւատադրժութենէ ի֊մոց բարեկամաց, խեթացեալ եմ յազգէ մարդկան։

ՃԷ. Պլուտարքոս առ

Այնքա որք նեղին 'ի դժբաղ֊դութենէ, սովո՛ր են ճանաչել զիւրեանց վրիպակ, և մատուցանել ուղերձ առա֊քինութեան։

ՃԸ. Բրուտոս առ

Ո՜վ չարաբաստ քաղջարութիւն,
եղեր և դու պիտակ անուն.
Նա իրօրէն քեւ վարեցայ,
այլ դու Բաղդին եղեր ծառայ.

ՃԹ. Ովիդիոս առ

Ընդ քեզ ծանեայ ըզ Փիլիպպէ,
և ըզ խուճապ փախուստ յանդգն,
Լքեալ 'ի բաց անարգաբար,
'ի յահեկաց զնմըս ապար.

Ա՜յն ինչ եթող դաշտ փիլիպպեան
զիս մաղապուր,

ըստո֊

ընտրողաքարշ բերէլ զերկրաւ թևա-
կտուր.
Մերկ կողոպուտ 'ի հայրենեան գո-
յից յարկաց,
վարեաց յանդունդն աղքատութիւն
զիս 'ի քերթուած։

## ՃԵ. Յուլիոս Կեսար ասէ.

Երկու օգնութիւնք են ամենայնիւ պիտոյք առ հաստելոյ 'ի հզօր զօրութեան. զօրականք և փողք. այս երկու նպաստք ձեռնտու լինին միմեանց փոփոխակի. փողով պահպանին և անքակ յօդին զօրականք. և զինուք զօրականաց լինի ստանալ զփողս. Եթէ մի յերկուց ստէ պակասի, միւսն ոչ կարէ կալ.

## ՃԶ. Անյիշաչարութիւն Կեսարու.

Յորժամ Կեսար յաղթեաց Պոմպէոսի, Աթենացիք բացին զդրունս քաղաքին, որ գթութեան աղերս արկին պատգամաւորօք. Կեսար ներեաց նոցա. բայց և ետ նոցա նախատինս այսպիսի. ,,Իսկ միշտ այդպէ՞ս լինիցի. զի արժանապարտ գոլով կորստեան վն̃ ձերոց ,,յան.

«« յանցանաց, շնորհ ընկալցին փրկութեն
«« վասն փառաց Ձերոց Նախնեաց ։

ՃԷ. Պռովանի խոհականութեան նորա ։

Սեսար կարգադրէր զամենայն առ-
անցանելոյ փութով յափրիկէ. և ահա
յարեաւ կատաղի խռովութիւն յիւր
հինաւուրց Լէգէոնս, որ բաւական էր
յապաղել զչու նորա. Սեսար առ ժամն
չէր ձեռնհաս հաճել զմիտս նոցա, և
ոչ տալ նոցա յայնմ վայրի ինչ՝ բայց
խոստմունս. Ապա առաքեաց զՍալուս-
տիոս որ ընտրեալն էր պրետոր, պատ-
ուէր տուեալ յայտ առնել նոցա յիւր
անուն թէ ընդ յանկ ելանել կռուին
Ափրիկոյ, բայց 'ի բաշխմանէ կալուածոց
և դրամոց՝ որ անկ է նոցա վասն ան-
ցելոց, յաւելուլ ունի և ձրիական ինչ
տուրս հազար դենարի առ մի մի (որ է
500 Փռանք ։) Այս խոստմունք այսմ
բացակիցք 'ի պահանջողուց զօրականին
առաւել ևս բարկացուցին զնոսա ։
Սալուստիոսի իսկ վտանգէին կեանք,
թէ չէր հապճեպ զերծեալ 'ի նոցանէ ։
Եւ խռովարարացն յափշտակեալ 'ի
Թափոյ ցասման, անդ էին վաղավաղակի
չու դարձի առնեն 'ի կողմն Հռովմայ,
յապա-

յապականութիւն եղեալ զա՛մ՝ ուր
և անցանէին։ Սպանին և զբազումս․
Զահի հարաւ Կեսար վասն քաղաքին․
Անդէն վաղվաղակի ետ փակել զդրունս
և բաշխեաց վաղվաղակի 'ի պահպա-
նութիւն զգունդս՝ զորս ունէր ընդ ձե-
ռամբ։ Այլ ինքն ոչ կամեցաւ փակել
'ի ներքս 'ի քաղաքի, այլ իբրև լուաւ
թէ խռովարարքն հասեալ են 'ի դաշտ
Արեսի, չոքաւ ընդ առաջ նոցա, թէ-
պէտ և իւր ահարեկ բարեկամք առա-
ջի առնէին չերթալ․ Եւ ահեղաբար
յիւր ատեան և ահեղասաստ բարբա-
ռով եհա՛րց ցզօրականս․ յի՞նչ եկեալ
էք, և զի՞ կամք են ձեր․

Այս առաջին խրոխտաձայն խի-
զախութիւն՝ արկ շփոթ 'ի խռովարարս․
Չիշխեցին 'ի մէջ բերել զփոխարինու-
թիւն վարձուց՝ որոց յապաղումն յա-
րուցեալ էր 'ի նոսա զտրտունջ։ Այլ
շատ համարեցան առաջի առնել, թէ
վաստակաբեկք գոլով և ոգեսպառք յա-
րիւնհեղութենէ յայնչափ պատերազ-
մունս, թուէր մեզ թէ արժանի եմք ար-
ձակուրդ ընդունելոյ․

Կեսար անապաղ ասէ բա՛ն չեղ․ և
իբրև վայրէկ մի լռութեան էանց 'ի
վերայ

վերայ, 'ի խառնել յայն և ինչ մի անուշակ՝ առանց վնաս հասուցանելոյ յարգի և հեղինակութեան հրամանին, յամէ. 'Ի [illegible]

Այս դուզնաքեայ բառք՝ շանթք եղեն 'ի սիրտ խռովարարաց։ Այն ինչ՝ որում ոչինչ ակն ունէին, էր տալ նոցա Կեսարու արձակուրդ, 'ի ժամանակի յորժամ դեռ պիտէին նմա նոցուն ծառայութիւնք։ Խոստումն վարձահատոյց լինելոյ նոցա յամօթ առնէր զնոսա։ Նախանձաբեկ լինէին՝ թէ յետ բառնալոյ իւրեանց զծանրութիւն, և տանելոյ ըզլում վշտաց վտանգի յայնպիսի և յայնչափ երևելի պատերազմունս, թողուլ ունիցին այլոց զպատիւ յաղթանակի։ Յուզեալք 'ի յոգունց այսպիսի այլևայլ ծփմանց՝ մնացին առ վայր մի ընդարմացեալք, այլ ոչ նուաճեալք. որովհետև ոչ կարէին հաւատալ, թէ Կեսար 'ի գործ դնիցէ զիւր սպառնալիս, կամ դէթ զանց արասցէ զնոցուն ծառայութեամբք. Իշխանապետն յիւրն կողմանէ կամէր երթալ 'ի բաց, այլ չունելով առ նոսա ասել ինչ։ Իւր բարեկամք աղաչեցին զնա

չեր-

չերթալ 'ի բաց, այդպիսի լակոնական խիստ բանիւ յիւրոց ընկերաց և 'ի պաշտօնէից իւրոց յաղթութեանց։

Ապա դարձ արար 'ի խօսել ընդ նմա և յանուանելն զխռովարարսն, անուն կոչեաց նոցա Կուիրիտեայս, որպէս թէ ասէ Քաղաքացիս, որովհետև ոչ հայէր 'ի նմա այնուհետև իբրև 'ի զօրականս։ Այս բառ նկուն արար զնոսա իսպառ. Զայն բարձին յայնժամ, զօրականք եմք մեք, գոչեցին 'ի խոնարհական աղոքանս. վկայութիւն եղին յայտնապէս եթէ անկեղծ է նոցուն ապաշաւ խնդրեցին ով մեծ շնորհ՝ զի տարցէ զնոսա ընդ իւր յԱփրիկէ, խոստացեալ նմա անձամբք լու-կալք յաղթել թշնամեաց՝ որչափ և բազումք իցեն, և յանձն առին տասանորդել իւր՝ եթէ հաճ թուիցի նմա։ Կե-սարու հաստատեալ զնոսա յայն սահման յոր իւր կամք էին, պինդ եկաց դեռ առ վայր մի. Այլ արար նոցա, թէ իմ այլ ոչ են կամք հեղուլ զձեր արիւն, բայց քանզի զննուոք գոլով յարբունս կորովութեան՝ մերժեցէք զծառայու-ձերոյ զօրագլխի, արժան է ջնջել զձեր անուն. Սակայն և այնպ հուակ ուրեմն

՚յաղթեալ ՚ի պաղատանաց նոցա, եցոյց զիջանել հայցուածոց նոցին, և տալ նմ որպէս շնորհս զայն ինչ՝ որում յերաւէ էր նմա և շահեկան ըղձանալ մեծապէս։ Այս ամենայն քաղաքավարութիւն էր քաջախոհ, հայելով յօգուտ պարագլխի միոյ կողման․ Բայց որ ինչ հայի ՚ի նե-րողութիւն և ՚ի մեղկութիւն առ զօրա-կանս, հակառակ է այդ ամենայն բարիոք կանոնաց և անվայել հրամանատարի, ո-րոյ զգեցեալ իցէ օրինաւոր իշխա-նութիւն։

ՃԷ. Ամփոփումն Սեւերոսի ՚ի խափանար-կութեան հետևանաց անառակ կարծեաց խուժանին

Սեւեր անձանէ յամփոփէ՝ անհաւա-տութայինք իւրով, զորմէ պատմի թէ յէջանել իւրում ՚ի ցամաք ՚ անկաւ ՚ի գետին. բայց զի գիտէր զոնապաշտ բնա-ւորութիւն խաժամուժին, երկուցեալ թէ իւր զօրականք համարիցին զիւր ան-կումն ձախող ինչ գուշակութիւն՝ աղա-պարեաց սթափութեամբ մտացն անդէն իսկ ուղղել զկարծիսն, տարածեալ զբա-զուկս որպէս թէ ՚ի գրկախառնութիւն երկ.

երկրիս այսմիկ, և գոչելով 'ի ձայն բարձր Կաւսայ շէեղ Ալ՚ֆէրէնէ ·

ԺԹ. Տհաճութեան համաձայնեալ Աղուեստոյ ընդ Եանաեարութեան Կեսարու զի տերերու առ-ղետ անձամբ առաջի առնել 'ի մեծամեծան խա-ղաղութեան շնան ինչ եւրոյ շարադրութե։

'Ի կատարել Կեսարու զչորս յաղթանակս՝ վասն յաղթութեանց եղելոց 'ի վերայ Գաղղիացւոց, 'ի վերայ Աղէքսանդրիոյ և Եգիպտոսի, 'ի վերայ փառնակայ և 'ի վերայ Յուբասայ. 'ի թատերականն խաղս՝ որք առաջի արարան, եղեն ծանրաշարժ խաղարկութիւնք 'ի Յունաց և 'ի Հռովմայեցւոց անուանեալք մ՛ մ, ընդ մեծամեծաւք. Լաբերիոս ասպետ Հռովմայեցի էր գերապանծ յայս ազգ շարադրութեան. և Կեսարու ոչ շատացեալ թէ սա յօրինեսցէ և եթ զայնպիսի խաղս, պահանջեաց և զայս հաճութիւն, զի և անձամբ առաջի արասցէ զմասն ինչ խաղուն. Բանաստեղծն անսաց. բայց ակամայ կամօք, որպէս երգոյց 'ի նախաբանութե ինչ՝ զոր Մակրոբիոս հասոյց մեզ. և յորում դառնապէս դան-

գանգատէ, Թէ ծնեալ Ասպետ Հռովմայեցի, մտանել ունի 'ի կարգ կատակերգուաց ։

Բայց և այնմ՛ եհան զվրէժ քինու բռնութեանն՝ զոր առնէր նմա Կեսար, չափաբերութեամբք զոր յեռոյր յիւր Միմոսութիւնս, և զոր յերիւրէր յայտնապէս ըստ առաջիկայ հանգամանաց իրողութեանց։ Այսուիկ եմոյծ նա 'ի խաղարկութիւն զանձն ոք՝ որ բարձրաբարբառ աղաղակէր. „Հռովմայեցիք՝ „կորուսանեմք զմեր ազատութիւն”. Նշանաւոր է յոյժ միւս ևս տող՝ որոյ այս է միտ։ „Այն՝ յորմէ բա„զումք երկնչին, երկնչել ունի և ինքն „'ի բազմաց”. Ամենեքին՝ որք 'ի հանդիսին էին, արկին զայս առած զանձամբ Կեսարու, և դարձուցին զաչս իւրեանց 'ի նա։

Բարկացաւ իշխանապետն ը̃ այս համարձակութիւն բանաստեղծին. և արհամարհութիւնն զոր գգաց, յանկոյց զմիտս նորա 'ի տալ հրաման վարձահատոյց լինելոյ Պուպլիոսի սիւրացւոյ (կմ̃ ասորւոյ՝) դիմամրցանակին Լաբերիոսի։ Բայց և այնպէս Կեսար ոչ զանց արար վարձա-

վարձատրել և այնմ՝ զոր բռնադատեաց ցածնուլ յանարգութիւն ։ Պարգևեաց նմա իսկ և իսկ ոսկի մատանի, որպէս թէ 'ի դարձուցանել զնա 'ի կարգ ասպետաց. և վարձս ինչ հինգ հարիւր հազար սեստերտաց ։

Տաբերիոս յելանելն 'ի խաղետղէ՝ պատրաստեցաւ երթալ նստել յիւր տեղն ընդ ասպետս հռովմայեցիս ։ Նոյնք որք համարէին կրկին անպատուութիւն վն իւրեանց, թէ միոյն 'ի դասակարգէ իւրեանց պատուորեսցի ելանել 'ի խաղետղ, և յետ խաղալոյ դառնալ նստել կամիցի ընդ իւրեանս, այնպէս նստանն՝ որ վասն նր այլ ոչ թողին տեղի ։ Տաբերիոս ջիգն դնէր անցանել ը̃ նստարանն ծերունեաց՝ առ հասանելոյ 'ի նստարանն ասպետաց ։ Սիկերոն՝ որում մօտ գտաւ, տեսեալ զնա փոքր մի նեղեալ՝ ասէ. Ես տայի քեզ տեղի, եթէ ոչ չարի 'ի նեղ կայի. Սիկերոնի միտ էր ծաղր առնել զՏաբերիոս, և կշծանել ևս զբազմութիւն նորոց ծերունեաց կարգելոց 'ի Կեսարէ առանց ինչ ընտրութեան, և առանց ինչ միտ դնելոյ կանոնաց և պատշաճողութեան ։ Օայրացել բանաստեղծին՝ ետ պատասխանի

Կիկերոնի կարէ իմն կծանող ։ Օրմո-
ցուցանէս զիս ասէ, որովհետև ոտնոր ես
նօրէն մէջս միանգամայն յերկոսս ակնոս ։
Յայտարարութիւն էր այս առակաւոր,
որ նշանակէր առ Հռովմայեցիս զայն՝
զոր այժմ ասեմք, շողոմել յերկոսին Ջուրս.
որ է՝ 'ի ծուփս կալ յերկուս կողմանս.
Նոյն օրինակաւ Լաբերիոս 'ի դէմս
ածէր Կիկերոնի, թէ չհետ երթեալ
երբեմն Պոմպէոսի և երբեմն Կեսարու,
չեկաց հաստատուն բարեկամ, ոչ մի-
ում և ոչ միւսում.

Դ. Ոկտաւիանոս որդեգիրն Կեսարու՝ որ
կոչեցաւ Օգոստոս՝ ոչ կամէր օրինաւոր
ունէին ածել պէշխառնութեան.

'Ի փոփոխել ժամանակաց յետ
սպանութեան Կեսարու՝ որդեգրեալն
'ի նմանէ մանուկն Ոկտաւիանոս Օգոս-
տոս էր տակաւին տասն և ինն ամաց,
յորժամ ունէր ի ձեռամբ իւրով զութն
Լեգէոնս որք էին համակ 'ի հինա-
ւուրց զօրականաց Կեսարու. յորոց ա-
ռաքեաց զչորեքհարիւրս 'ի Հռովմ առ
պատգամաւորս առ Օերիկոյսն, խնդրել
զվճար հինգ հազար դենարաց՝ որ խոստա-

է ասա-

տացեալն էր նոցա, և զյառաջաշարժումն
զօրագլխի խուրեանց 'ի պատիւ հիւպա-
տոսութեան։

Ծերակոյտն՝ Թէպէտ և հաւան
էր ընդ վճարումն փոքր զօրուն, բայց
չկամէր և ոչ ունէր մատուցանել խնդրոյ
հիւպատոսութեան վասն Ոկտաւիանոսի,
մինչև արարեալ յաւէտ զիւր Նորահա-
սակն . . . և որոյ պատճառանօք՝ պատր-
ուակէր զայլ պատճառանս չկամութեան
հիւպատոս լինելոյ Ոկտաւիանոսի, եկաց
յամառ 'ի զլանալ։ Յայնժամ Կոռն-
նելիոս հարիւրապետ՝ զլուխ պատգա-
մաւորաց եկ 'ի ժողովոյ, և արկեալ ըզ-
ձեռն 'ի զանձնական սուսերի՝ դարձաւ
'ի ծերակոյտն և ասէ. „Եթէ զհիւպա-
„տոսութիւնն չտայք դուք իմում զօ-
„րագլխի, ահաւասիկ սա տայ նմա”։
Իսկ որ Կիկերոն ետ պատասխանի՝ զարոյգն
'ի ծառը փոխարկեն՝ ըստ իւրում սովորութ.
„Եւ թէ դու այդպէս խնդրես զհիւ-
„պատոսութիւն վասն Ոկտաւիանոսի,
ընդունելով ընկալցի”։

Դիտումն Նորահաս զօրագլխին՝
այդ իսկ էր. տեսեալ զիւր զօրականս 'ի
քաղկութիւն բարձեալ 'ի զլանալոյ ծե-
րակուտին, ձանձրացաւ բորբոքեալ եւս

զնո-

վնոյայն ցասուման, և 'ի նոցանէ դրդեա-
լեւրև արկանել՝ բռնամբ յափշտակելոյ
զոր ոչն կամէին շնորհել մատչելը.
Այսու օրինակաւ տեղի տուեալ այս-
պիսում քաղցր բռնութեան՝ անց ընդ
Ռուբիկոն գետ, անուն դառնաղէտ 'ի
քաղաքական պատերազմունս Կեսարու.
և ոչ ընդդէմ խաղաց 'ի մէջ Հռով-
ռոմէայ.

Ծերակոյտն առ այս լուր խռո-
վեցաւ. Այլուր յուշ արարին՝ թէ չէր
անկանելն անդրդուութեան յՈւնկերուէ
լինել՝ որում 'ի մէջ կայ սոսիապօղ վտանգ,
և յայտնի օրինակ է այսմ ձախող գնացք՝
զոր կալաւ ծերակոյտն յայսմ նուագի.
Պոմպէին շարժումն եղև նոցա զինանել
ամմեւ նորահաս զօրագլխին և զօրակա-
նացն. ուստի պատուէր տուաւ զի բաղ-
խեսցի հինգ հազար դենար ըստ մաք-
դալթուլի, որ բազում ժամանակաւ յա-
ռաջ խոստացեալն էր զօրուն. Իսկ յանձն
եղև այս Ոկտաւիանոսի միայնոյ, որում
խոստացան և հիւպատոսութի։ Բայց այն
ինչ մեկնեցան պատգամաւորք սանեդ-
առնա զԼեբոն, ծերունիք մեղադրեցին
անձանց՝ զերկչոտութիւն իւրեանց. և
'ի հասանել երկուց Լեգէոնաց յայնմ մ

'ի

'ի դէպ պահու յԱփրիկոյ՝ անդրէն քա-
ղաքերեան, կարծեալ երկոքումբք սոքօք
և երրորդաւ Թողեցելով 'ի Պիանսայէ
'ի պահպանութի քաղաքին, կարող լինել
պատսպարել 'ի զօրուէն՝ որ մերձենայր։
Ձգէն գունդս 'ի լեառնն յԱնիկուլոն,
ուր էին յաւանդի փոքր հասարակա-
պետութեան. և զօրացուցին զկամուրջն՝
որ ունէր հաղորդութիւն յԱնիկուլոյ
մինչ 'ի քաղաքն։ Իսկ այն որում անձկայի
եւս, էր զբռամբ ունել զմայր և զքոյր
Ոկտաւիանոսի, զի այսպիսի պատանդօք
'ի ձեռին՝ զամենայն հնար էր նոցա
ընդունել 'ի նորահասակ զօրագլխէն։
Բայց զոսա այնպէս զգուշաւորութե
ծածկեցին 'ի բարեկամս նորա, որ չեղև
հնար նոցա իմանալ զտեղին՝ ուր եղանն
յապահովի։

Ամենայն վայրագութի և համար-
ձակութ ծերունեաց իսկ և իսկ ցածեա
'ի հասանել Ոկտաւիանոսի. Նա զգուշա-
ցեալ էր իմաստնապէս՝ առաքել յառա-
ջագոյն հեծեալս՝ յայտ առնել, զի մի՛
ոք ահաբեկ լիցի՝ Թէ գայ նա առնել
Թշնամութիւն 'ի քաղաքի. Այսուիկ ա-
պահովութե ժողովուրդն եկաց հանդար-
տեալ, և երեք լեգէոնք իսկ Ոսկերակու-
տին՝

տին՝ որք ոչ այնպէս ջերմ միտեալ էին
՚ի դատ սոցա, և որք Թերևս խորհէին
իսկ յիւրեանս՝ շիջեալ զկողմն, ում արարին
յետ սակաւ միոյ, ոչ ձգեցին և ոչ ձեռն 'ի
սուր մերկանալ. մինչ զի 'ի գալ Ոկտա-
վեանոսի բանակել 'ի ստորոտ Կուիրինալ
լերին, մի քան զմի անձապարէին գնալ
առ նա յուրախակցութի. Առ հասարակ
ընթանային անդր գունդագունդ, ոչ մի-
այն ժողովրդականք, այլ և բազումք 'ի
գլխաւորացն Ծերակուտին: Ի վաղիւ անդր
քաջ պահպանութեամբ եմուտ 'ի Հռ-
ովմ, ընկալեալ 'ի բազմութէ ձայնիւ
ցնծութեան. Կամեցաւ յառաջ քան զա-
մենայն երթալ 'ի մեհեան Վեստայի, ուր
գիտէր թէ էին մայր իւր և քոյր.
Յանժամ երեք լեգէոնք մտին ը̄ հնա-
զանդութեամբ նր: Ուստի Ծերակուտին
կորուսեալ զամենայն յոյս՝ եմուտ ը̄
օրինօք զօրագունդին. Կորնուտոս միայն
պրետոր քաղաքին՝ յուսահատեալ չո-
քաւ զիւրովն. Այլք չոքան խոնարհել
այնմ՝ զոր բաղդն տիրացոյց վիճակե
նոցա. Եւ պիտոյ եղև Կիկերոնի իսկ
յանձն առնուլ զայս դժուարին ցածու-
թիւն, խոտիւ կշտամբեալ յՈկտավեա-
նոսէ վասն այսորիկ, զի յիւրոց բարե-
կամաց

կամաց մինչի յեռանորդ գտաւ երթալ
՚ի շնորհաւորութիւն .

ՂԷ. Տաղք ինչ ՚ի Տաղից Մերգելեանց առ
Օգոստոս կեսար և առ Անտոնիոս.

Աստի Օգոստոս քաջայաղթ Կեսար,
կայր համբերութեամբ ՚ի խել բարձրածայր·
Զազգն Իտալական վարէր ՚ի գուպար,
ընդ հռովմ է ծերոց՝ զոյգ է Դից դուռք·
Իսկ ՚ի հանդիպոյ Անտոն յաղթական,
յորունց մրցանաց զօրօք խուժական.
Ածէ ՚ի յազգաց Ելից Արփական,
մինչ ՚ի ծովամանց ծոցոյն Երիթրեան:
Զեգիպտոս և զօր Արեգդեմ վայրաց,
նոյն և զԲակտրա ՚ի մերձին ծագաց·
Եւ. զԵգիպտուհին՝ (ամօթ երեսաց,)
զամուսնդ զուգակից զհետ իւր շաղաց·
Աստի Ագրիպպա մղէր զգանակ,
և հողմք և Աստուածք նմին օժանդակ·
Որոյ ցռկազարդ ձաձանչէ դիտակ,
՚ի սղրսակ նաւեան՝ ՚ի պերճ մրցանակ·

ՂԸ. Օկտաւեանոս անմահացուցանէ զէշ մի և զէշարած, զի եղեն նմա բարեգուշակ.

Ընդ այգն ընդ առաւօտն՝ յո-
րում

բում եղանէր յիւրմէ բանակէ երթալ՝ տալ պատերազմ ընդ Անտոնիոսի, պատահեալ իշխանին ումեք եհարց զանուն նորա և զանուն գրաստու նորին։ Ասէ իշխանն. անուն իմ է Եւտիքոս, որ թարգմանի բարեբախտ. և իմ էշ իշի Նիկոն, որ նշանակէ յաղթող։ Գուցէ թէ դիպուած էր լոկ պատահական իմն, կամ քաղաքավարական դիւտ Ոկտաւիանոսի՝ ՚ի քաջալերել զիւր զօրականս. որ և իցէ, պարտ անձին փոքրկաւ պահել զայսպիսի յիշատակ. և կանգնեաց ՚ի Նիկոպօլիս երկուս արձանս՝ որք երևեցուցանէին

զէշն և զիշավարն։

## ԶԷ. ԱՆԲԱՒ ՃՈԽՈՒԹԻՒՆՔ ԶՈՐՍ ԷԱՌ ՕԳՈՍՏՈՍ ԿԵՍԱՐՈՒ։

Եգիպտոս լինէր վասն յաղթութեան եղելոյ ՚ի վերայ Կղէոպատրայ երկիր ստացական, և գաւառ Հռովմէական։ Ոկտաւիանոս իբրաւամբք յաղթականութեան էառ անտի անբաւ գումար. Պալատն թագաւորական լի էր շեղջաշեղջ ճոխութեամբք, զորս Կղէոպատրայ ևս ժողովեալ էր իւրովք յափշտակութեամբք, ևս առաւել կայսրութեամբ

՚ի

'ի մեհենաց ամենայնի որ ինչ կայր 'ի նոսա մեծագանձ: Ռստմութիւնն այսց սեղանակապտութեանց մնաց Կղէոպատրայ, և օգուտն Օկտաւիանոսի:

'Ի վրդ ամի՝ Հռովմ հարստացաւ, և իւր մեհեանք զարդարեցան աւարօք Եգիպտոսի: Յորչինչ իբրաց այնպէս լաւագոյն իմանամք զանչափութիւն փողոց 'ի պարտութենէ Եգիպտոսի ածուելոց 'ի Հռովմ, որպէս 'ի փոփոխմանէ ծագելոյ 'ի տուր և առս նորա: Կշռուածոց կերկնապատկեցին գինք. և շահ փողոյ 'ի հրապարակի իջուցաւ յերիր մասն, և յերկոտասանէ ցածեաւ 'ի չորս առ հարիւր:

ՂԷ. Օկտաւիանոս այց առնէ շիրմի Աղեքսանդրի

'Ի ժամանակի յորժամ էր Օկտաւիանոս յԱղեքսանդրիա յայց եւ շիրմի Աղեքսանդրի մեծի և ձեռն հասոյց 'ի մարմին իսկ նորա՝ զոր համարի Պղեո արարեալ յայս սակս, զի տեսցէ թէ ծագմնչացն՝ յոր ձգեաց զձեռն, փշրեացի ը մատունք իւրովք: Կայսութիւնք յարգի՝ զոր" եցոյց նմա առ մարմին այսր Ծակալըս ծաղկեքն զորս էարկ 'ի վր գերեզմանին, և պսակն՝ որով զարդարեաց զնա, եւ առար.

տուարկայք՝ յիշմէկց արժանատագոյնք, Սկամ եղև ցուցանել նմա և զերկրիմս Պտղոմեանց․ Բայց ինքն մերժեաց զառաջարկութիւն ասելով․ ես հետաքննին էի տեսանել զԹագաւոր ոք, և ոչ թէ զմեռեալս․ Հրաժարեաց նա ճշգրտագոյն և իմաստնագոյն և սատացուածով ՚ի տեսանելոյ զԱպիս․ ( չաստուած Եգիպտացւոց, ) յորոյ հրաւիրեցաւ յայցելութիւն․ ասէ․,, Իմ սովորութիւն է պատուել զԴիս, և ոչ զԵզն․

ՂԵ․ Պատրաստի Աւգոս պատերազմել ընդ Պարթևաց․

Աւգոստոս հազիւ զերծեալ ՚ի քաղաքական պատերազմաց՝ կայր վաստակաբեկ ՚ի պարապորդութենէ․ Ոգևեալ վասն մեծամեծ իրաց և զակատել զհետ փառաց, բազմապատիկ բարեդիպութիւք փոխանակ յորդորելոյ զնա ՚ի վայելս արգասեաց իւրոց ճգանց, լինէին նմա մանաւանդ խթան սրտապնդել զնա յամէ ՚ի ձեռնարկ մեծ ևս իրողութեանց։ Այլեւք փառաց՝ յորս առ ժամն վայելէր, ետ և իսկ շիջեալք՝ հարկէին զնա ՚ի խնդիր լինել նորանոր վայելմանց․ Նախանձաբեկ լեալ ընդ իւրոյին անձն՝

որպէս սովորութիւն է լինել առ օտարոտի, անյագ ըղձանայր միշտ աղօտացուցանել զեւր անցեալ փառսն՝ եւ փաղփիւնափայլ փառօք Հանդերձելովք.

Ի յո շարժառիթք. (որք քաջ ա-ծեալ զՌոմ՝ անհնարաւոր առնէին զոհ լինել զանձինս, և ցուցանեն՝ ոչ այնչափ զմեծանձնութիւն այնորիկ՝ զոր մինն 'ի գործել, այլ զդառապելուն մի միակայն քաղաքաց,) ապստեցին 'ի Կեսար՝ երթալ մարտ դնել ընդ Պարթևս: Թէպէտ գի իւր առողջութիւն իսկ էր անյարմար 'ի գործ-առնուլ, 'ի շարժման և 'ի շկահիւն գի-նուց, որ 'ի ժամանակի Հանդարտութեն էր տկար և թալացեալ.

ՂԸ. [illegible]

Այժմ յաղթութիւ դարձուցից 'ի Հայրենիս զազատութիւն. կամ 'ի մեռա-նիլ իմում արձակեցայց 'ի ծառայութենէ. Ա՛րդ ոչինչ վտանգ ահաւոր է մեզ: Տեսանեմք զմեր վիճակ անքոյթ. մի մի-այն անստուգութիւն որ մնայ մեզ՝ է գիտել, կեցցեմք արդեօք ազատ, թէ տարցուք զազատութիւն մեր 'ի գերեզման.

Անձն.

ղե. Աղնիւսն է, որ արքենալ անմարդաբնակ
անմարդոյ 'ի շարժ.

Որ օրինակ թէ ոք զոդ մերձաւորելով ընկերին կարծիցէ աղտեղ ընդխառնութեան. և նա՝ որ ոչ հարկանի ը̄ վայրապար հարուածս զդոյն գժուարի. և այսպիսի ոմնտեօք 'ի թշնամուն յարուցեալ՝ ոճիրս մեծամեծս գործեսցեն: Համեմատեցէ Յարութիւնակաձեան.

ղզ. Աղերժան է ընդ դպրոց ... ...

Սպրդեաց եմուտ երբեմն հակառակութիւն 'ի մէջ Շիպիոնի և Սաքոսի. զի երկորդս այս պատուասիրելով հրամայել, ոչ կամէր տեղի տալ այլում՝ չնչին պատճառանօք, թէ ինքն քաղում ժամանակաւ յառաջ գտեալ էր զաւառին. և Յուքաս թէ՛ ուր իւրով գործողութեամբ և խուժադուժ պերճութե̄ ճնշէր զերկոսին ևս: Առաջարկութիւն Կատոնի փոքր 'ի շատէ դեղ էր այսց անկարգութեանց: Պիտաց սա ուսուցանել Յուքասայ՝ ակն ածել փառաց և զերախայութեան անուանն հռովմէականի: Իւր յառաջնում տեսաւորութեան

իւր-

իւրեանց՝ երբ և կալաւ իշխանն Նումի-
դացի զգերադաս տեղի 'ի մէջ Սկիպի-
ոնի և Կատոնի, այս յոխորտ հռովմա-
յեցի փոխադրեց անձամբ զիւր աթոռ,
Սկիպիոնի տալով զմիջին տեղի 'ի մէջ
իւր և արքայի: Բայց և այնմ այս խրատ
չեղև բաւական, ոչ 'ի խրատել զՅու-
բաս և ոչ առ ազդել Սկիպիոնի իմաստ
քաջ արժանի իւրում աստիճանի:

## ԼԹ. Վասն Բրուտոսի զարմանալին Մարկե-ղոսի կամաւորաբար աքսորելոյ:

„Տեսէ՝ ասէ, զՄարկեղոս յիւր
„աքսորանս Միտիլենեայ, զի վայելէր
„ամենայնիւ յերջանկութեան զոր տա-
„նիցի մարդկեղէն բնութիւնս, և ես
„քան զևս խանդակաթեալ 'ի գեղեցիկ
„ճանօթութիւնս: Մինչև 'ի մեկնել ի-
„մուամ 'ի նմանէ, ոչ թէ կարծէի թո-
„ղուլ զաքսորեալ ոք, այլ կարծէի ես
„ինքն գնալ յաքսորս”: Օ այս գով
արժանի յիշատակաց պահեաց մեզ
Սենեքա. որ և գոչէ ընդ ամին:
„Բանիցն իցեն փառք Մարկեղոսի, որ
„յիւր աքսորս նախանձ արկ Բրուտոսի,
„և ամաչեցոյց զԿեսար: Նորկաքաջիւրն
ետուն

„Սուտն նմա վկայութիւն պանծալի”.

## Ճ. Համառօտ եղանակ մահուան Կատոնի՝ ըմբռնել գնոյցելոյ.

Այն ինչ Կեսար չոգաւ նուաճել զՈւտիկէ, որ չլինէր ինչ դիւրաւութիւն, եթէ Կատոնի գտեալ էր 'ի նմա սիրտս արիականս և պատրաստականս յիւր աջակցութիւն, յայնժամ Կատոն հնար հնարեալ, և յառաջն ժողովեալ զԵրեք հարիւրսն, այսինքն զամենայն մեծատուն վաճառականս, կամ զկապալառուս հռովմայեցին՝ որք էին յՈւտիկէ, յորոց կառուցեալ էր նորա որպէս թէ ազգ ինչ ծերակուտի՝ յորմէ հետէ մտեալ էր յայն քաղաք. Յետ բազում անցից և խօսից եբաց նոցա զմիտս իւր, որ հաստատեալ էր 'ի մեռանիլ. փոխան այսորիկ աղերս արկին նորա, զի թէ ինքեանք չէին հաւասար Կատոնի, և ոչ իմաստք իւրեանց վսեմականք քան զիւրն, գէթ լիցի կարեկից 'ի տկարութիւն իւրեանց. Այս 'ի վեր բերեն, թէ մեր հաստատեալ է 'ի միտս առաքել պատգամաւորս առ Կեսար, և յորդոր խոնարհիլ գթութեան նորա. Այլ մեր առաջին ի գլխաւոր

առաջ-

առաքեալ Հայցուածոց եղիցի Կատոն.
և թէ անկարանամք ընդունիլ ապահո-
վութիւն մեծին քո, չընդունիմք զշնորհն՝
զոր առաջի արարեալ մեզ, և ՚ի պա ե-
րաշխ ձեռնարկեմք յայնժամ ՚ի պաշտ-
պանութիւն քո ցյետին շունչ. Կատոն
վկայութիւն ետ շնորհ ունել զբարեսէր
կամաց նոցա, գովեաց զգիտումն՝ զոր
ունէին Հնազանդ լինել յաղթականին,
և յորդորեաց ես չյապաղել. բայց արգել
զի մի ինչ արասցեն զխուրմէ զորոյ: Կաէ.
,,Կարասելոց անկ է յաղոք խնմարհիլ, և
,,յանցաւորաց՝ խնդրել ներումն. Յիմէ
,,կողմանէ ես անյաղթ պատայ զամ ժա-
,,մանակս կենաց իմոց. և արդ իսկ եմ
,,յաղթական, զի ըղձանայի գէթ լինել
,,Յաղթանակեմ Կեսարու բարձրութե
,,արդարութեան և իրաւանց: Նա ինքն
,,է պարտեալ և նկուն. զի որ յամենայնի
,,ժխտեաց նենգել Հայրենեաց, այսօր
,,յայտնապէս դատաւ յանցաւոր արդ-
,,եամբք''.

Յետ ժամորիկ եմուտ ՚ի բաղանիս
և յետ բաղանեաց ընթրեաց նա բազ-
մութեամբ իւրոց ամենայն բարեկամաց և
իշխանաւորաց Ուտիկեայ: Յորոց ումն
՚ի մէջ արկ Հրաշագրոյն առածս փիլիսոփայ-

է միայն աղագ․ ամենայն հոգւոյ եւ մարմնոյ·
Սայոց բանից եւ յայլ սոյնպիսեաց՝ ամէն
յայտնի եղեւ թէ Պղատոն կամի դնել
զհոգւոյն, թէ եւ նա ծամածռէր այլսպէս
բանիւք սաստկացուցանել ՚ի նոցանէ զայս
հաստատուն կարծիս։ Ձի յետ բազում
խոսակցութեանց վասն այսր ընդ որդւոյ
իւրում եւ ընդ իւրոց բարեկամաց, իբրեւ
մեկնեցան նք եւ ինքն միայն մնայր յիւրում
սենեկի․ ՚ի ժամ հաւախօսի խնդրեալ
՚ի ստրկաց իւրոց զսուր իւր, եւ մերկեալ
զայն ՚ի պատենից․ եւ ածեալ ՚ի սայր
նր էր քաջուղղորդ եւ սուր, ասէ․ Արդ
տէր եմ անձին իմոյ։ Ապա խոցեաց զինքն նո-
նաւ վերք մի ՚ի ստորէ կրծոց․ բայց բը-
նութիւն հարուածոյն նուազեաց ՚ի սկա-
րութենէ ձեռին՝ որ դեռ էր այտուց-
եալ եւ ցաւագին․ Այլ ոչ մեռաւ իսկ
եւ իսկ, եւ թաւալեալ յիւրում մահճի
անկաւ ՚ի գետին, եւ յանկանելն իւրում
շրջեաց սղնակին մի, յոր ձեռաց նկարէր
դձեւս երկրաչափականութեան։ Ի թնդիւն
իւրոյ անկմանն ձիչ բարձին իւր ընտանիք.
եւ որդի իւր եւ բարեկամք ՚ի ներքս ըն-
թացան․ Գտին զնա թաւալեալ յիւրում
արեան, եւ աղիք նր յորովայնէ ՚ի դուրս
վայթեալ ընդ վիրաբերանն։ Բայց եւ
այնպ

այնմ դեռ կենդանի էր նա և տեսանէր. Մաղեաց վիրաբոյժն, և տեսեալ թէ աղիքն չէին ինչ վնասեալ, կամէր դարձուցանել 'ի ներքս, և կարել զվիրաբերանն. Բայց երբև զգաստացաւ Կատոն, և եհաս 'ի միտ' թէ զուն գործեն ողջել նմա, մերժեաց զվիրաբոյժն այնմ գազանաբար, զոր պատմել անգամ է սոսկալի. տարաւ զձեռսն 'ի վիրաբերանն' եբաց անդրէն, և պատառոտեալ զաղիսն' փչեաց զոգի.

Այսպէս եղև մահ Կատոնի' զոր ամենայն հինք ներբողեցին, այլ 'ի սկզբանց մերոց սրբ կրօնի դատապարտի. և բնաւն իսկ ոչ կարէ տալ այնմ հաւանութիւն. . . զի սպանութիւն անձին է յանցաւորութիւն.

Երբև ազդ եղև Կեսարու մահ Կատոնի, գոչեաց. Ով Կատոն. նախանձիմ ընդ փառս մահուդ քո, զի դու նախանձեցար ընդ փառս իմ ապրեցուցանելոյ զկեանս քո:

Ծնթ. Մասն ինչ յառաջաբանութենէ Կիկերոնի' զոր արար նա ազգաբանութեան առ Կեսարն, ներբողեսցէ յանցանաց Մեծարելոյն պարծուցանել զնա յաւերակաց.

Ես խոսիմ առ Հայր. Յանցաւորիմ
է եմ

եմ ես․ անմտութեամբ գործեցի․ արդ ՚ի քաղցրութիւն քո դիմեմ, և աղաչեմ ների ինձ․ Թէ չէր ուրուք շնորհս գտեալ ՚ի քէն յանդգնութ՟ լինէր արդեօք ՚ի խնդրուածս իմ։ Բայց թէ գթացար առ բազումս, ապա դու ինքն ես՝ որ զարթուցեր յիս զյոյս․ Հապա տուր ինձ վայելել ՚ի պտղոյ այտի․

ՃԸ․ Գեղեցիկ պատասխանի Կիկերոնի Գլխոյ Ճարտասանաց․

Կիկերոն սուգ առեալ վասն հայրենեաց ընդ երկար և դառնապէս՝ քան զմայր ՚ի վերայ միամօր որդւոյ՝ մխիթարեցաւ, և արկաւ ես զկուրեաւ փոքր մի յառաջին զուարթամտութէն․ Նա՝ երբեմն յիւր թուղթս ընդ խաղ արկանէր զիւր արդեան վիճակ․

Մին ՚ի բարեկամաց իւրոց՝ այր զուարթաբարոյ և քաջուսումն՝ ստգտանէր զնա, զի այլ ոչ նստէր ՚ի Հռովմ։ Պատասխանի ետ նմա Կիկերոն, „Ճանա-
„չես ուրեմն զինչ ը մէջ է իմոյ այժ-
„մեան վիճակի, և վիճակին՝ յոր երբեմն
„էի․ Նստէի ես երբեմն ՚ի խելս նաւին
„և ղեկավարէի․ այսօր հազիւ գտանեմ

,,տեղի 'ի յապատակաջուր նաւէն: Մործիցեն
,,թէ պակաս եղիցին խորհուրդք ծե-
,,րակուտականք. ցորչափ եմ 'ի Նէա-
,,պօլիս նստեցից. Մխուք ծերակուտին
,,ընկալին 'ի սենեկի անդ Կեսարու, և յոր-
,,ժամ յուշ լինի նոցա իմ անուն, լինի
,,ինչ յիշատակութիւն զինէն 'ի սուրբ
,,վճռոյն. և յոլովակի իմանամ, զի խոր-
,,հուրդ ինչ ծերակուտին յօրինեալ է
,,իմոց կարծեաց' եհաս 'ի Հայաստան
,,և 'ի Սիւրիա, մինչև լուեալ էր իմ
,,ասել ինչ զայսմ զերողութենէն' որ
,,վճռեցաւ".

Իւր աշակերտք հրաւիրէին զնա ստէպ ընթրել ընդ իւրեանս. և այն եր-կմա առիթ զբօսեցուցանելոյ զնոսա զո-ւարթութեամբք. ,,Նի յառաւելութեց
,,(ասէ) կոր ես քաղեմ յիմոց դասա-
,,տուութեանց առ մեր յաղթականս, են
,,փայելք փափկաճաշակ սեղանոց նոց.
,,Այնմ օրէ և այսր ճաշակեցի եսա-
,,ւելի սիրամարգս' քան դու ձագս ա-
,,ղաւնեաց. Յայժմ այլ չունին տեղի
,,գովեստքն' զոր սովոր էին երբեմն
,,բարբառել զինէն. ոչ դիւրամտութեան,
,,առնս. ոչ աններողացուցիչ հնարքս.
,,Ես ոչ եւս եմ այն իմաստասէր գոր-
,,ծունեայ,

„ծունեայ, որ կարծէք՝ թէ գլխովին
„պարապիլ ընդիմ ՚ի Հոգևոր իրողութեց
„Հասարակաց, և ՚ի ծառայութենէն իմոց
„քաղաքակցաց: Ա՛յլ ո՛չ Հոգամ, ո՛չ-
„պատրաստել զիս՝ զի՞նչ առնելոց իցեմ
„՚ի ծերակուտի; և ոչ ՚ի միտ ածանել
„զդատս: Արդ լեալ է իմ զխիստ բա-
„րեկական. և ածցեալ ՚ի բանակ Եպի-
„կուրոսի, որոյ ընդդէմ երբեմն վիճէի".

ՃԶ. Դաւաճանութիւն պատանւոյն Լեպի-
դոսի՝ իւր կնոջ Սերվիլեա.

Որդի Լեպիդոսի պատանին եռան-
դուն և բարկացող՝ արարեալ էր դա-
ւակցութիւն սպանանել զՕկտաւիանոս.
Յանդգնութիւն պատանւոյս դաւադրի
ոչ յապաղեաց բնաւ առ ՚ի մատնակարա-
րելոյ նմա զայնս: Որ կամէր այնու ըն-
պանութեամբք լինել քինահատոյց Հօր
իւրում ընկեցելոյ յաստիճանէ Հիւպա-
տոսութեան. Մեղապարտն կալանաւո-
րեցաւ, պարտաւորեցաւ և ՚ի մահ մա-
րեցաւ: Սերվիլիա կին նորա կամի ու-
ղեկից լինել ՚ի գերեզման փեսային կա-
թոգին սիրեցելոյ յիւրմէ, և յաչալուրջ
ապահպանութեան իւրոց ընտանեաց չու-
նելով

նելով նա ինչ երկաթ 'ի ձեռին, եւ հեղձամուղձ՝ կլանելով վառեալ կայծակունս։

Մայր դաւադրին Յունիա. քոյր Բրուտոսի ըմբռնեցաւ 'ի փուրչէշ անդր յանցաւորութեան որդւոյ իւրոյ. եւ Մեկենաս կամէր առաքել զնա առ Ոկտովիանոս՝ զի դատեսցի 'ի նմանէ. կմ̃ զէթ կամք էին նորա, զի այս կին տացէ երաշխաւորութիւն, թէ յանդիման լինիլ ունի՝ երբ և խնդրեսցի։ Ո՛ր է այս 'ի մեծաց օրինակաց յեղափոխութեան և յողդողդութեան մարդկային իրողութ̃ց։ Հիւպատոսն՝ որոյ առաջի ընծայեցաւ այս դէպ, և որ հրամայել ունէր իշխանաւոր՝ էր տարագիր ամ̃ն, զոր Ոպպիանոս անուանէ Բալբինոս։ Լեպիդոս ծեր՝ երբեմն մի յերից հրամանատարաց տարագրութ̃, ետես զանձն բռնադատեալ յաղերս պաշտպանութեան այսր հիւպատոսի. զի իւր յարգ այնպէս անկեալ էր, և այնմ̃ 'ի մոռացօնս եղեալ, մինչև չգտանել զոք՝ որ յանձն առնուցու երաշխաւորել վն̃ կենդ̃նի։ Այս յանդիման եղև յոլովակի առ դրան Բալբինոսի՝ այլ ոչ կարողացաւ մուտ առնել. զի իբրև կամէր մատչիլ յատեան նորա, դա-

հիճք

հիձք ՚ի բաց վանէին զնա։ Յուսկ ուրեմն եմուտ նա և խօսեցաւ ընդ Բաղբինոսի համառօտիւ զայս։ „Մատուցանողք իմ „ճանաչեն զիմ անմեղութի, և ոչ ստգտա-„նեն զիս՝ մեղսակից լինել կնոջ իմոյ և „որդւոյ իմոյ։ Իսկ ՚ի քո կողմանէ, ո՞չ ես „ինքն էի՝ որ զքեզ տարագրեցի. և արդ „տեսանեմ զիս առ ժամս ստորև քան „զքեզ՝ զոր ես ինքն տարագրեցի եր-„բեմն. Այս յուշ լիցին քեզ յեղափո-„խութիւնք բախտի՝ որոց մարդիկ են „ներքոյ անկեալ։ Հայեաց ՚ի Սեպտիմոս՝ „որ քո առաջի անկեալ աղաչէ, և դո-„րովեալ ՚ի տեսարանէս, կամ ընկալ „զիս յերաշխի մն իմոյ հարսին, կամ „առաքեա զիս ընդ նմա ձեռօք և ոտիւք „կապեալովք առ Կեսար"։ Հիւպատոսին դալարեցան աչք. և զերծ արար զՅու-նիա ՚ի պարտաւորութենէ տալոյ զոք յերաշխի։

ԺԷ. Օգտակարութիւն և երկարատևութիւն Սենեկոնի։

Պժդմնութիւն Սենեկոնի ընդ-դէմ եռապետական դաշնակցութեան էր ծայրագոյն։ Այս հարկիւ հովացու-ցանէր

ցանէր զսիրտ իւր անպիտան ողջունիւք, զոր հաստուցանէր առ Մատիկոս յամենայն Թուղթս իւր։ Սա դու տես, որով օրինակաւ խօսի Կիկերոն 'ի մի իւրացս ընդ նմա։ ,,Գնալ յառաջ՝ ասէ, է դի-
,,մել 'ի գահավիժութիւն. յետս ընկրկել
,,է յողդողդութիւն. Արդար Թշնամացեալ է
,,բարեաց, և չէ իսկ սիրելի վատթարց.
,,Տեսէք, քանիօն իցէ իմ տկարութիւն.
,,ոչ կարէի ժուժալ 'ի լալոյ, 'ի տեսա-
,,նել իմում Թէ չէ յորդոր ակնկալուե՝
,,այլ ցաւոց, տեսանել զկեղուս մերոց
,,քաղաքացւոց աղատս, և զբազուկս նց
,,'ի շղթայս. Հասարակապետութիւնն
,,(ասէ) դիմեալ երթայ 'ի մահ՝ յախտէ
,,ինչ, որպ չիք նմանակ. Մ. յժմեան
,,կառավարութիւն յինքն առարկանէ
,,զանհաւանութիւն, զդանդատ և զտըր-
,,տունջ ամ ծլ. Այսմ չիք խտիր.
,,խօսին զնմանէ բարձրաձայն. յոգւոց
,,հանեն յայտնապէս. բայց չկայ ոք՝ որ
,,դեղ մատուցանէ այնց չարեաց յորոց
,,նեղիմքս''։ Հրաժարեցայ բոլորովին 'ի հոգւոց հրապարակական իրողութեանց. ոչ գտանեմ առաջինկայ 'ի կշռութեան իրիք, այլ ետու զանձն իմ բոլորովին 'ի խորհել զդատս։ ,,Ո՛չ տաղտկացեալ եմ,
,,'է

,, 'ի կենացս՝ տեսեր զայն խակեալ Թըշ-
,, ուառութն. չկայ յաշխարհի այլ քան զիս
,, Թշուառ ։ Օլի առ Պոմպէոս դերա-
սանեն. Այս ձեր դձճախարանեն Սնծայրը
դասն. Իրը այս, Թէ եղեայե օր՝ յորում լոյ-
ցեր դասնալէր լայտ արուսնեան խոյուսնեան,
որ եղն ցայս վայր խեղ 'է փառս, և արդ
լխանէ ղխեղ. Կիկերոնի տեսեալ՝ Թէ զամ
քան զգամ վտանգք Ճշդրտէին, փութա-
ցուցանէր զՍտոիկոս զալ առ ինքն ։
Նաէ.,, Թէ սիրես զիս՝ ով՛ ստուգութ՟ իսկ
,, սիրես, ցոյց զայդ՝ փութանակի եկա-
,, սորութ՟ առիս ։ Ոչէ ննջես՝ զարթիր.
,, Թէ արթուն ես՝ ել 'ի Ճանապարհ.
,, Թէ 'ի Ճանապարհի ես՝ ընթա՛. Թէ ըն-
,, թանաս՝ ո՛չ շատ է այդ, և թռի՛ր ։ Նէ
,, գիտես՝ քանի՞ յուսացեալ եմ 'ի քոյդ
,, խորհուրդ, 'ի քոյդ խոհեմութի, և ես
,, առաւել 'ի քոյդ բարեկամութիւն, և
,, 'ի հաւատարմութիւն''.

Ճն. Բան Պղեփինեայ առ Ս. Այզետոսը.

Պղոգինէս փիլիսոփայն չունէր իւր մասնաւոր տուն բնակութեան, այլ դտեալ կարաս մի մեծ անդ բնակէր.

Եկն

Նոյն երբեմն մեծն Աղեքսանդր, եկաց առ բերան կարասին՝ և տեսեալ զնա յայն յետին թշուառութե̄, ասէ. Դիոգինէ, եթէ ունիս պէտս ինչ իրաց, խնդրեա յինէն։ Եւ պատասխանի Դիոգինէս. Շատ է ինձ, եթէ 'ի բաց մեկնեսցիս այտի, և մի խափանեսցես զլոյս արեգական, զոր ոչ կարես տալ ինձ։ Որով յայտնի եցոյց զազնուականութի̄ իմաստից գիտութեան, յոր 'ի նմին ժամու պարապէր. առ որով ամ̄ պերճութիւնք և ճոխութիւնք ծ̄ի առ ոչինչ են համարելի։

ՃԴ. Պարծեալ Դիոգինէս համբակ տեսանելով ստահակեալ զմանկածուն եհար զաւազանաւ, ասելով. ընդէ՞ր այդպէս դաստիարակես։ Որով ուսոյց թէ յոռութի̄ համբակաց դաստիարակին է յանցանք, որ հեղգանայ խրատել զնո̄ս։

ՃԵ. Հարցին ց'Դիմոկրատէս փիլիսոփայն, թէ ընդէ՞ր միշտ ծիծաղիս 'ի հրապարակս։ Ասաց. ծիծաղիմ 'ի վերայ անմտութեանց մարդկան, որք թողեալ զկարեւոր և զշահեկան գործ իւրեանց, զհետ ունայնից լինին. որով և ծաղու արժանի են։

ՃԶ.

ԾԷ. Աստրուբաղին եւ [illegible] 'ի [illegible] [illegible] փառաց։

Ներոն եւ Լիվիոս Հիւպատոսք այն ինչ սպառսպուռ խորտակեցին զբանակ Աստրուբաղայ եղբօր մեծին Աննիբաղայ, յորում սպանաւ եւ ինքն Աստրուբաղ, խնդրեցին 'ի Ծերակուտէն, զի հրաման տացի նոցա մտանել յաղթանակաւ 'ի քաղաքն։ Պատասխանի ետուն միաբանութ̃բ ծերունիքն. „Անպատում „խնդութ̃բ շնորհեմք ձեզ զհայցուածդ „մ̃ն մեծի շնորհապարտութեան մերոյ „առ ձեզ 'ի նորանշան յայս յաջողուած, „զոր ճանաչէ Հռովմ նախ 'ի խնամոց „դից, երկրորդ' 'ի քաջութենէ եւ 'ի „խոհականութ̃է իւրոց հիւպատոսաց"։ Բայց սահմանեցին' զի Լիվիոս մտցէ 'ի Հռովմ քառաձի կառօք, եւ ուղեկցութեամբ զօրուն. եւ Ներոն լոկով երիվարաւ առանց ինչ ուղեկցութեան։

Պատուորեալ այսու օրինակ զկարգ յաղթանակին' յաւել զփառս երկաքանչիւր հիւպատոսաց. բայց առաւել̃զ զնորայն' որ վերադոյն գոլով արդեամբք տայր ազնուաբարոյութ̃ զպատիւ' իւրում իշխանակցի։ Ասան այսորիկ ամ̃

գո

գովեստք 'ի Ներոն յանգէին: Սանէին.
,,Ներբեալն մեկնականի անհանգէս և
,,անուշեկից, անց 'ի վեց աւուրս ծագէ
,,'ի ծագ Իտալիոյ, և մարտեաւ 'ի Գաղ-
,,ղիա ընդ Ասդրուբալայ՝ 'ի ժամանակի
,,յորժամ Աննիբաղ կարծէր զնա բա-
,,նակեալ մօտ իւր յԱպուլիա: Այսու
,,օրինակաւ մի միայն հիւպատոս 'ի միում
,,աւուր, և յերկուս ծագս Իտալիոյ ե-
,,կաց ախոյեան ընդդէմ երկուց ահեղ
,,թշնամեաց հասարակապետութեան,
,,դիմակալեալ միում 'ի նոցանէ իւրով
,,խոհականութեամբ, և միւսումն իւ-
,,րական անձամբ: Աստի՝ անուն միայն
,,Ներոնի եղև բաւական սանձարկու
,,լինել Աննիբաղայ. անտի՝ ո՛ երկուա-
,,նայցէ զպարտութեան Ասդրուբալայ
,,ընծայել օժանդակութե Ներոնի, որ
,,իւրով երագ և անակնկալ եկաւորաւն
,,ապշեցոյց զզօրավարն կարքեդոնեան,
,,և ջնջեաց: Այլ կարօղ է Լիվիոս
,,թէ ախորժէ, բաղմել 'ի կառս՝ ևս
,,շքեղապանծս, և լծել ամոլս բաղմա-
,,գոյն եւս երիվարաց. այդ միակ երի-
,,վար է որ բառնայ յուս իւր զճշմարիտ
,,Յաղթականն: Ներոն՝ թէպէտ և զայս
,,հետի, յիշատակ իւր է անջնջելի,
,,եթէ

„եթէ վասն փառացն զոր ստացաւ 'ի
„մարտի պատերազմի. և եթէ վասն արհա-
„մարհելոյ նր զպատիւ յաղթանակի''.

Այսպիսի եղեն զրոյցք ժողովրդեան
'ի վր Ներոնի, մինչև 'ի հասանել նորա
'ի կապիտոլիոն. և չէր ոք 'ի Ճանապարհի,
որ չէր ակնկառոյց 'ի նա.

ՃԹ. Օրէնք Հռովմայ 'ի Հռովմայ արտաքս հան-
լեալ Հռովմայ առանց զոմն ժողով չեղև:

Հռովմ ձգէր 'ի հեռաստան ոչ
միայն զիւր զէնս՝ այլև զիւր օրէնս:
Գեղեցիկ օրինակ, մանաւանդ թէ տէ-
րութիւն բազում ինքն վերադասէ քան
զՃանապարհ զինուց: Օ՛ի զէնք 'ի վար
արկեալ զՃանպրհ բռնութեան՝ հնա-
զանդեն միայն զմարմին. իսկ օրէնք շա-
հին զմիտս հասարակաց. և արդարև
իշխան ոք յորժամ առաքեսցի 'ի քաղաք
ինչ տէրութեան՝ ուր ոչինչ յայլ պէտս
վարէ զիւր իշխանութիւն, բայց 'ի հաս-
տատել անդանօր զբարեկարգութիւն,
զխաղաղութիւն, զարդարութիւն, և 'ի
յարդարել զքաղաքացիս երջանիկս, ահա
այս հայի ամենեցունց կամաւորութի.

Աշ—

ՃԺ. Ա — խորհրդոյ յաղագս մեծագոյն չարէ՝ հարկ է պատճել զհետագոյն ներքնոյ չարն։

Օ Զօրագլուխ (դու ես՝ ամենայն իշխանաց և տերանց) արժան է կարել և 'ի բաց ընկենուլ զանդամ ինչ խոր խայթեալ՝ առ ապրեցուցանելոյ զբովանդակ մարմնոյն։ Նա Պղատոնի՝ զոր 'ի մէջ բերէ Սենեքա, այր խոհեմ ոչ պատժէ սոսկապէս վասն այսորիկ, զի գործեցաւ յանցանքն. վասն զի յանցելոյն չի՛ք դառ յուղղութիւն. այլ զի այլ մի ևս յանցանք ինչ լինիցին առ յապայ։ Նա զայս պատուիրէ օրինակ պատժոյն, խափան արկեալ այլոց՝ չանկանել յայնպիսի ախտս։

ՃԺԱ. Իշխան հանճարեղ ոչ հրաժարէ 'ի խելօք կարծեաց հնազանդելոյն, այլ այնա-ռժամայնի ոչ զիւրն պնդել առանձնայն։

Իմաստուն առաջնորդ ոչ մերժէ զպատճառ հպատակին յորժամ իրաւացի են, բայց և ոչ փաղփաղակի փոխէ զհրամանն։ Եթէ կարիցէ բառնալ հնարաւորութեամբ իւիք զխոչընդակս կա-

կատարման հրամանին։ Ուսումն իշխանաց և ծով առաջնորդաց է, մի՛ անընտրողաբար պնդիլ 'ի հրամանս իւրեանց՝ ոչինչ հայեցեալ 'ի դժուարութիւնս՝ որք ընդառաջ ելանեն՝ այլ իմաստութեամբ խորհիլ հնարս հեռացուցանելոյ զարգելսն՝ եթէ կարիցեն, զի չեն ամենակարող առնել զոր կամիցին։

ՃԺԸ. Այլ առ Պլուտոս՝ չափ է կարգալ,
զի նորա է տալ և բառնալ
Պարգևէ կեանս և ճոխութիւն,
այլ յինէն է իմաստութիւն։

Առակ։

ՃԺԹ. Աշխարհակալութիւն Անտիոքայ Մեծի
ընդդիմութիւն 'ի Հռովմ։

Յանկ ել պատերազմն Անտիոքոսի, որ չէր ինչ երկայնատև. Անկայն յաղթութիւնս միանգամայն առթեցին յայլմէ կողմանէ խանգարումն և կործանումն նորա ինքնակալութեան. սպրդեցուցին 'ի Հռովմ ընդ ճոխութեանն զոր եմոյծ անդր՝ զճաշակ զեղխութեան, փափկութեան և դրգանաց։ Ասեն զի 'ի ժամանակս

մեծապէս այսր յաղթութեան եղելոյ 'ի վերայ Անտիոքայ, և այսր աշխարհակալութեան Ասիոյ՝ արկանէ Պլինիոս զդա ապականութեան քարոզ հասարակապետութեանն Հռովմէականի, և զշարաչար յեղափոխութեան եղելոյ 'ի նմա. Ասիոյ պարտեալ զինուորք Հռովմայեցւոց, իւրովք մոլութեամբք յաղթեցին Հռովմայ. Տարաշխարհիկ ճոխութիւնք չէջուցին զսէր աղքատութեան, և զհանդինի անպաճոյճ զնացս՝ որք էին նոր պարծանք և զօրութ։ Զեղխութիւն՝ որ իբր յաղթանակաւ եմուտ 'ի Հռովմ շքեղապանծ աւարօք Ասիոյ, զհետ ձգեալ զամ՟ անկարգութիւնս և զյանցուածս՝ արար 'ի նմա կոտորած մեծ, զոր չէին ձեռնհաս առնել զօրք քաջամարտիկք. և այնպէս եհան զվրէժ քինու տիեզերացն ամենայն, որ 'ի նըմանէ պարտեալ նկուն գտան:

ՃԺԴ. Պարտ է զօրաց ընդունել շահատակել, և ոչ պճնապաճոյճ կանանց խեշերանօք շռայլել.

Զօրականի չէ պարտ փողփողել ոսկւով և արծաթով, այլ զարդ նորա պարտի լինել երկաթ և ոյժ. ոսկի և արծաթ

արծաթ ոչ օգնեն 'ի պատերազմի, այլ են յաւէտ փարթամ կողոպուտ թշնամւոյն։ Շողշողեն յառաջ քան զմտել մարտի, այլ 'ի կռուի անդ՝ յարեան ծապաղին՝ կորուսանեն զամենայն փայլուն։ Ճշմարիտ զարդք զօրականի՝ է իւր քաջասրտութիւն։ Նա մեծաշուք վայելչութիւն հետևանաց յաղթութեան. և աղքատիկ յաղթականին՝ որս է ընչեղ թշնամին.

ԾԺԵ. Պատերազմն է ագահութեան մանաւանդ յորս եղբայրութիւն։

Ագահութիւնն է ամօթալի քան զամենայն մոլութիւն, մանաւանդ յայնժամ որում յանձն է կառավարութիւն հասարակապետութեան. և թէ՝ զայնմիկ ազնուական գործաւորութիւն յեղանակել 'ի շահավաճառ և 'ի հնար ծախանակի ոչ միայն ամօթալի է յոյժ, այլ և ապիրատ և մեղուցիչ քան զամ ինչ։ Կիկերոն.

ԾԺԶ. Օրէնք եղբարց են եղբարցն՝ ապագայ որոց չեղբարն տանել ինչ։

Իշխանաւոր որք 'ի պաշտաման իւր հաճիցի ունել ազատութիւն, առնել զամ

զինչ և կամիցի ։ Իսկ զինչ լինիցի այն իմաստ սքանչելի ուստի էր յեղյեղեալ, Թէ ՚ի կարգել տէրութեան կամ հաստա_ կայնութեան զոր դնէր ։ Ո՛չ զխոսքն ՚ի նա Թողու զնորին իշխանութիւն, այլ հաւատայ զայն որպէս աւանդ, յորոյ սակս ունի տալ պատասխանի ։ Պարտ է նմա խորհուրդ հարցանել ՚ի գործածութեան իւրոյ պաշտաման, ոչ իւրում յօժա_ րութեան, այլ՝ անջրելի կանոնի իւրոյ պարտաւորութեան ։ Թէպէտ և չիցեն առ նմա, ոչ աԹոռակիցք և ոչ վկայք. այլ կարծեսցէ զանձն լինել միայն ընդ միայն, այլ հայեսցի զկնի յօրէնս, ՚ի կրօն, յուղղութիւն և ՚ի հաւատար_ մութիւն՝ որպէս ՚ի մի մի աԹոռակիցս. որք դատեն ընդ իւր, և որք դատել ունին և զնա ինքն. ՚ի վերայ ամենայնի ունին դնել և ակնածել զաղտաձայն բարբառոյ խղճի մտաց, զոր անհնար է երբէք հեղձուցանել իսպառ ։ Կիկերոն ։

ՃԺԵ. Զի՞ պարտ խնայել յինչ էր մինչև ՚ի չէանն
եւկ յաղագս հայրենեաց ։

Մաէ Կիկերոն, երկնչիմ ՚ի նա_ խանձուէ, և փափաքիմ հանդարտեան խա_

քաղաքական և առանձնաւոր կենաց։

Ո՛վ ես նմա, դու չես ծնեալ վասն քո, ծնեալ ես վասն հայրենեաց՝ որում պարտապան ես օգնել 'ի կարիս իւր․ և Թէպէտ և մահու գիտիցես 'ի ծառայութեան նոր՝ չունիս մնալ հրամանի որհասին, այլ ընդ առաջ երթալ և արհամարհել զվտանգս։

ՃԺԸ. Աշխարհն և քաղաքներն հաքին ոչ դադարեն յառաջադիմանալոյ, մինչև կարծէ իւր մարմինն իւր ծերանալ։

Ուռամեալ հասակն ոչ առնէ զծերս՝ անպիտանս օգնելոյ հայրենեաց. զի ոչ են Թէ կորովութեամբ և երագութեամբ մարմնոյ լինի առաջնորդութիւն երևելի իրողութեանց, այլ՝ զգօնութեամբ, ուղիղ դատմամբ և իմաստուն խորհրդովք հիմնեալովք երկարաւոր փորձ. այս նպաստք են, զորս ծերութիւն առաւելու և զօրացուցանէ, և ոչ Թէ նուազէ. զումմէ՞ կախեալ կայցէ բարիոք առաջնորդութիւն նաւի․ մի Թէ 'ի մանկտւոյն նաւին, որք վազվազին և ելանեն և իջանեն, և անդ դը Հարժեն; Թէ 'ի հմտութենէ ղեկավարին,

.Թ որ

որ հանդարտիկ նստեալ յիւրում կայի վարէ զգեակն։ Աքերոն։

ՃԺԹ. Ատտիլեայն Ռեգուլոս է աղքատաւոր, որ աստաւել տան զայն չէր եւր դարձեալ վերադարձաւ։

—ուեգուլոս էր առ ժամն պատաղեալ 'ի սերմանել զիւր անդաստանս, յորժամ ապաստաւորք ծերակուտին եկին իմացուցանել նմա զընտրութիւն իւր 'ի հիւպատոսութիւն։ Ով երջանիկ ժամանակացս․ յորում աղքատութին էր այսպէս 'ի պատուոյ ի, եւ երթային առնուլ զհիւպատոս յարօրադրութենէ։ Զեոք վապարեալք 'ի դեղջուկ աշխատութեանց էին հաստարանք պետութեան․ եւ ըն-պառսպուռ կոտորէին զբազմահոյլ զօրս թշնամեաց։ Նոյն մեր աղքատ զօրավար, եւ զօրավար աղքատ յետ յաղթութեանց իւրոց 'ի ծովու Կարքեդոնացւոց եւ 'ի ցամաքի քղաց Ափրիկոյ մնաց յԱփրիկէ որպէս փոխանորդ հիւպատոսի, եւ իշխանակից նորա դարձաւ 'ի Հռոմ․ մայն եւ ծերակուտին ոչ բարւոք թուեցաւ կոչել յԱփրիկոյ զՌեգուլոս ; եւ խափանել զյառաջատութիւն իւրոց յաղթու-

թութեանց, այլ հաստատեաց զնա հրա-
մանատար զօրուն։ Ոչ ոք այնպէս զը-
ժուարացաւ ընդ այն վճիռ, որպէս նա
ինքն՝ որոյ էր 'ի պարծանս Գործոց առ
ծերակոյտն զանգատ, և խնդրէր 'ի նը-
մանէ յաջորդ։ Ի միւրոց պատճառաց
էր, թէ. Այր մի ասօրէայ վարձկանն՝ տա-
րեալ գալով 'ի մահուան անդեռեն իմոյ՝ որ մշա-
կէր զիմ փոքրիկ անդաստան եօթնեակ չափա-
րայ, փախեաւ, տանել ընդ իւր զամենայն
զգեղջկական գործիս։ Հարկ է ինձ անդ լինել.
եղկոլեցեալ՝ ըզ 'ի ձեռն անդաստանին անգործ,
ի՞ւ անասցանիցեմ զկին իմ և զորդիս։ Ծե-
րակոյտն հրամայեաց՝ զի անդաստանն մը-
շակեսցէ ծախիւք հասարակաց, և զի գնեսցեն
անդրէն գեղջկական գործիսն գողացեալս. և
զի հասարակապետութեանն յետ վերայ առցէ
զընտանիս և զաւակս նորա և որդւոյն Հռե-
գուլոսի։ Այսու օրինակ ժողովուրդն
հռովմէական եղև Ը իրաց ինչ անտես
Հռեգուլոսի։ Նիւրացնոյ գնեաց զանձ
հասարակաց զայսպիսի անգիւտ օրինակ
առաքինութեան, որ պարծանք եղև
Հռովմայ Ը ամ դարս առ յապայ։

Ով սքանչելի պարզմտութեան
յաղթականին Կարքեդոնացւոցն թե-
քես լցէ ոք՝ որ գեղջկութի կոչիցէ։

ՈՎ

Ո՜վ ազնուաբարոյութեան նր, և մեծ-անձնութե՛ն: Զգիտեմ, յո՛ր վայր արժան իցէ առաւել սքանչանալ է նա․ արդ-դեօք 'ի գլուխ զօրուն 'ի յաղթել թըշ-նամեաց պետութեան, եթէ 'ի գլուխ իւրոյ վաստակակցաց՝ 'ի մշակել դիւ-րին զիւր անդաստան․ Յայսմանէ ճանաչի որչափ ճշմարիտ որդիւնք 'ի վեր են քան զճոխութիւն: Վարձանք Հռեգուլոսի դեռ կան․ զի զյարգ նր ո՛վ կարէ ժխտել: Բարիք մեծահարուստ ճոխացելոցն կո-րնչին ընդ նոսին, բազում անգամ և յառաջ քան զնոսա։

## ՃԻ. Զեղխութիւն Հռովմայ զրոյց էր պար-ատաղէ 'ի բերանս ամենեցուն:

Այնքան տիրեալ էր զեղխութի՛ Հռովմայեցւոց, մինչև գրգութիւն և որկորստութիւն համարէին հնար լը-նուլ զթերրին օրինաց․ Զայս զեկուցանէ մեզ Կիկերոն 'ի միումն 'ի թղթոց, ուր պատմէ անկեղծ և ախորժաբար զայն՝ որ դիպեալ էր նմա 'ի կոչունս ինչ պատ-րաստեալ 'ի Լենտուլոսէ Սպենթերայ՝ վասն հասանելոյ որդւոյ իւրոյ 'ի պա-տիւ հաւահմայից․ „Օրէնք (ասէ) մե-„ռա-

„րաբերեալք ՚ի ծախս՝ որոց պա՛րտ էր
„՚ի ներքս ածել խոշորակեաց կեանս.
„արարին ինձ մեծ վնաս: Սակս զի ո-
„րովհետև այս օրէնք խիստք ՚ի վե՛ր
„այլոց ա՛մի, թողուն լինել ազատուե
„՚ի վե՛ր ա՛մ ընդեղինաց և բերոց երկրի,
„մեր փափկասէրք այնպէս դիրգ հա-
„մեմեն դսունկս, զարմասս և զա՛մ ազգ-
„բանջարոյ, մինչև չիք ինչ յ՟ի քան
„զայնս ախորժաճաշակ և համեղ:
„Խաբեցայ ես ճաշակել յայնց ՚ի կո-
„չունս Ենտուլոսի, և իմ անժուժ-
„կալուի պատժեցայ ՚ի ծանր խօթուէ,
„որ տևեաց աւելի քան զաւուրս տասն.
„Նու այսպէս՝ որ դիւրաւ ժուժկալէի
„յոստրէից և ՚ի մուռինայից, խաբեցայ
„՚ի ճակնդեղէ և ՚ի մոլոշէ. բայց արդ
„ուսայ, և այլ անգամ առաւել ևս
„զգուշացայց”.

### ՃԻԱ. ՅԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ ԶԱՒԱԿԱՑ ՆԱԽԱՊԱՏԻՒՔ ԵՆ ՀԱՐՑ.

Պարծանք Հարց՝ բեռն լինին որդւոց, յորժամ ո՛չ համանմանին սոքա նցա յարդիւնս. և ոչինչ իմիք են պիտանի՝ բայց առ առաւել յայտնուլ մոլութեանց նց,

նոցա, և առ առնելոյ զնոսա նովին իսկ պայծառութեն առաւել ևս արհամարհս. Ազգականք և բարեկամք բառնան 'ի նմանէ՝ զմատանին՝ և զանուն հօր իւրոյ. իբր զի գնացիւք իւրովք անշքացուցանէ զկիշտն և զանուն առն մեծի: Իմաստուն որդի լինելոյ է երկրորդ լոյս տան՝ և հայրենեաց:

ՃԻԲ. Աշխարհինութեանն անշօշափող կենդանեաց՝ կանչ է անձայն իւրոց օտարացելոց:

Երջանիկ պետութիւն, երջանիկ առաջնորդութիւն. ուր առաքինութի առ հասարակ է 'ի յարգի և 'ի պատուի ուր գլխովին ճանաչի յարգ նոցա.... Օտեղի առեալ յիմում յառաջարկութեան, խօսիմ զառաքինութենէ՝ որ անպաճոյճն է և ցածուն և անփառացի. որ ոչն շլանայ 'ի փայլմանէ ոսկւոյ և արծաթոյ, որ անդոսնէ զամ ինչ, զորոյ ամ ոք տարփմամբ զհետ երթայ, և զոր ամ ոք գովէ:

ծիգ. Կուինտիոս [illegible] ոչ կարացեալ ազատել 'ի դատապարտութենէ զԿեսոն որդի իւր, [illegible] յանդաստանն։ Ուստի ամենայն յարօրադրութենէ 'ի հեռացեալ է։

Ո՛րչափ [illegible] անձնեղծանոր [illegible]։

Յորժամ ծերակոյտն Հռովմէյական և գլխաւորք քաղաքին ընտրեցին հիւպատոս զԿուինտիոս Կինկիննատոս և իբրև հաստատեցաւ ընտրութիւնն՝ պատգամաւորս առաքեաց ծերակոյտն առ Կուինտիոս, հրաւիրեալ զնա գալ առնուլ զիւր իշխանական պաշտօն։ Ի՛բր նա պատահեալ յայնժամ 'ի մշակութեան իւրոյ կալուածոյ. և նա ինքն վարէր յլուծն, ձորձ զիւրև ունելով յերիկամանց մինչ 'ի ծունկս, և աղքատին գըլխարկ 'ի գլուխ։ Իբրև ետես զի գային առ նա պատգամաւորքն, ոտնակառեաց զիւր եզինս՝ զարմացեալ ընդ խուժան ժողովրդեան, ոչ գիտելով թէ զինչ իրք իցեն։ Ա՛ռ ամն յընկերութենէն յառաջեաց, և ազդ արար զգենուլ ինչ պարկեշտագոյն։ Մատեալ նորա 'ի հիւղ իւր՝ ճարկ զիւրև զիւր հանդերձս, և եւ

ընդ

ընդ առաջ նոցա որք սպասեալ մնա-
յին նմա: Նոքէն վաղվաղակի եսուն
զաւետիս իւրոյ հիւպատոսութեան, և
արկին զնովաւ ծիրանիս. դահիճք դա-
սեցան զառաջեաւ նորա իւրեանց իբր-
ծամբք 'ի սպասահարկութիւն հրամանաց
նր̄, և աղաչեցին զնա գալ 'ի Հռովմ:
Ընդ այն տեսիլ խռովեալ նորա և
ցաւագնեալ՝ լռեաց վայր մի, հեղլով
յորդ արտասուս յաչաց: Յետ այսորիկ
բացեալ զբերանն՝ խօսեցաւ զայս միայն:
Որէ՞ն իմ անպարտ ոչ արժանեացի այս առ:
Այս կնոջ իւրում ողջոյն հրաժարական,
և յանձն արարեալ նմա զհոգ ընտանի
իրողութեանց՝ յուղի անկաւ գնալ 'ի
քաղաք:

Ո՜վ երջանիկ ժամանակացս, և ըս-
քանչելի պարզմտութեան: Աղքատութի̄
չէր յայնժամ առ հասարակ 'ի վար
արկեալ, բայց և այնպէս յայս ամ̄ն
էր մեծարգի. և չքաւորութիւն չէր
համարեալ խոչ՝ աւագամեծար իշխա-
նութեանց պետութեան: Գնացք՝ զոր
կալաւ Կուինտիոս յիւրում հիւպա-
տոսութեան, քաջ իմացուցանեն մեզ՝
որպիսի ազնուականութիւն, քաջասըր-
տութիւն, և մեծ համեստութիւն ծածկեալ
կային

կային ընդ անարգ և աղքատին հիւղիւ։

Այսպիսւոյ խաղաղական կառավարութեան անմասն էր լինել առանց մեծի գովութեան. վասն այսորիկ ոչ պակասեաց ժողովուրդն ՚ի վկայելոյ՝ թէ ո՛միւ հա՛ճ էր և հաւան։ Բայց ՚ի վեր քան զա՟մ՝ զորմանիք կալաւ զն՟ո, իբրև տեսին՝ զի ՚ի լրանալ ժամանակի իւրոյ պաշտաման՝ Կուինտիոս այնչափ արիաբար հրաժարեց՟ ՚ի վերստին հաստատելոյ յայնմ, որչափ դժուարութիւն ցուցեալ էր նորա յընդունելութեան նորուն։

Գովութեամբ և օրհնութեամբ առլցեալ, մեծարգի լեալ և սիրեալ և սիրելի յաչս իւրոց քաղաքացւոց, մերկացաւ Կուինտիոս ուրախութեամբ զծիրանիսն, և վաղվաղ՚ի՟ դառնալ յիւր եզինս, յիւր արօր, և յիւր խրճիթ. ուր որպէս յառաջին՝ եկեաց վաստակօք ձեռռաց իւրոց։

Համարեցի՟ն թերևս իւիք նուաղեալ պերճանիք Կուինտիոսի Կարո՛ղ ի՟նչիցեն գալ ՚ի կշռութիւն բազմհարուստ ճոխութիւնք, հոյակապ ապարանք, և մեծագանձ սպասահարկութիւնք. ընդ աղքատին հիւղ, և ընդ գեղջուկ կահ

մե-

մտրումն մեծանուն մանձակալի. Ո՞չ շար-
Թուցանիցեն 'ի սիրտ ականատեսաց ըն-
նոյն իմաստ յարգել, զոր ազդէ վերծա-
նողին՝ լոկ ընթերցումն պատմութեան
Կուինտիոսի: Ո՞ շլացի նմա շյարդ և
զզարմանս, Թէպէտ և սիրօղ ոք իցէ ու-
նայնութեան և պերճութեան: Ապա
խոստովանելի է, Թէ էր արդարև մեծ
ինչ և ազնուական և արգոյ 'ի գնացս
հռովմայեցւոյս.

Քանի՞ երջանիկ իցէ պետութիւն
ինչ կամ գաւառ, կամ քաղաք, որոյ
կառավարք դէթ փոքու իմն նմանօղ
գտանիցին իմաստից՝ զոր 'ի Կուինտիոս
տեսեալ զարմանան: Անյողդողդ արիու-
Թիւն 'ի պահել զբարեկարգութիւն և
զկանոնս, խառնեալ ընդ քաղցրութեան՝
որ ամոքէ զսիրտ ժողովրդոց: Սքանչելի
արուեստ և զգօնութիւն 'ի ճանաչել
և յուղղել զայլս: Գնացք միօրինակ՝
միշտ կանոնաւորեալ 'ի բանէ, և ոչ եր-
բէք 'ի միտելոյ բնաւորութեան, կամ
հաճոյից քմաց: Սէր հասարակաց օգտի՝
յաղթական ա̃մ առանձնաւոր կրից:
Հանրական անշահասիրութիւն, որ ոչ
իւիք զառածանի: Անխոնջ պատաղումն
մ'ոչս վաստակոց և յիւր պարտաւորու-
Թիւնս:

թիւն։ Անխոտոր հաստատութիւն 'ի մատակարարութեան արդարութեան, և 'ի վեր քան զամ՝ նախանձ գործովական և ազդու 'ի պաշտպանութիւն աղքատաց և տառապելոց՝ յանիրաւի նեղելոց։ Կուինտիոս այսպիսեօք գերապանծ և գժուարագիւտ ձրիւք ցածոյց զխռովութիւն, և սանձեաց 'ի ժամանակի իւրոյ հիւպատոսութեան, զոր ոչն կարողացան առնել այլք։ Ժողովուրդք կեցցեն միշտ 'ի հանդարտութեան, թէ կառավարք իցեն նոցա խոհականք, հանդարտք և սիրողք ուղղութեան և արդարութեան։

Զկնի երկուց ամաց հիւպատոսութեան իւրոյ Կուինտիոս ընտրեցաւ իշխանապետ։ Տիտոս Լիվիոս՝ որոյ չէր ինչ խօսեցեալ զարօրադրութէ և զաղքատութէ Կուինտիոսի՝ յորժամ համբարձանա 'ի պատիւ հիւպատոսութե, յայսմ վայրի 'ի զարթուցանել զուշ իւրոց ընթերցողաց՝ ընդ մէջ արկանէ պատմութե խորհրդածութիւն ինչ, որում միթէ է ամ ուրեք ունել զտեղի։ Լուիցեն ասէ յոյժ ընչասէրք, որք առ ճոխութեամբ արհամարհեն զամ. և կարծեն թէ առանց [illegible] չէ հնար լինել՝ ոչ ճշմարիտ մեծութեան, և ոչ առաքինութե արդարադատութե։ Լուիցեն զոր ասեմս։

Կո-

Կուինտիոս մի միայն յոյժ հռով-
մէական ժողովրդեան՝ բնակէր 'ի դաշ-
տավայրս յայնկոյս Տիբերիս գետոյ,
պատաղեալ 'ի մշակել իւրովք ձեռովք
զդոյզն անդաստան քառեակ լծվարաց,
որ էր մի միայն մնացուած իւրոց ընչից.
որ և կոչեցաւ յետոյ՝ արտաքարայ Կուին-
տիոսի: Պատգամաւորք գտին զնա այնպէս
մաճ 'ի ձեռին, որպէս յառաջին գրեցաք՝
յորժամ ընտրեցաւն հիւպատոս: Տան-
նմա զիշխանապետութեանն աւետիս, ա-
ղաչեն զնա գալ 'ի Հռովմ. և զգացու-
ցանեն նմա, թէ յո՞ր սահման կայր զօրն.
Պատրաստեալ էին նաւակ մի վասն Կո-
ւինտիոսի: Իբրև ել անտի, ընդ առաջ
եղեն նմա երեք որդիք իւր, ը͞ն որս և բ͞զմք
յազգայնոց նորա և 'ի բարեկամաց, և
յօգունք 'ի ծերակուտէն. և այնպէս շուրջ
ունելով զիւրև կ͞հոյլ աւագանւոյն,
և զառաջեաւ զսպասահարկութիւն քսան
և չորից դահճաց՝ տարեալ եղև յիւր
օթևանն: Ի մտանել իւրում 'ի Հռովմ,
խռովեցաւ առ ժողովուրդն, և յուսացոյց
զնոսա յիւրս բաշխս: Իսկ 'ի վաղիւ անդր
յառաջ քան զլուսանալ աւուրն ընտ-
րեաց սպարապետ հեծելազօրուն զ-
Տարկուիտիոս 'ի պատրիկական կարգէ,
որ

որ 'ի սակս իւրոյ աղքատութեան ծառայէր 'ի հետևակազօրուն, յորում և երևելի էր քաջութեամբ քան զամենայն ժիրաժիր ազնուականս։ Զորքաւ էր նմա 'ի ժողով անդր. արգել զդատաստանս, եւ փակել զկրպակս, և խափանեաց զամ գործաւորութիւնս վաստակոց. այս սովորութի էր 'ի վիշտս ծանունս, զի ամ քղքացիք միաբան միտ դիցեն փրկութեան պետութեան. Ապա հրաման ետ ամենայն քաղաքացւոց մարտկաց, զի յառաջ քան զմտանել արևու՝ գտցին 'ի դաշտ Արեսի, պաշարաւ հնգօրեայ հացի, բարձեալ իւրաքանչիւր ցիցս երկոտասան. իսկ ծերք՝ որք չէին բաւական զայս առնել հրամայեցաւ նոցա եփել հաց մտ իւրեանց մօտակայից. Առին ամ զօրականք, ոմն յայսկոյս և ոմն յայնկոյս 'ի խնդիր ցցոց. և ամենեքեան գտան 'ի պայմանեալ ժամու 'ի նմին տեղւոջ պատրաստականք որպէս և պարտն էր.

Իշխանապետին զօրավարեալ հետևազօրուն, և Տարկուիտիոսի՝ հեծելազօրուն խաղացուցանեն զգունդս՝ 'ի դասս դասս ոչ միայն կարգաւ չուոյ, այլ և ճակատու պատերազմի՝ թէ պիտոյ լիցի. Հասանեն զհորկ գիշերաւ 'ի մօտակայ սահմանս

Ա․գի-

Ուղղեալ քաղաքի Լատինաց, որ իմացեալ թէ չէին ինչ կարի հեռի ՚ի թշնամւոյն զօրեղի կայան. Իշխանացն յերիվար աշտանակեալ, և ընթեալ ընդ ներքոյ դիւրաժամուն զդիրս և ըն-տարածութիւն բանակի Եկուեանց, դասեցոյց զիւր ամ զօրս ընդ երկայն զնորօք, պատուէր տուեալ զօրականին միանգամայն մեծաբարբառ գոչել ընդ լինել նշանի, միոս միոյ իւրաքանչիւրոց զհե-րով առաջեաւ, և ամրացուցանել զայն ցցովք փարսեղովք: Պատուէրն անվրէպ կատարեցաւ: Պոչիւն զօրուն էանց ՚ի բանակէ թշնամւոյն ՚ի բանակ հիւպատոսին, և արկ ՚ի նմին անհնարին երկիւղ և տագնապ տոկուսի, և ՚ի միւսն քաջալերութիւն և խնդութիւն: Իւ այսպիսի օրինակաւ դղորդեալ ՚ի կայից զսատանեայ թշնամին, և իբրև զայծեամն յորոգայթէ սրընթաց ՚ի բաց ազատեալ զպաշարեալ հիւպատոսն ընդ զօրաց նր միացաւ ընդ նմա և արար յաղթութիւն մեծ յԵկուեանն: Որոց պաշարեալ ամ ուստեք և բռնադատեալ ձեռնարկել ՚ի կռիւ միանգամայն ընդ երկուս զօրս, ՚ի միտ առին թէ չէին բաւական դդէմ ունել կռուին բաղխման. և պարտութեան խոստովանեցան եր-կա.

կաքանչիւր կողման, խնդրելով 'ի Հռով-մայեցւոց մի ձգել զյաղթութիւն իւրեանց 'ի սպառսպուռ կոտորումն ազգին իւրեանց. Զիսպառոսն առաքեաց զնոսա առ իշխանապետն, որ պատասխանի ետ պատգամաւորացն և ասէ. այս ըղձանամ խնայել յարիւն ձերոյ զօրուն, և առնել ընդ ձեզ հաշտութիւն. բայց զի ընկալայց 'ի ձէնջ յայտնի խոստովանութիւն, թէ ազգ ձեր նկուն է և ընդ ձեռամբ նուաճեալ, կամիմ՝ զի 'ի բաց դիցեն զզէնս, և անցցեն ամենքին ընդ լծով. իսկ զԳրակկոս զառաջնորդ պատերազմի և զայլ գլխաւորս ապստամբութե՝ տաջիք շղթայակապ 'ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նոսա զարժանն. Լուեալ պատգամաւորաց զայս պատասխանի՝ դարձան փութանակի, և բերին զԳրակկոս և զգլխաւոր զօրուն շղթայակապս. Եւ Էկուեանց ելեալ զինաթափ, և որք թէ մերկ՝ 'ի բանակէ իւրեանց, անցին խումբ խումբ ընդ բանակ Հռովմայեցւոց՝ ընդ հրամանի իշխանապետին, և մտին ընդ ընդ միջէ ընդ լծով. (Լծոյն իմն երկուս գեղարդունս ցցեալս 'ի գետին, յորոց 'ի ծայրս արկանէին միւս ևս խոտորնակի. և էր սա յետին վատանունութիւն պարտելոց.)

Գաեալ

Վտեալ իշխանապետին զբանակ
Թշնամւոյն լի բիւր աւարաւ, եթող բռ-
նութիւն միոյնոյ իւրոյ զօրու. իսկ զօրուն՝
որք ընդ առաջնորդութ[եամբ] Մինուկիոսի հիւպա-
տոսի խոյս տուեալ էր յերեսաց Թշնամ-
ւոյն, և վանեալ մինչև 'ի բանակ իւր,
մեծ շնորհ համարեցաւ զայն՝ զի ոչ պա-
տուհասեաց զնոսա ըստ արժանի այնպի-
սւոյ ամօթալից վեհերոտութեան: Նաև
առ նմ ահեղագոյն բարբառով. Օրհ-
նեցէք՝ որոց մերձ 'ի մեռանել էր յաղագս ճա-
նիլ մերոյ Թշնամեացդ. մի՛ մոռասջիք զայն յաւիտեան
...ս նոցա: Նոյն դարձաւ 'ի հիւպատոսն,
և ասէ. Նա քեզ Մինուկիէ, այլ մի՛ կա-
հրամայեցից այսոց ընկերանիցս, քանզի եթէ որպէս
տեղակալ. մինչև լաւ եւս ուսցես վարել իշ-
խանապետութեան: Սա ասէ այսորիկ հարկ
եղև նմա հրաժարել 'ի հիւպատոսու-
թենէ:

Կուինտիոս դարձաւ 'ի Հռովմ.
ուր ընկալաւ զպատիւ չքեղ յաղթանա-
կի՝ որ չէր տուեալ երբէք այլում զօ-
րավարի. փոխանակ զի ազատեաց 'ի վը-
տանգաւորեայ սուղ միջոցի՝ յետ ընտրելոյ
իւրոյ իշխանապետ, զբանակ հռովմայեցւոց
յայնմիկ յայսմի և իբր անզերծ կորանդէ.
ցրուեալ և կոտորեալ զզօրս Թշնամեաց.

Թ էառ

էառ և ուսոյ եհար զմի 'ի պանծալի քաղաքաց նց։ Նոյն 'ի նմ̃ պահակապանս, և արար Տուսկուղոնացւոց արդար փոխարինութիւն ծառայութեանն՝ զոր արարեալն էին Հռոմայ։ Գլխաւորքն և երևելիքն ազգին ծանրաբեռնեալք շղթայիւք՝ երթային զառաջեաւ կառաց նր, և մտանէին ևս յառաջոյ նր զդրօշակս աւարեալ 'ի թշնամեաց։ Զօրականացն զկայ առեալ ուրեք յանցս՝ պարէին զկառօք։ հնչեցուցեալ էր քաղաքն ամ̃ երգս յաղթականս։ Թուէր ինձ տեսանել թէ ընդ Կուինտիոսի մուտ անէ 'ի Հռոմ և աղքատութիւնն յաղթանակու, ծպնեալ էր ծիրանեաւ յայնմ մեծահանդէս սպառահարկութեան՝ ոչ միայմիւն ընկալեալ և պայծառացեալ, այլ առաւել վայելչացուցեալ զայն շքեղ հանդէս, և բարձրացուցեալ զծիրանւոյն փողփողումն։ Այլ Աղմանասկի իսկ դարձցի իշխանապետն յիւր անդաստան, և յիւր հերկագործութիւն. այլ ոչ յայս սակս նուազեսցէ իւր մեծարոյութիւն ընդ ցածուն և անարգ հիւղիւ, որ բազմեալ է այսօր 'ի շքեղաշուք կառս իւր։ Խորհե զի մեծ է ոյժ և զօրութի առաքինութե. հաղորդէ զիւր ճառագայթ ամենայնի։

ձ    որ

որ զիւրեւ, շողշողեցուցեալ զամենայն մխառօք և մեծագործութք ։ Սիրելի առնէ և մեծարգի զամ՝ որ հաղորդութիւն ունի ընդ նմա, Թէպէտ և արտաքին նր արժանի Թուիցի յետին արհամարհուն քան պատուոյ ։

Յայնժամ Կուրնոտիոս՝ որոյ անուեալ էր վեցամսեայ ժամանակաւ զգերագահ իշխանութիւնն, հրաժարեաց յայնմանէ յետ վեշտասան աւուրց. և 'ի բաց եդ զիշխանականութիւնն առաջի ամ ժողովրդեան, յետ տալոյ զհամար զիւրոյ մատակարարութեան ։

Նա ոչ ինչ յայնմ միայն զկայ էառ իւր վեհանձնութիւն. ընդ առաջադրել ծերակուտին ; և 'ի ստիպել ժողովոց ազգայնոց և բարեկամաց՝ զի յաւարէն. և 'ի դերեւացն առաջէ ինչ ընտրղձանաց, կամ ընտրեսցէ իւր վիճակ դետնի, կամ յանձն առցէ ընդունել ինչ 'ի նոցանէ 'ի պարգեւ; հրաժարեաց յերկաքանչելիր մարդասիրական խնամոց և ընծայատուութեանց՝ բազում շնորհակալութ ։ Ո՛չ այլ ինչ էր նր ախորժակ և փոյթ, բայց միտ դնել անդաստանին զոր մշակէր, և մտանել անդրէն 'ի վաստակաւոր կեանս՝ զոր ձեռնարկեալ էր.

առա-

առաւել պանծացեալ և գոհ ընդ աղքատութիւն իւր, քան ընչաւորք 'ի գանձս իւրեանց ։

Արդ, է աստանօր ածել զմտաւ, թէ պանծալի օրինակք զորս ետ Կուին-տիոս սիրով աղքատութեան, հանպզոր-դութբն յերկրագործութ, իւրով գգաստ և խոշորակեաց կենօք, իւրով նախանձա-ւորութբ առ ձրի ծառայութիւն հայրե-նեաց, և արիական արհամարհութեամբ կալուածոց՝ որոց մարթ էր առաւելուլ զեկամուտս նր, համարակաց գնացք էին 'ի Հռովմ. և այն էր նորա կնիք ։ Այս օրինակք այնմ տարրացան յազգի անդ, մինչ զի 'ի ժամանակս յետինս՝ յորժամ զօրացեալ էր վերծուցմն բարուց, և առ ինքնակալօք իսկ, մեծարգի էին այսմի առաքինութիւնք 'ի գործադրելս, որ ոչ պահեցաւ յայլ ազգս.

Ծիդ. Մ[illegible] որ գոյ 'ի յետոյ [illegible] ։ [illegible]

Ոչինչ [illegible] ։

Ասմիկլոս իշխանութեամբ Հռովմայեցի [illegible]

տիրեալ բանակի Փառնակեանց և ամ
սուարին․ Մնայր միայն պաշարել զքաղաք
նոցա զամուր և զհամբարաւոր ,,զՓա-
ղերիա․

Այք մանկունք երեւելի տոհմից
Փաղերիոյ՝ էին ը՟ առաջնորդութ՟ մի և
նոյն մանկավարժի․ Սովորութի էր մ՟ր ա-
ծել զնս ՚ի ժամանակի հաշտութե ար-
տաքոյ քան զպարիսպն, զի զբօսեցուցէ
զնոսա ՚ի դաշտի ՚ի խաղս յանկաւոր
իւրեանց տիոց․ Յայսմ իւրմէ սովորութէ
չէր կասեալ և ոչ ՚ի ժամանակի պատե-
րազմի, հորդեալ սովին ձանձրոյթ մտա-
նութեան, յորմէ ակն ունէր ձոխ փա-
խարէնի․ Շրջեցուցանէր զնս, էր զի ՚ի
մօտուստ, և էր զի ՚ի բացուստ, զի ՚ի
գլուխ տարցի զխորհեալն՝ առանց ու-
րուք իրազեկ լինելոյ, կա՛մ կարծիս ՚ի մտի
դնելոյ․ Եղև օր մի զի պարապ գտեալ
տարաւ առ Կամիլլոս զամ մանկունս
յանձնեալս իւրում հոգաբարձութեան,
լծորդեալ ը՟ ապերատութեանն զորոյ
ինչ ոչինչ նուազ ամպարիշտ և անիրաւ․
Ասէ․ ,,տուալ իմ ՚ի ձեռս քո զմանկունքս
,,այնմ է, որմ թէ ՚ի ձեռս տայի զՓա-
,,ղերիա քաղ․, զի հարք սց իշխանաւորք
,,են նորա․'' Կամիլլոսի հայեցեալ յե-
րեսս

յեսս նչ խոժոռադէմ սպառնալեօք ասէ. Զի էիր, այ հաստատուն, քո անարժան ընծայեալք՝ առ քո պէս չօրագլուխ և ժողովուրդ. Այս՝ չուանէն որքա դաշնաւորութեան ընդ փաղեսհեանս հեծեալ 'ի մարդկային ինչ պայմանադրութեանս համամտաւորականս, Բայց կայ 'ի մէջ մեր և դոցա բնաւոր իմ պայման՝ որ 'ի մէջ ազնուաց մարդկան, և այն՝ յաւերժական։ Պատերազմ օրէնք կան, որպէս և հաշտութեան. և մեզ պանծալի է մտադիր երևեցուցանել զարդարութի և զխաղաղութեան. Ոչէն 'ի յետայն ոանեմք մ'չ 'ի վարել առ մանկտի, որոց ներուաց լինի և յեա ամման քաղաքի, այլ առ թշնամի իբրև զմեզ զինեալս, որք ընդ հարան ընդ Բանակ մեր առաջի Սէյայ, և մեր ճեր ինչ փոխեալ նոցա աւէթ. Պնոս յաղթեցեր նոցա 'ի քո հողմանէ յանցաւորութեամբ, զոր չէք ուրուք շնորհեալ ցայսօր. այլ եւ պնդեալ էմ յաղթել, որպէս յաղթեցի Սէյացւոց՝ շօրութեամբ զինուց, ճգնամբք, արութեամբ, քաջութեամբ, և երկայնմտութեամբ. այսոքիկ մայն հնարք վայել են հաւաքմայեցւոց. Ո՛չ կամեցաւ կամիլլոս այսուիկ և եթ կշտամբութեամբ արձակել զեղեռնաւորն. այլ ետ մերկացուցանել զնա, և կապել ձեռս 'ի յետս. և տուեալ ձաղկս 'ի ձեռս մանուկ աշակերտաց նորա, հրամայեաց

նց

նց դարձուցանել զնա 'ի քաղաքն ան-
դադար ձաղկանօք, զոր և արարին մը-
տադիւր.

Զայն տեսեալ Փաղխակեանց, յորս
կորուստ որդւոց արկեալ էր անմխի-
թար սուգ, ձայն բարձին ցնծութեան,
և այնպէս յապուշ հարան ը̄ այնպիսի
նորանշան օրինակ արդարութեան և
առաքինութեան, մինչև հրեշտակս ար-
ձակեցին նախ 'ի բանակն, և ապա 'ի
Հռովմ, ուր 'ի լսելութիւն ընկալեալք
'ի ծերակուտէն՝ խօսեցան, և ասեն.
Տեարք, յաղթեալք 'ի ձէնջ, և 'ի ձերմէ
զօրագլխէ այնպիսի իմն օրինակաւ, որ
ոչ նախանձ արկանէ՝ ոչ դից և ոչ մարդ-
կան, եկաք անձնատուր լինել 'ի ձեզ,
հաւատարմաւ հաւատացեալք, (զոր պան-
ծագոյն իմն է յաղթականացդ,) լինել
պարտելոցս երջանկագոյն ես ը̄ ձերով
ինքնակալու ը̄, քան կեալ ը̄ մերովք օ-
րինօք: Այս արդ ա̃մի հնազանդ եմք
ձեզ. առաքեսջիք արս՝ որ քաղեսցեն
զմեր ղէնս, և առցեն 'ի մէնջ պատանդս.
և մտցեն 'ի տէրութիւն քաղաքին՝. զմր
դրունս գտցեն բացս. և այնպէս յաջո-
ղեսցէ ձեզ հաճ լինել ընդ մեր հաւա-
տարմութիւն, որպէս և մեք վստահ եմք
հաճ

հաճ լինել ը̄ ձեր առաջնորդութիւն։

Նա արդարեւ որպէս ասացին Հրեշտակք Փաղլիսկեանց, չի՛ք գովութիւն անուշակ եւ պանծալի վ̄ս պետութեան կ̄ծ իշխանի, իբրեւ զայն՝ թէ ժողովուրդք՝ պարտեալք առաւել յանդորրու են եւ ծրջանիկ ը̄ հնազանդութ̄բ նոցա, քան յորժ̄ ազատ եւ ինքնագլուխ կեցին ը̄ իւրեանց օրինօք։

Յերեւելի յայս դիպուած յայտնի երեւի, որչափ ինչ զօրէ առաքինութիւն, եւ որպէս ազդէ ՚ի սիրտ՝ յորժամ է հաստատուն եւ անկեղծ. Ապաքէն չի՛ք ոք, որ ՚ի լոկոյ պատմութենէ աստի ոչ շարժիցի ՚ի ցասումն առ հաւատադրուժն այն մանկավարժ, որ զիւր աշակերտս մատնէ ՚ի ձեռս թշնամւոյն. կամ ոչ զարմասցի ը̄ Կամիլլոս, որ դարձուցանէ զնոսա ՚ի ծնողս իւրեանց. Այս ներքին իմաստք չեն ազատ, եւ ոչ կախեալ կան զմէնջ, այլ են տպաւորեալք ՚ի սրտի եւ բնդաբոյսք ՚ի մեզ. Ս̄կ արժան է հրաժեշտ տալ ՚ի բնութենէ, եւ ընկերանել զբարբառ նորա չկարծել եւ չասել՝ թէ առաքինութիւն եւ մոլութի ոչ այլ ինչ են՝ բայց անուանք անգործք եւ փնգոյք։

Բուշէ-

ԺԹ. Բարեկարգութեան փաղաքշութեան զօրականաց կախէ զինուորան կաւատաւորութեանց Եղամափուրց հինաւուրց զօրավարին.

Պաւղոս Էմիլիոս հիւպատոս
Հռովմայ տեսեալ զ'ի դիպան տեղւոջ
բանակին Պերսէոսի արքային Մակեդո-
նացւոց՝ Ե̃ որում ունէր մղել 'ի պա-
տերազմ՝ պահմանեաց անվրէպ և խիստ
բարեկարգութիւն յիւրում զօրու, զոր
եգիտ խանգարեալ 'ի ցոփութենէ՝ յոր
կեայր: Խօսեցաւ ընդ նմ̃ ազնուական
արիութեամբ. յուշ արար նց̃ թէ զինչ
պատշաճ է զօրականի. ասէ. ,,Երժան
է նմա միայն միտ դնել երից. իւրում
,,մարմնոյ՝ զի ժիր իցէ 'ի գործ, և հուժ-
,,կու. և զի ունիցի միշտ կերակուր հա-
,,սուցեալ, զի պատրաստական իցէ 'ի
,,չու՝ ընդ լինել նշանի: Ա̃ այլոյ ա̃մ
,,պա՛րտ է նմա վստահ լինել 'ի խնամս
,,Ա̃Ծ, և 'ի տքնութիւն զօրագլխին.
Ո՛չ կարեմ ասել, քանի՞ այս զրոյցք
թէպէտ և խաւսն ընդ յանդիմանութ̃
հաճոյ եղեն գնդաց, և մատուցին քա-
ջալերութիւն. Ընդ էն փոփոխակի երևե-
ցաւ 'ի բանակն այլափոխութիւն զար-
մանալի. Ո՛չ ոք կայր 'ի նմա գատարկ.

Սրբէին

Արևէլին զօրականք սրել զիւրեանց սու-
սերս . յղկել զիւրեանց սաղաւարտս,
ըզզրահս, և զվահանս . փորձ փորձել
երագաշարժութն̄ ընդ բեռամբ զինուց .
շկահեցուցանել զդեղարդունս, և շողշո-
ղեցուցանել զմերկ սուսերս . ընտելանալ
և բրտանալ յա̃մ զինուորական մարզս .
մինչև մարթ էր համարել, թէ էբրև
հարցին ընդ թշնամիս, հաստատեալ են
'ի միտս կամ յաղթել, և կամ
մեռանել .

ԺԻԴ. Օրինակ յեղափոխութեան բանակի .

Այն հիւպատոս պարտեալ և ձերբակալ արարեալ զթագաւորն Մակե-դոնացի զՊերսէոս յետ խօսելոյ ընդ նմա քաղցրութ̄ և շողոմական խոստմամբ̄ դարձաւ 'ի հռովմայեցիս խօսել սկսաւ Լատիներէն . Ասէ . Ասացիք ձեզ օրի-նակ մեծ մարդկեղէն իրաց յեղափոխութե̄ . Առ ձեզ առաւելապէս հային իմ բանք, մանկունք պատերազմողք . Անստուգութի ապագայց՝ որոց մարթ է մեզ պատա-հել օր ըստ օրէ ուսուսցէ մեզ չդնալ երբէք ամբարհաւաճութ̄ և բռնութ̄ ը̄ ուամ և լցէ, և չապաւինել յայժմեան բարօ-

բարօրութեան։ Քանզի ես ճշմարիտ արդեանց և ճշմարիտ քաջութեան է՝ մի՛ կարել լինել ամբարտաւանել 'ի յաջողութիւնս, և մի՛ լքանել 'ի ձախողութիւնս։

ՃԻԷ. Գովելի աղքատասէր առաքինութեանց Պաւղոսի Էմիլիոսի և ընտանեաց նորա։

Պաւղոս Էմիլիոս՝ ծնունդ միոյ յազնուականագոյն և 'ի նախնագոյն տոհմից Հռովմայ, հանդիսացեալ երևելի պաշտամամբք և մեծամեծ գործաւորութեամբք, չժառանգեաց յիւրոց նախահարց՝ բայց զուգնաքեայ ինչս. պարծանք իւր է. այն այսպիսում յերկարաձգել դաստակարգի նախնեաց։ Նախնի ճաշակ յարդի և սիրոյ առ անպաճոյճ դնացս, և առ աղքատութիւն եսյպ'հիւր դեռ 'ի տոհմն իւր բարի օրինակօք ընտանեաց, և ծայրագոյն փութով չառնել խնամութիւն ը՟ անձինս՝ որոց էին օտարոտի սկզբունք։ Այս ոգի եղև՝ որ ետ ընտրել Պաւղոսի Էմիլիոսի 'ի փեսայութիւն զԷլիոս Տուբերոն՝ զայր քաջայայտ, որ 'ի վեր էարկ զաղքատութիւն մեծափայլելոյ ևս քան զամ հռովմայեցիս։ Միաբանեալ 'ի հիւպատոսութիւն, ասէր յանօթս լռեցուցէնն, և դեսպանք

Նտաղացուցոյց՝ պէտնատեսք այսմ սքանչելի անպաճոյճ պարզութեան, մատուցին նմ օպտոս արծաթիս. բայց նա նորոգեաց զօրինակ անընչասիրութեան, և հրաժարեաց 'ի պարգևացն։

Փարսնն՝ պանծալի սիրողն անընչութեան, ոչինչ օտարանայր յաղնուութենէ նորին իմաստից։ Պլուտարքոս պատմէ, թէ Էմիլիա դուստր հօր՝ որոյ երկիցս լեալ էր հիւպատոս, և երկիցս յաղթանակաւոր, չամաչէր յաղքատութենէ իւրոյ առն, այլ՝ զարմանայր ընդ առաքինութիւն նորա, որ հաւանեցուցանէր նմա կալ մնալ աղքատ. այսինքն է, ը աւիթն՝ որ ունէր գնայ յիւրում աղքատութեան, խորշեցուցեալ զնա 'ի հնարից հարստանալոյ, որք հասարակօրէն են անվայելչական և խառն ը անիրաւութեան։ Սամն զի օրէնաւոր ճանապարհք մթերելոյ զինչս՝ դժուարագիւտ էին ազնուականի հռովմայեցւոյ, որում ճանապարհք տուր և առի և ձեռագործի էին փակք. և ոչ գոյր նմա ակնկալել փոխարէնի ծառայութեանց՝ զոր մատուցանէր պետութեանն, ոչ ծրից, ոչ հասից. և ոչ այլ ինչ շնորհաց՝ զորս սովոր են արդ ընդունիլ սպայք յառաստաձեռնութե

Զրոց

…րոց թագաւորաց ։ Զե՞ր հնար նմա փարթամանալ այլազգ, բայց կեղեքմամբ գաւառաց, որ՞ անէին յետ ժամանակաց ինչ՝ յոլովք յիշխանաւորաց և 'ի զօրագլխաց ։ Այս մեհանձնութիւն, այս անշահասիրութիւն, այս իմաստք պատւոյ, այս կարի իմն վերադասութիւն առաքինութեան քան զճոխութիւն, էին այնք՝ զորս այս տիկին հիացմամբ նկատէր յայր իւր և կարի իրաւամբք ։ Գոհէր 'ի մերոյ առաւելեալ քան զհասարակաց սովորական եղանակ խորհելոյ, նշմարէր ընդ վարագուրաւ աղքատութեան և անզարդութեան՝ յառաքինութիւնն որ էր այնմ պատճառ. և պարտաւոր զանձն համարէր առաւել ևս մեծարել 'ի նմա զայն՝ յոյր սակս թերևս յաչս այլոց լինէր արհամարհ. կամ որպէս ասէ Պլուտարքոս, հերաշխաւորեալ ընդ առաքինւոյն, որոյն աղքատ էր.

Այս տիկին երևելի՝ մարմնացու յուսումն այնց ողջամիտ սկզբանց 'ի սան Պաւղոսի Էմիլիոսի, զորոյ կենակցութիւն վերադասէր քան զամ մնոտի զգօստնս, որք հասարակօրէն բուռն մերեանս ձգեն զկատանիս.

ՃԺԸ. Պայքար Կորոշանայ և անհնազանդութեան ՚ի ՃԶ Աւրէ-Էարբշանայ և որդւոյ նորա:

Արիոբարզան, և որդի նորա եղեն երբեմն տեսարան զօրուն Հռոմայեցւոց՝ ստար յոյժ յերկոցունց Տիգրանաց. Արքայն կապադովկեցւոյ եկեալ էր ՚ի բանակ Պոմպէոսի. և մինչդեռ զօրագլուխն բազմեալ էր յիւրում բեմի, նստէր սա առ նմա յաթոռ դահակաւոր. Բայց եստես զիւր որդի ( զինուորեցեալն յիւրմէ դաւաճանութեամբ և անկեալ առ Պոմպէոս) զի կայր մօտ ՚ի դրանց դպրին. Կորովանք հօրն ոչ ժուժկալեցին տեսանել զիւր որդի ՚ի տեղւոջ՝ որ չէր արժան հրամանատրականի Իջ յիւրմէ աթոռոյ, և չոգաւ թագ կապել նմա. յորդորեալ նստիլ ՚ի տեղւոջ՝ յորմէ ինքն հրաժարեաց Որդին ընդդէմ դարձեալ պատկառանօք առ գործովն հօր իւրոյ. յարտասուս հեղ, ՚ի բաց առեալ զթագն. և ոչ յանձն էառ՝ որչափ և թախանձիւր Նա այսպէս դիպուածով իմն՝ որ անկուր թուլիւոր թագուհւոյն զթագ՝ էր. ուրախալի, և յոյր զլուխ դնիւր էր ընկրկեալ ՚ի զաւառն տրտմութիւն. Ոմն կառուցս. և ո՞յր ոչ զաւարեցին աչք՝

տղէք՝ 'ի լսել իսկ. Ճարկ եղև Պոմպէոսի ձեռն արկանել յի՛ւր իշխանութե՛, առ յանդ հանելոյ զայսպիսի անլուր կռիւ. հաստատեաց զիրաւունս հօր իւրոյ և պատուիրեաց որդւոյն հնազանդել: Որդի Միթրոբարզանայ էր համանուն հօրն, և վասն որդիական գործվանացն արժանացաւ մակդիր անուանս Փիլոպատոր, այն է՝ հայրասէր:

ԺԹ. ԱՂՔԱՏ ՈՒՐԱԽԱՑԵԱԼՆ Ի ԾԱՂՐ ՄԵԾ ԹՈՒԻ ԻՄԱՍՏՆՈՑ ՎԱՍՆ ՆՈՐԱՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԲԵԲԵ-ՌԱՄԲՔ ԱՐԺԱՆՈՅ:

Ստրատոնիկէ կին ցածազգի դուստր ուրումն երաժշտի երգեաց երբեմն՝ յորժամ էր մանկամարդ յոյժ, 'ի ճաշեին Միհրդատայ այնպէս գեղգեղամամբ, մինչև յափշտակել զնա: Մինդէն վաղվաղակի դասեցոյց զնա ընդ հարճս իւր. և հայր նորա դարձաւ 'ի տուն իւր կոր 'ի գլուխ, զի տեսոյ անգամ չհամարեցաւ արժանի. Բայց 'ի վաղիւ անդր երբև զարթեաւ՝ յապուշ հարաւ 'ի տեսանել յիւրում սենեկի սեղանս լի սպասուք ոսկւոյ և արծաթոյ, և բազմութիւն ծառայից, ներքինեաց, և ըստրկաց.

տրրկաց, որք առաջի առնէին նմա գեղե-
ցիկ և մեծածախ հանդերձս; և առ դրան
խորում երիվար մի պաճուճակապ զար-
դարեալ, իբրև զաւագանութն՝ որոց առ-
նեալ էր կոչել բարեկամ արքայի.
Խոստացաւ նմա՝ թէ ծառը առնեն զնա,
և կամէր փախչել. Բայց յարդելուլ
տրկած և յասել; թէ պարգև է այդ
արքայի. և թէ տայ քեզ և զապարանս
բազմահարստի ուրումն ՚ի մօտոյ մեռե-
լոյ. և թէ այս ամ առ ժամն են դոյզն
երախայրիք պարգևաց՝ որոց յիրաւի է
քեզ ակնկալել ընդ հուպ, հազիւ հա-
մոզեցաւ ՚ի հաւանութիւն. Յայնուհետև
արկաւ զնուրեաւ զծիրանին, հեծաւ յե-
րիվար սպասահարկութեամբ բազմաց.
և յածեցաւ ընդ քաղաքն ձայնէր յամ-
զօրութէ զճանապարհայն. Իմ է այս ամե.
Սովին ծանակ եղև բազմաց. որոց տայր
պատճենի. „Օտարմանք են, զի ոչ քարձեք
„լինիմ անցաւորացդ՝ ՚ի մեծէ ուրա-
„խութենէս՝ որ ամբոխէ զիմ միտս”.
Փուայնուէմիոս ասէ. „Տեսէք, զի՞նչ առնէ
„ձախութիւն; և զի՞նչ պտուղս նորա.
„Բաս դմին օրինակի յուղովակի մարդիկ
„ծառը լինին այլոց, և ինքեանք կարծեն
„ծառը առնել զայլս, ՚ի յեղափոխե-
„մտաց

„մտաց նոյա„: Իսկ մեք զի՞նչ առնցեմք զհօրէ՝ որ պարծի ԱԾ անպատուութիւն և ԱԾ անարգանս դստեր իւրոյ. և որոյ չիք այլ խնամ՝ բայց արբեցութիւն իւր ուրախութեան 'ի մեծ իւր նիւթ ամօթոյ և ցաւոյ:

ՃԼ. Մեր հայրենեաց յաղթանակէ անձնայն փորովանչան ախտակցութեանց Մարմնոյ:

Լար Պորսենա՝ զօրագոյն 'ի թագաւորս Իտալիոյ առ Հաստատել անդրէն զՏարկուինեանս յաթոռ թագաւորութեան Հռովմայ, զոր մերժեալ էին արդէն վասն իւրոյ չարաբարոյ անիրաւութեանց, դիմեաց զօրու ծանու 'ի վերայ Հռովմայ 'ի մտի եդեալ թէ վաղվաղակի իսկ առնիցէ զքաղաքն. վասն այսորիկ պաշարեաց զքաղաքն կամելով նուաճել զնա սովու. Նորանշան իմն գործ քաջութեան ազատեաց զքաղաքն 'ի վըտանգէն՝ յոր կայր. Մուկիոս պատանի ազնուատոհմ, զայրացեալ թէ զնոյն ազատացեալն Հռովմ եհաս յայն թըշուառ սահման, քան զոր յառաջագոյն և ոչ առ Թփրօք էր երևեալ, խորհեցաւ զերծուցանել զՀայրենիս իւր յանձքութէ.

ձեռնարկեալ 'ի ձեռնարկ նորալուր և յանդուգն. Գնաց 'ի բանակ թշնամեաց՝ յետ խնդրելոյ հրաման 'ի ծերակուտէն. զգացուցեալ նմա թէ խորհի մեծ ինչ և պիտեան խորհուրդ, բայց առանց յայտնի իմացուցանելոյ զայն. Խաբեաց զպահապանսն՝ որք կարծեցին թէ յիւր-եանց ազգէ իցէ, իբր զի երևեցաւ առ-արտաքս ամենևին անզէն. և զի խօսէր լեզուաւ երկրին, զոր ուսեալ էր երբեմն 'ի դայեկէն՝ որոյ սնուցեալ էր զնա: Եհաս մինչև 'ի վրան արքային, որ ընդ միում 'ի դպրաց՝ որոյ չէր ինչ ընդհատ տարազ զգեստու, տայր ռոճիկս զօրուն. և ոչ կամեցեալ Մուկիոսի հարցանել՝ որ իցէ թագաւորն, զանդիտեալ՝ գուցէ յայտնեսցի, և տեսեալ թէ զօրականք յոլովագոյնք ևս մատչէին առ դպիրն, զնա կարծեաց թագաւոր, և սպան զնա դաշնակաւ փոխան արքային. Անդէն փաղփաղակի կալանաւորեալ անկի կամօք տարեալ եղև յատեան թագաւորին ցասուցելոյ. բայց և 'ի տեսիլ բիւրուց ահեղ և անողորմ տանջանաց՝ որ 'ի վերայ կային նմա, կայր անվեհեր և երևէր առաւել ահընկէց քան ահաբեկ. Ես եմ (ասէ) հռովմայեցի. Մուկիոս է իմ

 անուն.

ռնոսն. հանդերձեցայ սպանանել զԹշնամին իւրոց հայ-
րենեաց, յօժարամիտ դիմագրաւեալ զնա մահու
ստանալ և փոխանակ կենաց, փոխ զոր ցուցի՝ հա-
մեմատ բանաւոր զինուորաց Թոփէ մեծա արծանէ
հանդիսացելոյ վարձել փողոբէ. և հրել արեէր.
Չեմ ես միայն՝ որ խորհեցայ զայս խորհուրդ
զքեզ. կան և այլ բազումք, որք անյուոն ունին
այսմ պարծանաց. պատրաստեն զանձն ի հեռ
'ի հանդիպորդ տագնապէ և 'ի տաղտապանս, Ըէ
տեսանել ունիս զքեզ ժամ 'ի ժամէ 'ի վտանգէ
կենաց, և գտանել հանապազ 'ի մուտս վրանի
քո զգաղտնի Թշնամի ոք՝ որ սպասէ տեղւոյ
ժամու հարկանել զքեզ. այս է պատերազմն,
զոր յայտնեն քեզ երիտասարդք հռովմայեցիք.
մի երկնչիք 'ի բազմամբոխ պատերազմէ, միայն
ընդ միայնոյ ձանիս մրցել, և շնանիս անշնա-
պահ լինել, բայց 'ի մօտէ միայն Թշնամւոյ:

'Ի բարկութեան բրդեալ Թագւորին,
միանգամայն և զարհուրեալ խռովել
'ի վտանգէն զոր ասպանայր Մուկիոս,
հրամայեաց պատել զնա բոցով՝ 'ի բռ-
նիկել զնա խոստովանել զայտնագոյն,
բայց հանդիմանեցուցն մխեալ զնի ձեռն
'ի բոց անդր բորբոքեալ, ասէ անվեհեր.
Տե՛ս արդ. զերանդ փառահեռ զմարմին երբեանց՝
որք զնտածին ունին անձանց փառաց. և ով
անընչայ տուկայր կեզմինն, Յայնժամ Պոր-
սեն.

ամենայն յապուշ հարեալ էր այնպիսի նորանշան տեսիլ, էջ յերկրէ բեմն, և մեկուսացուցել զՄուկիոս 'ի բոցոյ ան- տի, ասէ. Ի բաց կաց այդր պատանի դու, մի եղէ թէ սպառնալ Մեծամի եղեւ յանդգն ան- ձին, քան ինձ. Բաջալերել կամիմ զքեզ ընդդէմ յայտնելոյ ...թեանց, եթէ արժան էր քեզ ձայնել զայդ յօգուտ իմոյ հայրենեաց. Բայց քանզի ընդդիմացեալ ես իմ զայդ ա- նել, կամիմ զի արձակել զքեզ ազատ անվր- նասաբար, զոր սակս իմ օրինաւ պատերազ- մի 'ի պատասխանել զքեզ իսկ. Յայնժամ Մուկիոս՝ որպէս շնորհապարտ ազնուա- բարոյութեան նր, յայտնեաց նմա, թէ երեքհարիւրք էին երդուեալ դաւա- ճանք կենաց նորա, և թէ նմա եւ վի- ճակաւ լինել առաջին. և թէ այլք ևս 'ի պատրաստ են գալ հետ զհետէ. Աստ այսր քաջութեան՝ անուն կո- չեցաւ նմա Սկեւոլա. որ թարգմանի ձախ- ձեռնեայ. զի անպիտանացուցեալ զձեռն աջոյ՝ վարէր 'ի գործ զձախոյ ձեռն.

Զահի հարեալ Պորսենայի 'ի վտանգէն յոր գտաւ, և յորոգայթից՝ որք 'ի վերայ կային նմա օր ըստ օրէ. խորհե- ցաւ Ճ.գրտիւ առնել հաշտութիւն. և առաջի արար զպայմանն 'ի ձեռն դես- պանաց.

պանաց, որք չոքան ընդ Մուկիոսի 'ի Հռովմ, և արարին հաշտութիւն ընդ Հռովմայեցիս: Եւ այսպէս անվեհեր քաջութիւն առն միոյ ապատեաց զՀայրենիսն:

ՃԼԱ. Բռնաւորութիւն սիրոյ մօր և հայրենեաց յաղթեաց երբեմն բռնաւորութեան ոխից և ցասմանց:

Կորիողանոս այր մեծանուն զօրապետ Հռովմայեցի՝ Թշնամի յայտնեցաւ տրիբունական իշխանութեան, որոյ անուան և եթ յիշատակումն բորբոքէր զնա 'ի բարկութիւն, անցոյց պանցոյց զամենեքումբք իւրովք բուռն և խռովարար բանիւք. աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ թէ եկն եհաս դիպօղ ժամ արմատաքի խլելոյ իսպառ զտրիբունութիւն, և հաստատելոյ անդրէն զհասարակապետութիւնն յիւր նախնական վիճակ. Ապա կոչեցաւ 'ի դատաստան առաջի ժողովրդեանն, և դատապարտեցաւ յաքսոր. Կորիողանոս ելեալ 'ի Հռովմայ՝ լի ոխութեամբ և ցասմամբ առ իւր հայրենիս, և խորհեալ ընդ միտս առնուլ քէնս վրէժ երևելի՝ խոյս ետ յԱնտիոն առ Վոլսկեանս, խրախուսել զնոսա

վառել զլինու. գիտելով թէ հզօր էին
զօրու և դրամովք: Իբրև գումարեցան
ամ զօրք Մոլկեանց՝ Կորիոլանոս զի
մի անցուսցէ զժամանակն ՚ի զուր, էառ
ընդ իւր զկամակարս ՚ի Մոլկեանց. և
ձգեցաւ յեղակարծում ժամու ՚ի վր
երկրին Հռովմայեցւոց մինչև ազդ լինել
էր ՚ի Հռովմ ինչ: Նա առ աւար բազում.
խաղաց ապա զօրովք իւրովք ՚ի կողմն
Հռովմայ. և չոգաւ բանակեցաւ քառա-
սուն ասպարիսաւ հեռի ՚ի քաղաքէն:
Մերձենալ նորա ելից զամ զՀռովմ
տարակուսանօք և արհաւրօք. երևէին ամ
ճանապարհք լի կանամբք, որք ընթա-
նային յայսկոյս յայնկոյս որպէս զմտա-
թափս. և մեհեանք լի էին լալագին ծե-
րովք՝ որք խնդրէին զօգնութիւն ՚ի դից:
Բայց դժուարին է ժողովրդեան՝ զար-
ժանի յարգ ընծայել արդեանց այլոց՝
յորժամ յիւր ձեռս է տէրութիւն:
Ընդոտնեալ արհամարհանօք զայրն ե-
րևելի զամբաստանեալ, տեսաք՝ որպէս
խրոխտանօք խիզախէր առ նա. և արդ
ահա նոյն ժողովուրդ յողոք և յաղեր-
խանարհի առաջի նորա, չգտեալ այլ
ապաւէն՝ բայց զնորին եւկ գթութիւն,
յոր ոգւով չափ կամի լինել ապաստան:

Մէ

Ո՛չ յայս միտ էր ծերակոյտն , որ 'ի սակս Թախանձելոյ ժողովրդեան՝ ոչ կարողացու չարձակել դեսպանս առ Կորիոլանոս , հրաւիրանաւ անդրէն հատանելոյ զընակութիւն իւր 'ի Հռովմ, և աղաչանօք վախճան առնելոյ մարտին, Այլ Թէպէտ և ամենեքին նորա կամ ազգականք իւր էին , և կամ բարեկամք, սակայն և այնպէս ընկալեալ զնոսա անընտել իմն յոխորտանօք և խստութեամբ զայս միայն տուեալ պատասխանի . Եթէ Հռովմայեցիք կամին խօսել վասն հաշտութեան , յառաջ քան զամ̃ ինչ պարտասցեն դարձուցանել 'ի Վոլսկեանս զամ̃ զքաղաքս և զամ̃ երկիր՝ զոր առեալ է նոցա յառաջին պատերազմունս . և Թողացուցեն նոցա զիրաւունս քաղաքացութեան, որպէս արարին ընդ Լատինս . ապա Թէ ոչ՝ զչար առնուլ ունին Թէ աշխարհն ոչ միայն չարար նշխան ընդդիմադրութեան են , այլ առնուլ և զվրէժ և Թշնամանաց . Այլ 'ի դառնալն միւսանգամ աղաչել՝ զի ցածուսցէ զխոժոռութիւն իւր , լսել անգամ չհաւանձն ։

Սաստկեալ եւս յաւելան յայնժամ 'ի Հռովմ արհաւիրք և շփոթք . այլ ոչ իսպառ հատաւ յոյս նոցա . Հրեշտաւ

տակութիւնս առաքեցին առ նա միւս-
անգամ՝ 'ի քրմապետաց, հաւահմայից
և 'ի քրմաց, զգեցեալք իւրաքանչիւր ըզ-
հանդերձ պաշտաման իւրեանց, և այլ
թէ դիւցական փառօք. այլ վասն այսր
չեղև ինչ նմա փոյթ.

Տեսեալ՝ թէ իբրև հասին 'ի շա-
քաշար սահման, տիկնայք Հռովմայ
դիմեցին առ հասարակ 'ի տուն Վե-
տուրեայ մօր Կորիոլանոսի, քաջ գիտե-
լով՝ զի սիրապատար ակնածութիւն
յանի ցուցեալ էր առ սա քաջիկն այն
հռովմայեցի քաջ օրինակն երիտասար-
դաց՝ նմանօղ իւր լինելոյ. Յուշ եղև
տիկնաց հռովմայեցւոց, զի թէպէտ և
'ի դերև ելին հրեշտակութիւնք ցայն
վայր առաքեալք առ Կորիոլանոս, բայց
կայ դեռ Հռովմայ միւս ևս ապաւէն,
դիմելով 'ի մայր խրոխտ աքսորականին.
Վետուրիա ոչ գիտաց 'ի բաց կալ յայն-
պիսում պահու 'ի ծառայուէ իւրոց
հայրենեաց. Այլ ընդ իւր առեալ ըզ-
Վոլումնիա զկին Կորիոլանոսի, երկոքումբք
որդւովք՝ զորս ծնեալ էր 'ի նմանէ, և
որոց մին դեռ տղայ էր 'ի գիրկս, չոգաւ
'ի բանակ թշնամեաց, ը̃ իւր ունելով
և զբազմութիւն յոյժ այլոց տիկնաց.

Եւ

Սոյնպէս կանայք ձեռն արկին պաշտպանել արտասուօք և աղաչանօք զքաղաքն, զոր այլ ոչ կարէին պաշտպանել արք զօրութեամբ զինուց.

Իբրև ազդ եղև Կորիոլանոսի յումեմնէ յիւրոց զօրականաց, թէ թուէ ինձ տեսանել զմայր քո և զկին և զորդիս՝ որք գան առ քեզ, էջ յիւրմէ գահէ, և փութեաց որպէս խելայեղ՝ շփոթիւք և տագնապաւ, գիրկս արկանել մօր իւրում։ Յայնժամ տիկինն արդարև հռովմայեցի, փոխանակ աղերսանաց առնաց սրտմտեալ, և ձեռամբքն յետս ընկրկեալ զորդին, ասէ ցնա խոժոռ դիմօք և ձայնիւ. Յառաջ քան զընդունելութեան Քրիստոնէութեանդ կամէի գիտել, արդեօք ի- [illegible]

գըժտասութեան, զիարդ ոչ էին ևս որոշը-
ութեան 'ի մէջ այսց դաշտավայրաց. յընծա-
յել Հռովմայ ամրոցէ ողաց քոյ, զիարդ հա-
սայեր ցանցն քո. ընդ պարսպաւն յայր վերայ
պնդեալ եմ յարշաւել, փախեալ էայ ամ՛ որ
ծնել էայ եմ ներելէ յաղթարհէ. եմ յարէ ըն-
կութեան, եմ ընդ դէք, և մայր, և կին, և
որդիք. Եթէ չէի ես որդեօք լեալ մայր, Հռ-
ովմ չէր թերևս պաշարեալ. Եթէ չէր իմ
որդի, ազատ մեռանէի 'ի ծոց իմոյ՝ իբրև զա-
ատ հայրենեաց. Բայց չէմ ես մայրան՝
ողջոյ արժանաւորոյն. որովհետև ըստ իմ ինչ
կրել՝ որ ոչ ամենեւին զրկեսցի՝ քեզ 'ի
նախատինս, քան ինչ 'ի թշուառութեան. Ե-
թէ թշուառագոյն են վիճակէ չիցէ ինչ
դիպել, չեմ ինչ ապրելոց ընդ երկար. Բայց
թէ ոչ յետ՝ կէմ հայեացէք յայսոսիկ ամենայն որ-
դեակս. որք 'ի հանապազորդել քո պաշարմանդ
չէն պերծանելոց կամ 'ի վաղահաս մահուանէ, և
կամ 'ի դառն և յերկար ծառայութենէ.

Զհետ բանիցս Վետուրեայ՝ յա-
ւելան ողբք և հեծութիւնք ամ՛ տիկ-
նաց Հռովմայ. որք լային զթշուառութի
իւրեանց և զհայրենեաց. Ո՛չ կարաց Կո-
րիոլանոս զդէմ ունել յանդիմանութե
մօր իւրոյ, առ որ ունէր հանապազ 'ի
սրտի ակնածութիւն և սէր. Գիրկս
չարկ

հարկ վճռեալ. եւ ՚ի գրկախառնութեան անոր առ Սեբաստէ, յաղթեցեր ինձ յաղթութիւն անարգական, որ վաղվաղակի եւս լիցի ինձ մահաբեր.

Այս իբրեւ ասաց Կորիողանոս առ Սեբաստիա, երարձ զպաշարումն. եւ հաստատեաց դաշինս ՚ի մէջ Հռովմայեցւոց եւ Սոլիկեանց, եւ այնպէս զերծաւ Հռովմ՝ ոչ այնչափ ակնածութեամբ առ դեսպանս, առ կրօնս, եւ առ հայրենի դիս եւ ՚ի քրմապետս նր, որչափ ՚ի բուռն սէր ծնողի իւրոյ, կնոջ եւ որդւոց.

ՃԼԲ. Օրէնք տասներկու տախտակաց անշահանդրութեան, որոց փոքրէն՝ է օրէնք օրէնսդրութեան տախտակութեան.

Կուրիոս Հիւպատոս Հռովմայեցի ընկալեալ կրկին յաղթանակ ՚ի ծերակուտէն վասն կրկին յաղթութեանց իւրոց ՚ի վր Սամնիացւոց եւ Սաբինեանց, զօրս եւ ստիպեաց խնդրել հաշտութի՝ ապա դարձաւ ՚ի տուն իւր՝ որ յանդի.

՚Ի ժամանակի յորժամ էր անդ Կուրիոս, Սամնիացիք՝ որոց ընտրեալ էր զնա իւրեանց փաստաբան եւ խնամա-

փակոլու. առաքեցին առ նա զգլխաւորս
ազգին իւրեանց երևելի ընծայիւք, յոր-
դորել զնա՝ զի օգնեսցէ նց իւրով մե-
ծարոյութ̃ 'ի ծերակուտին, առ ընդու-
նելոյ պայմանս հաշտութե նպաստաւորս.
Գտին զնա յանդի՝ յիւրում աղքատին
տան, զի նստէր 'ի սախտակի առ խա-
րուկաւ, և ճաշէր փայտեայ պնակաւ:
Նայս ամ հանդերձանք լեով ցուցանեին
թէ զինչ էր իւր կերակուր: Բովանդակ
յայնմ տան չերևէր ինչ արժանի զար-
մանալոյ՝ բաց 'ի տանուտեառնէն:
Իբրև ջեկուցին զպատճառ եկաւորութ̃
իւրեանց առաջի արարին նմա զոսկին և
զարծաթն, զոր հասարակապետութիւն
իւրեանց հրամայեալ էր նց աւանդել
'ի ձեռս նր. բայց ոչ գիտէին նք զընա-
ւորութիւն Կուրիոսի: Պատասխանի ետ
պատգամաւորացն շնորհաշուք գոհութ̃,
բայց զընծայսն ընդունել չէառ յանձն
ամենևին, 'ի վերայ բերեալ ազնուա-
բարոյութեամբ, որ վայել էր ճշմարտի
Հռոմայեցւոյ. Աշխատել համոյ է ինչ,
ոչ ստանալ անչափ ոսկի և ճոխութիւն, այլ
հրամայել՝ որոց ստացեալ ունին զայն առատս.
Նայլխսի էր ընդ այն ժամանակս դրոշմ
նշանի Հռոմայեցւոց: Նանձնակի
այնմ.

այնպէս հաճոյ էր նոցա անպաճոյճ չափաւորութիւն, որ ոչ միայն չամաչէին, այլ պարծէին ևս ընդ աղքատութիւն. Բայց հրապարակաւ պահէին զհրամայական պատիւ այնպիսի աւագամեծար վեհանձնութեամբ և մեծամտութ՟բ, մինչև թուէր նոքիմբք գուշակել նոցա, թէ հանդերձեալ են լինել տէր տիեզերաց: Ն՟յս այր մեծարոյ, ահընկէց 'ի թշնամիս իւրոյ հայրենեաց, և մեծասքանչ յիւրում դարու, չունէր այլ հայրենատուր եկամուտ, բայց դոյզն կալուած՝ թերևս ոչինչ աւելի քան զեօթն լծվարաց երկիր. զի ոչինչ զանգիտէր ասել յատենի ժողովոց, թէ „քաղաքացի՝ որ ոչ շատանայ եօթն լծվարօք, է քաղաքացի վնասակար“:

Որ երբէք իշխեսցէ այժմուս համեմատել զմեծակառոյց ապարանս մեծամեծտեարց (յորս հասարակօրէն ոչ այլ ինչ երևի՝ մեծ, բայց իւրեանց պերճասէր ունայնութիւն,) ընդ հիւղ Կուրիոսի. զի յիրաւի թուի ինձ, զայդ անուն տալ իւրում ցածուն և աղքատին խրճթի: Կատոն գնայր ստէպ կճուրպ յայց աղքատին տանս՝ որ էր 'ի սահմանս Սաբինեանց, և մօտ իւրոյ կալուածոց, և ականկառոյց

հայէր

հայէր յայն զարմացմամբ, միանգամայն և յարգանօք և տարփմամբ նմանօղ լինելոյ տեառն նորա ․

ՃԼԳ. Աղէտ որբացեալն տոտոփէնտոսին ոչ յա-պաշտպանացո ոսկորց շնորհաց, և ոչ յանցանաց տոսկալի երկնուոնից շնորհաց փէրձէտոց համարցի․

Պիւռոս արքայ Եպիրացւոց կամեցեալ զարհուրեցուցանել զՓաբրիկիոս դեսպան Հռովմայեցի՝ որ եկեալ էր առ նա խօսել զկալանաւորաց լինելոց ի յանցեալ կռուին, որոյ չէր երբէք տեսեալ զփիղս, տեսանել թէ եղէ այնպէս անմեծներ, որք էին անընչասէրք։ Եւ վասն զի յառաջին դարհուրանս տեսանել ե-րևի արիութիւն կամ տկարութիւն ․ Հրամայեաց փղապետին իւրում զինու-զարդուն զարդարել զմեծն ի փիղս, և տանել ի տեղի՝ ուր հանդերձեալ էր խօսակից լինել ընդ Փաբրիկիոսի, և ունել զնա անդ ընդ վարագուրաւ, առ երևեցուցանելոյ՝ յորժամ հրամայեսցէ ։ Ի կատարել ասի, և ի լինել նշանի, ի բաց առաւ վարագոյրն. և երևեցաւ յանկարծակի այն վիթխարի գազան. ձգեալ զկնճիթ իւր ի վերոյ քան զգլուխ Փաբ-

Փաբրիկիոսի, և ձայն արձակել ահեղագոյն: Յայնժամ Փաբրիկիոսի շրջեալ մեղմով զերեսս, առանց ինչ նշանի զարհուրանաց և երկիւղի, ասէ ցՊիւռոս ժպտելով. Ո՛չ երէկ ոսկին քո զիս հրապուրեաց, և ո՛չ այսօր փիղդ զարհուրեցուցանէ:

ԺԸ. Պիւռոսի է ջանացուցանել զծառանան ընդ իւր. նոքա 'ի սեղանի' խորհուրդ 'ի մէջ առեալ զօրավարաց:

Մերոյիշեալն Պիւռոս և Փաբրիկիոս այն ինչ բազմեցան յերեկոյին 'ի սեղանն, խօսեցան զբազում ինչ իրաց. զրոյցք եղեն զիրողութեց Յունաստանի և քննութիւնք զպէսպէս աղանդոց փիլիսոփայից: Կինէաս պնդեաց յաւէտ զԷպիկուրոսինն. և մեկնեաց մանրամասն զիմաստ Էպիկուրեանց զդէց, և զհրաժեշտ կալոյ իմաստնոց ըստ նոցա 'ի հոգւոյ հրապարակական իրողութեց և 'ի կառավարութենէ պետութեանց: Ասէ. ,, Ճշմարտեն նք զվերջին վախ-
,,ճան, և զգերագոյն բարի մարդոյ 'ի
,,հեշտութիւնն. խորշին յաւագութեց
,,և 'ի պաշտամանց, իբրև 'ի վնասուէ և
,,'ի թունոյ այնր անուշակ անդաւուե-

ւոր

„յոր հաստեն դերջանկութիւն. Ո՛չ
„ոգնեն յաստուածութեան սէր, ատե-
„լութիւն, և բարկութիւն. պնդեն թէ
„ոչինչ փոյթ է նորա զմարդկանէ, և
„տարագրեն զնա 'ի կեանս խաղաղա-
„կանս, յոր անցուցանէ զժամ դարս
„անդորր՝ ընկղմեալ յանզգայ գրգա-
„ցնաց և փափկութեան". Յայտ է հա-
ւանական, թէ գիրք և հեշտասէր կեանք
Տարենտացւոց՝ լեալ իցեն ատիթ զրու-
ցացս. Այն ինչ Կինէասայ բանք 'ի բե-
րան էին, Փաբրիկիոս՝ որում նոր իմն
էր վարդապետութիւնս, և որ չիմանայր՝
ոմն այր մի Հռոմայեցի յայլոց օկզբանց՝
էշխեցէ առ իմաստունս համարել զանձն,
մանաւանդ յայնպիսում իմաստասէր քա-
ղաքի, ձայն եբարձ ուժգնակի. Ո՛վ Հեր-
կուլէս. Ո՞ր էր թէ Սամնացիք և Պիւ-
ռոս համոզեալք էին յայս վարդապետու-
թեան 'ի պատերազմել ընդ մեզ Հռով-
մայեցիս.

Ո՜ ի մինչ 'ի բաղդատել զնախնիս սո-
վորութիւնս ընդ մերումս, ակն ունիցի
տեսանել, թէ զորչափ որք լինէին 'ի սե-
ղանս քաջաց պատերազմողաց, ոչ միայն
ծանէին զերրորդութեամբք քաղաքականօք՝
այլ և զնխութեամբք գիտնականօք և բա-

րոյա-

քրյականօք. Օրօսանք այսպիսիք համեմեալք մտացի խորհրդածութեամբք և պատասխանատուութեամբք, չարժեցի՞ն առնել քան զխնձոյս ինչ, յորս յոլովակի 'ի սկզբանէ խրախութե՞ն մինչ 'ի վախճան, եպիկուրեան ձայնարձակութեամբ անհանձար զրոյցք 'ի մէջ լինին 'ի գովեստ քաղցրութեան կերակրոց, չհամեղութենէ արգանակաց, և պատուականութենէ գինեաց և ծաղկահոտ ցքեաց.

ՃԼԵ. Նաւաբեկեան, Բարեկարգութեան և հաստատութեան քաղաքի և քաղաքացւոց նաւէ ղեկահեծ նաւավարութենէ և զգօն մատակարութենէ հանճարեղ նաւավարչէ.

'Ի մէջ ամ̃ սահմանադրութեանց Նումայի, (Թգրին Հռովմայ՝ երկրորդի յետ Հռոմուլոսի) առէ Պղուտարքոս, մեծարգի եղև բաշխ ժողովրդեանն յարուեստս և 'ի գործաւորութիւնս. Անդստին 'ի սկզբանէ բաղմամարդացաւ Հռովմ յերկուց ազգաց՝ 'ի Հռովմայեցւոց և 'ի Սաբինեանց, կամ թէ կամք իշխա ասել, էր բաժանեալ յերկուս պառակ- ամենեքին հակառակս, 'ի սակս այլև այլ

ժա ող

աղգատոհմին նց, որով եբրու տոմարք էին յաչս միմեանց. յորմէ ծագէին օր ըստ օրէ 'ի մէջ նց կռիւք և հակառակութիւք. Վասն զի ասաց Նաւմայ, թէ քանի պիտանի և օգտակար էր բառնալ 'ի քաղաքէ զայն ոգի երկպառակութեան, որ տայր առել և խորհել. մինչ թէ ես եմ Սաբինեան. և այլում' թէ ես եմ Հռովմայեցի. միւսում' թէ ես եմ հնազանդեալ Տատիոսի. և միւսում' թէ ես եմ հնազանդեալ Հռովմուլոսի. Սակ խորհեցաւ ձեւն 'ի գործ առնել. Նա զի պնդեցին մարմինք, որք ոչ միանան ընդ միմեանս յամբողջութ, դիւրաւ շաղեն' յորժամ տորոյին և 'ի փոշի լուծանին. զի մանրութ մասանց դիւրացուցանէ զխառնուրդն. Վնկ հրկ հնարեցաւ բաժանել զայն երկու մեծ մարմին Հռովմայեցւոց և Սաբինեանց 'ի մանր մանր մասունս. որոց անջըրպետ նախորդացանէր ղեկտիր և զպէսպէսութի աղանց և ծագման, որ խափանարարն էր նց կատարեալ միաբանութ. Այս հայեցեալ բաշխեցն զժողովուրդն 'ի ըստ գործաւորութես, որպ 'ի նուագածութս, յոսկերիչս, 'ի հիւսունս, 'ի ներկարարս, և յայլ այսոցիկ արուեստս. կարգեալ վնն ըստ արուեստից 'ի պէտս

ժը դասս,

դասս, և կացուցեալ միւրս անչիւրմէ մի միայն մարմնի. սահմանել նց եղբայրակցութիւնս, տօնս և համախմբութիւնս. շնորհել իւրքնչիւրում ՚ի հասարակութեանց անտի զիւր մասնաւոր առանձնաշնորհութիս. և հաստատեալ այսուիկ ՚ի մէջ նց միաբանութիւն, որ մուրացողց նց զլինելն ժողովմայեցի և Սաբրինեան.

Սիա գնել սփոփութեան քաղաքացւոց, ջանալով զի մի անկցին ՚ի թշուառութիւն, կամ զերծուցանելով զնա թէ յայնմ վիճակի դտցին, գործ է գեղեցիկ ողջամիտ քաղաքականութեան. և Նումա անդստին ՚ի սկզբանէ թագաւորութեան իւրոյ, խնամ կալաւ այսմ առանձինն. Բայց գիտէր, թէ աղքատք քան զայլս միշտ դիւրամէտ են ՚ի յուզել խռովութիւնս. զի անդոհ լեալ կարգի վիճակէ իւրեանց, փափկութէ բաղդի ակնունին առանց ինչ կորուսանելոյ՝ ստանալ բզ̃ւմ. Ո՛չ լինուն ոք և ոչ դպաշտօն քաջի տանուտն. անփոյթ լինելն կերակրել և դաստիարակել և խրատել զորդիս իւրեանց. նա ոչինչ մի̃ գնեն հաստել նց զհաց, և մշտնջենաւորել զտոհմ իւրեանց, յոր հաստատեն

է

է հզօր զօրութիւն և ճոխութիւն սահ-մանաց։ Այլա 'ի բառնալ զայսմիկ ան-պատշաճութիւն՝ բաշխեն Նոսա յաղ-քատ քաղաքացիս զերկիրս տուեալս, զի հեռի իցեն 'ի դատարկութենէ և յա-նիրաւութեանց հետևորդաց նը։ Թողեալ նը փայլել յօրինաւոր բերս վաստա-կոց իւրեանց. և զի յօժարամտեցին 'ի խաղաղութիւն, պատաղեալ 'ի միջակութի, զոր չէր 'ի գործ արկանել յայլում ժա-մանակի։ Նաև արդարև չէր հնար նմա գտանել յայս սակս միջոց քան զայս ճահողական և գթասիրական. որ չէր ինչ ծանր և մեծամեծ, և չկայր լաւ ես ինչ առ առաւելուլ դարուց 'ի դարձ զզօրութիւն հասարակպետութեան, յա-ճախեալ միշտ նորանոր քաղաքացիս։

Ճ ԼԸ. Պոմպէյլէ է աղաաչութեան, որ զանձն ուն ըս և ամբը երկեցուցանէ, զի ագա ծա-ծուկ խծառապաեթեանց իւրով փրկութեան հասարակաց գործեաց, որ երկեաւ յայսմ։

Ի թագաւորութեան Տարկուինիոսի Հռովմայ՝ պատահեաց յապարանս ար-քայի հրաշանշան ինն. եւ յանկարծ օձ մի 'ի փայտեղէն սեանէ՝ որ երկեցոյց

յոյժ

՚յոյժ զթագաւորն, և ստիպեաց զնա ա-
ռաքել առս ՚ի Կտեղփոն առ հարցանե-
լոյ վասն այսր խորհուրդ ՚ի պատգա-
մախօսէն. և զփոյթ կատարումն յանձն-
արարութեանս ոչ այլում արժան հա-
մարեցաւ վստահանիլ, բայց իւրոց երկուց
որդւոց Տիտոսի և Դոմետեայ, որք
խնդրեցին միայն, զի լիցի նոցա ուղեկից
Երուստոս՝ որդի հօրաքեռ իւրեանց՝ որոյ
անուն Թարգմանի անէին, ոչ թէ անորդ-
ամն և խօթամիտ. զայս մակդիր անուն
ընկալաւ նա խնդում, զի էր արհամար-
հանօքս ծանկեսցէ ղաղատիչն ժողովըր-
դեան Հռովմայ, որում դեռ չէր դիպող
ժամանակ հանդիսանալոյ:

Տարան է իւրեանս երկոքին ար-
քայորդիքն զԵրուստոս ՚ի Կտեղփոն, ոչ
այնչափ ուղեկցութեան աղագաւ, որչափ
՚ի զբօսանիլ զճանապարհայն աղաւաշուք
նր և անմտութ: Իբրև հասին՝ անդէն
վաղվաղակի ընծայեցին զդահմունս իւր-
եանց Կապողոնի, և ծաղր առնէին յոյժ
զԵրուստոս, զի ոչ մտոյց նմա ինչ՝
բայց ցուպ մի անհարթ. և այն էր եղէգն՝
զոր ՚ի ծածուկ ծակեալ էր նր, և ան-
ցուցեալ յայն ձող ոսկի, ՚ի խորհրդաւոր
նշանակ իւրոյ բնաւորութ և հանճարոյ:

Իբրև

իբրեւ կատարեցին որդիք Տարկուինիոսի՝
որ ինչ յանձն էր նց՟, եւ ընկալան ըղ-
հրեշտակութեան իւրեանց զպ՟տսխանի,
կա՛մ եղեւ նց՟ ը՟ փայրաքննութ՟ իմանալ,
թէ ո՞ ’ի նոցանէ սահմանեալ իցէ լինել
յաջորդ թագաւորութեանն։ Ետ պա-
տասխանի պատգամախօսն։ Նա՝ որ նախ
համբուրեսցէ զմայր իւր։ Բայց եդին Տար-
կուինեանք ’ի մէջ իւրեանց ’ի ծածուկ
ունել զբանն . . . եւ հաստատեցին ’ի մէջ
իւրեանց արկանել վիճակ, թէ ո՞ ’ի նո-
ցանէ երկոցունց է՟ հասանելն ’ի Հռովմ
յառաջագոյն համբուրեսցէ զմայր իւր։
Դիպուածս յայտ արար, թէ տխմար եւ
անմիտ կարծեալ Բրուտոսն լաւ քան
զայլսն իմացաւ զմիտ պատգամախօսին,
զի կամաւ անկեալ ’ի գետին համբու-
րեաց զերկիր. ’ի մտի եդեալ՝ թէ նա է
հասարակաց մայր ամ՟ մարդկան։
Այս Բրուտոս եղեւ որ արտասահմանեց
զթագաւորութիւն Հռովմայեցւոց՝ ըղ-
հասարակապետութիւն հաստատելով։

ՃԼԷ. Որչափ ’ի ճոխութեան կամ ’ի խրախու-
թեան ոչ եղէ, պարտ է նմա յուշի կալել և
զնեճակ նախնիքն իւրոյ անփառաւորութեան կամ
աղքատութեան.

’Ի Հանդիսի Սատուրնեան կամ Կրոնոսեան տօնից, որ կարգեալ էր ’ի պատիւ Սատուրնոսի՝ այն է Կրոնոսի՝ սովորութիւն իմն իմաստութբ̄ կարգեալ էր ’ի Հռովմ ’ի յիշեցուցանել Տեարցն թէ՝ և ստրուկք մարդ են իբրև զնոսա, յորմէ և արժան է գթասիրել առ նս̄, և հայել ’ի նոսա իբրև ’ի ստորադաս սեղանակիցս և բարեկամս։ Սո̄կ ’ի Հռովմ յայնմ արարողութեան, որում քան զամ̄ հնար էր ազդել ամբարտաւանութիւն և անձնահաճութիւն, զի ’ի յաղթականն հանդիսի, յորժ̄մ յաղթողն ’ի բարձանց շքեղաշուք կառաց տեսիլ էր ամենայն ժողովրդեան, դնէր նա ’ի թիկանց զմի ’ի ստրկաց՝ ասել նմա ը̄ պահս պահս. Յիշեա՛, զի մարդ ես։



ԺԸ. Ողջաղնեայ և օրհնեայ համարձակախօ-սութեան դեսպանաց Գրեգորեանն, որով սատա-նան երաշխաւորն փառափայլութեան ճառեսցէ-աչանէ.

Ոմն 'ի խստամբեալ ծերունեաց՝ եհարց ցդեսպանս Գրիգորեանն, զի՞նչ պատիժ արժանաւոր համարիք ձերոց քաղաքակցաց. յայնժամ մի 'ի նոցանէ ետ պատասխանի. Օյն՝ որոց արժանաւորին համարելոյն արժանի աղքատութեան. Տեսեալ հիւպատոսին զխոժոռութիւնն՝ զոր արկ 'ի սիրտս այս պատասխանի խորովս, և ո՛չ ցածուն՝ ո՞չ փայլել էր յայնժամ. առ յորդորելոյ տալ միւս ևս պատասխանի քաղցր, իւրում գործակալն և սիրալիր հարցման, ասէ. Ապա եթէ ողորմութեամբ ձեր ծուռորողին պարտէքն, որպէս հաշտութեան չու-ջէք ընդ մեզ. Ասէ դեսպանն. Հատուածա-և մշտնջենաւոր, եթէ պայմանքն իցեն բարե-ւորք. առժամեայ և սակաւաւոր, եթէ չիցեն այդպիսի. Ոմանք 'ի ծերունեաց առաւել ևս զայրացան ընդ այս երկրորդ պատաս-խանի. սպառնալիս իմն համարեալ զայն, և ո՛չ թէ բացերև յայտարարութիւն մարտի. բայց խոհականքն և զգօնաւորք [illegible] համարեցան. Առաջի արարին,

Թէ

Թէ այդ է պատասխանի առն քաջասրտի և նախանձաւորի իւրոյ ազատութեան։ Ասեն. Աղաչեմ համարեցէք թէ ժողովուրդ ինչ համագամար, կամ թէ առանձնաւոր ոք կայցէ մնայցէ կամաւորապէս 'ի վիճակի՝ ընդ որ է անգոհ, և ո՛չ խնդրեսցէ դերծանել վաղվաղակի եթէ յաջողագոյն ընկեսցի։ Հաշտութիւն չէ՛ աներկիւղ. բայց 'ի կողմանէ այնց՝ որք առնենն զայն յօժարութեամբ սրտի. և չէ՞ք ակն- կալել հաւատարմութեան 'ի ժողովրդենէ՝ զոր ծառայեցուցանել կամիք։ Հիւպատոսն պնդեաց ազդու բանիւք զկարծիս. և ասէ 'ի ձայն բարձր՝ լու 'ի լու ամենեցուն, որք այլազգ ինչ խորհէին. Սոքա միայն՝ որք նախանձայոյզք են ազատութեան, արժանի են լինել Հռովմայեցի։ Այս կարծիք զօրացան. և տուան Պերվերնոնացւոց իրաւունք հռովմէական քաղաքացութեան։

ՃԻԹ. Մի բան նորալուր և օգտակար՝ առակել առակէ 'ի մէջ ապստամբելոյ ժողովրդեան եկեալ յանդգնութեան և ապստամբութեան ծնեալ 'ի կռուէ։

Որ երբեմն զի ժողովուրդն հռովմէական նեղեալ յոյժ յանիրաւութեանց ծերակուտին խոյս ետ 'ի լեառն նուիրական.

նուիրական։ Ագրիպպաս Մենենիոս ումն 'ի նորոց ծերունեաց՝ և այր մեծարու քաջս ամենեցուն՝ յանձն առ 'ի վար արկանել զպաշտօն միջնորդի, և զդժնութեամբ խորով զինչոց զապստամբսն 'ի հաշտութիւն ընդ ծերակուտին։ Առաջի արար նոցա զողբալի հետևանս երկպառակութեանց, յորոց երբեմն լեալ էր կործանումն ծաղկեալ թագաւորութեանց, և զհազարապատիկ օգուտ միաբանութեան, որ ամբառնայր 'ի գերամբարձ զօրութիւն և մեծութիւն եւս և զտկար պետութիւնս։ Այլ 'ի վախճան բանին եբեր և առակ, զոր ամենեքին գիտէին լինել առասպել, բայց նորութեամբն յայնժամ կարճ իմն ազդեաց 'ի սիրտս ամենեցուն։

„Յորժամ անդամք մարդկային մարմնոյ՝ ասէ,
„չէին ընդ միմեանս միաբան՝ որպէս արդ,
„և անդամք իւրաքանչիւր էին տարա-
„խորհ և տարալեզու, ցասուցեալ այլոց
„մասանց մարմնոյ՝ զի ամենքն աշխատէին
„վասն ստամոքսի, և նա անգործ և հեշ-
„տացեալ՝ վայելէր 'ի դրգանս՝ զոր հան-
„դերձէին նմա, առ հասարակ ընդդէմ
„դարձան նորա. Հաստատեցին բան 'ի
„միջի, զի ձեռք այլ մի՛ տարցին զկերա-
„կուր 'ի բերան, և բերանն մի՛ 'ի ներքս
„ընկալցի

,,ընկալցի, և ատամունք մի աշխատ լե-
,,ցին 'ի ծամելն: Բայց կամեցեալ ձնշել
,,այսուիկ զստամոքսն սովու, անդամք
,,ամ և առհասարակ մարմինն անկան
,,'ի թալկութիւն և 'ի նուաղումն. և
,,յայնժամ ծանեան յեղելոց իրաց, թէ
,,ստամոքսն ոչ կայր անգործ՝ ոչ կար-
,,ծէին. և թէ յառնուլն զսնունդ յայ-
,,լոց անդամոց, սնունդ մատակարարէր
,,և նա նց, հաղորդեալ ամ մասանց
,,մարմնոյ մարսողութեամբ կերակրոց՝
,,զարիւն, որ զօրացուցանէր զնոսա և
,,պահէր 'ի կեանս, հոսեալ ընդ ամ
,,երակս": Համեմատեաց զայս ներքին
հակառակութիւն մասանց մարմնոյ ընդ
երկպառակութեն, որ որոշէր առ ժամն
զժողովուրդն 'ի ծերակուտէն. և այս նը-
մանաբերութիւն որ էր յար և նման,
հաճոյ եղև ժողովրդեան.

## Զի Յաճախեալ իրաց Սպառնէ ատենի ծերակուտին, առ հասարակութեան պահեալ էնջոնչլաքեան:

Ո՞ երևս չերկնչելը 'ի չարեաց ատոր, որչափ և մեծ լիցեն: Ոչ այդպէս, կարէ իսկ երկնչել, բայց առ ապիրատութեան և

և թուլութեան սրտի հայեցեալ յերեսս մեծամեծաց՝ ոչ իշխէք մտանել ՚ի մի կողմանց · յուսացեալ իցէք թերևս ՚ի դիս անմահս, որք յոլովակի ապրեցուցին զինքնակալութիւնս · օգնականութիւն դից ոչ ստացանի ուխտիւք, կամ տկար և վատասիրտ հայցուածովք · Արթնութիւն և ժրութիւն և քաջ խորհուրդ միայն արժանաւորեն զձեզ նոցուն պաշտպանութե · եթէ տայք զանձինս դատարկութեան և պղերգութեան, զի՞ւր խնդրէք յօգնականութիւն դից · բարկանան ձեզ և դառնան ՚ի թշնամութիւն · փոխանակ զի ոչ խորհէք իմաստութեամբ, այլ յիմարութեամբ ·

Ճխա. Ամենեցուն՝ ծանուցանէ իշխանաւորաց արժան է ունել զխոհեմութիւն կամ զնախատեսութիւն յաղագս երջանկութեան ·

Պոմպէոս եւ պահել Կեսարու զկուսակալութիւն (կրկին) Գաղղիոյ և Իւրիկոյ զամս հինգ · և այն էր ՚ի մահ մերաւորել զիւր զօրութիւն և զփառս, զիւր ապահովութիւն և զկեանս · Սան զի այս շարունակութիւն եղև այնր, որ եւ Կեսարու ժամանակ խորարմատ հաստա-

տատելոյ, մինչև անհնար լինել խլել զնա. և հայրն եղև մահու կամ ընդ օրինօք լինել նորա, և կամ ձեռնարկել 'ի մարտ: Կուրութիւն Պոմպէոսի անլուր էր և օտարոտի, մինչև բաղում ձգամբ բանալ զաչս նորա:

Կատոն առ ըղիմանալ այսմ օրինի ոչ կայաւ զշաւիղս՝ զոր կալեալն էր ընդդէմ առաջնոյն. Փոխանակ շրջելոյ զկուր բանս առ ժողովուրդն, շրջէր առ Պոմպէոս: ,,Ջհայիս (ասէ,) զի ,,առնես քեզ տէր գլխաւոր. Իբրև ը- ,,լծով լինիցիս և սկսանիցիս զգալ ըզ- ,,բեռն, ոչ կարասցես ոչ 'ի բաց թօթափել, և ոչ բառնալ, անկանիցիս քո բե- ,,ռամբդ 'ի մէջ հասարակապետութեն. ,,և յանժամ յուշ լիցին քեզ՝ բայց ,,անագան, ազդարարութիւնք Կատոնի. ,,յորս էր օգուտ քո անձնական, և ,,օգուտ եւս արդարութեան և օրինաց ,,և ազատութեան''. Սոյն ասէր և Կիկերոն առանձին առ Պոմպէոս. Բայց ոչ ազդու ազդարարութիւնք առաջնոյն, և ոչ քաղցր խրատք երկրորդին՝ խորտակեն զթովչութիւնն որով կաշկանդեալ էր. Համարէր զիւր զօրութիւն մեծագոյն քան զամ պատահար, կարծել

թէ

Թէ Կեսար յամմի պէտս ունիցի յիւրմէ. (Յորմէ տուժեսցի չարաչար կործանումն անձին և ազգատոհմին իւրոյ).

Ձխբ. Աշխենեցեան հատանէ դադարեալ հա-րուեալ ձեռագրական անէրտառութեանց.

Սպականութիւն դատաստանաց հաւաքոյեցաւ էր անցեալ ըստ չափ. Պատանի ոմն լեհանուն զգացմոյց զայս Պոմպէոսի զայսու ժամանակաւ. Սա յապատանի Պիսոն անուն՝ ամբաստան լինէր զուռմունէ Մանլիոսէ Կրիսպոսէ, որ յայտնի էր մեղմ̃րտ, բայց պաշտպանեալ ՚ի Պոմպէոսէ. Պիսոնի տեսեալ՝ թէ մեղապարտն ձողոպրիլ ունի ՚ի ձեռաց, ՚ի դիմի հարաւ նորուն խնամակալութ, զոր և խստիւ կշտամբէր. Պոմպէոս սաէ. Իսկ զեղ̃եր ոչ ամբաստան եղեր զնէն. Պիսոն սաէ. տուր ինձ երաշխաւորութիւն հաւատարմութեան, թէ յամբաստանել ինձ զքեզ չյարուցանես նոր դատաստան, յայնժամ խոստանամ քեզ՝ թէ ծովու չյայց առ դատաստանաց վասն քո դատապարտութեան, յառաջ քան զՄանլիոսին.

---

ՃԼԴ. ՀԱՆՃԱՐԵՂ Է ՆԱ, ՈՐ ՃԱՆԱՉԷԼՈՎ ԶԱՆ-
ՑԷՆ ՇՕՐՀՈՒԹԻՒՆ՝ ՉԱՓԱՒ ՊԱՅ ՀՐԱԺԵՇՏ Ի
ԾԱՆՐԱԲԵՌՆ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷ ՓԱ-
ՂԱՓԱԿԱՆ ԽՐԱՏՈՒԹԵԱՆՑ.

Մանլիոս Տորկուատոս անուանեցաւ Հիւպատոս՝ քուէարկութեամբ Հարիւրեկին երիտասարդաց, որ կոչէին Սեւերեան. խուռն ընթանայր ժողովուրդն զՄանլիոսիւ՝ որ էր անդ, շնորհաւորել նմա զիւր առաջաշարժումն. Յայնժամ Մանլիոսի մատուցեալ յատեան Հիւպատոսին, աղաչեաց զնա զի հաճեսցի լսել նմա. Այլին ամբխին մխա եդեալ՝ իմանալ թէ զինչ ունիցի խնդրել. և ահա հրաժարեաց նա յընդունելութէ գերագոյն գահի Հասարակապետութեն, ՚ի սակս տկարութեան իւրոյ տեսութ. ՚ի վերայ բերեալ թէ ,,բարեգոյն յան-
,,դգնութիւն է զօրագլխի, որպէս և
,,նաւուղղի, որոյ պէտս ունելով առաջ-
,,նորդութեան այլոց օտարի, ընդդէմ
,,թէ այլք աւանդեսցեն ՚ի նա զհոգ զիւր-
,,եանց կենաց և զկարևոր իրողութեանց.
,,Սան այսորիկ աղաչեմ (ասէ) զՀիւ-
,,պատոսդ պատուէր տալ նորոյ քուէ-
,,արկութեան Հարիւրեկի երիտրդց.

,,որ

,,Տէր արկ ղէր քունեալս, և յորդորել
,,զնոսա նայել յառաջ քան զնորու-
,,թիւն հիւպատոսաց ՚ի հանգամանս
,,պատերազմին՝ որ մերձեցեալ է յԻտալիա,
,,և ՚ի մեծամն՝ որ դատանք արդ հասարա-
,,կապետութե''։ Համբերեալքն փրար պա-
տասխանի, թէ ոչ փոփոխեմ զմիտս, այլ
առաւել և հաստատեմ զոր արարի։

Յայնժամ Տորկուատոսի Մանլիոսի կրկնեալ անդրէն՝ ասէ համարձակագոյն և. Թէ հեռագրեալ եղեց ես, ոչ տարայց անկարգութեան ձեռաց քննայեց, և ոչ տաց խառնութեան ինձ հրաման։ Այլ տարձարա ՚ի նոր ծանուցութեան։

Ջնջե. Ոսկէ ամառ կնագործութեան ուրանա
կաւանարար կնոջ գաղղիացւոց, որ գերօրինակ
յարդարեալ է. արժանաւոր զաղանութեան և
հետադոտ հաստատութեան։

Օգնի յաղթութեան Մանլիոսի հիւպատոսի համօրինակցելոյ՝ գաղղիական Յունաց, յաւուրս լինելոյ նր՛ անդ. կին մի ՚ի կուսանաւորաց նր՛ արար. քաջութե յիշատակաց արժանի, Նոսն էր ուրա Դրամարէ. և էր կին Սրոնիկգանի՝ մի ՚ի գլխաւորաց կամ յիշխանաց Պողիկ-ացւոց,

ացուց, Մեծանունն յոյժ իւրով ողջախո-
հութբ, ոմ և չքնաղ տեսլեամբ : Ի բզմ
կանանց միջի որք կալանաւորեցանն է
սմա 'ի կոտորածի լերինն Ողիմպոսի՝ հա-
րուլ 'ի սէր ոչ հարիւրապետ ումն արժա-
թաւէր, միանգամայն և իգաւէր : Նորին
վաղվաղակի ջանացաւ համոզել զնա 'ի
հաւանութիւն իւրոց պիղծ կմց . բայց
ոչ կարացեալ յաղթել դիմակալութե
նր և հաստատուն մտացն, խորհեցաւ՝
թէ իրաւունք իցեն բռնաբարել զկին,
ուր ձախորդութիւն ցածուցեալ իցէ զնա
'ի ստրկութիւն : Նա 'ի մոռացուցանել
նմա զկնանան, առաջի արար դարձուցա-
նել զնա յազատութիւն, բայց ոչ առանց
փրկանաց : Սակ էարկ է նմա գումար
ինչ դրամոյ . և 'ի ծածկել զխարդաւա-
նութիւնն յայլոց հռովմայեցւոց, թո-
ղացոյց նմա առաքել առ ազգականս
իւր զմի 'ի կալանաւորաց՝ ընդ որ հա-
ճեցի . և նշանակեաց առ գետովն տեղի,
ուր փոխանակութիւն լիցի տիկնոջն է
ոսկւոյ : Գնէպ եղև զի 'ի կալանաւորաց
միոյն գտաւ մի յիւրոց ստրկաց . 'ի սա
արկ կինն զաչս . և վաղվաղակի հարիւ-
րապետն եհան զնա 'ի գնդէ պահպանաց
է մութն : Ի կալ գիշերի երկու աղջա-

 կանք

կանք կամ բարեկամք տիկնոջն դստան 'ի տեղին, ուր էած հարիւրպ̃տն զկինն կալանաւոր ։ Իբրեւ ետուն աք̃ զտաղանդն ատոկեան՝ զոր հաւատացեալն էին, զի այն իսկ էր սակարկեալ գինն, ասէ տիկինն իւրով բարբառով ցայնոսիկ՝ որք եկեալն էին ընդունիլ զնա, մերկել ըզսուսերս, եւ սպանանել զհարիւրապետն՝ որ պատաղեալն էր 'ի կշռել զոսկին ։ Յայնժամ կնոջն խրախացեալ՝ զի եբարձ արեամբն նր̃ զնախատինս իւրոյ ողջախոհութեան, էառ զգլուխ զապայն՝ զոր նա ինքն քաջութ̃ եհատ. եւ թագուցեալ զայն ընդ իւրովք հանդերձիւք, չոգաւ առ այր իւր Որտիագոն՝ որ դարձեալ էր յիւր տուն, յետ կոտորածի իւրոցն 'ի լեառնն Ոլիմպոս ։ Մինչեւ գիրկս արկեալ էր նմա, ընկէց զգլուխ հարիւրապետին յոտս նր̃ ։ Զարհուրեալ առնն ընդ այն տեսիլ՝ եհարց . Ո՞վ իցէ գլուխդ . եւ զի՞ եղեւ քեզ, զի ձեռն արկեր 'ի գործ վերագոյն քան զկանացի բնութիւն ։ Յանկարծակի իմն շառագունելով միանգամայն եւ վառեալ յանհնարին բարկութիւն, խոստովան եղեւ զկկանս, զոր ընկալաւ, եւ զվրէժխնդրութին զոր արար ։ Յա̃մ մնացուածս ժամանակաց զոր եկաց

պահեալ միշտ զնոյն սէր միաբանութեան
կենաց և փառաց, որ գլխաւոր պարծանք
են իգութեան, և յանձին կալաւ զպա-
տիւ առնացի և մեծագործ քաջութեան:
Պլուտարքոս պատմէ զայս 'ի Ճառն ա-
ռաքինութեանց և քաջագործութեանց
Տիկնաց. և սա հասոյց 'ի մեզ զանուն
նորա, զարժանաւորն աւանդելոյ
ապագայից:

ՃԽԵ. 'Ի չէաս հասարակաց է ճարէոց
տնօրէնութեան հասարակութեան:

Բանն ազդու է իմաստութիւն խոր-
տութիւն իշխանաց՝ առ զուսպ ունե-
լոյ զքաղաքացիս երկիւղիւ, առ պա-
հելոյ զբարեկարգութիւն յամ կողմանս
հասարակութեան, առ զգուշաւորելոյ
'ի պահպանութիւն սովորութեանց և
կանոնադրութեանց. և քանզի զօրաւոր
արդեամբ է ընդդէմ մոլութեանց, անկար-
գութեանց, օրինազանցութեանց, խռովութեանց
և ցոփութեանց, որք օր ըստ օրէ առաւե-
լուն, եթէ ընդ պահս պահս ոչ ընդդէմ
դնիցին հաստատուն պատնէշք՝ որ զդէմ
կալցին, կամ գէթ մեղմեսցեն
զընթացս:

Աշնէ-

ՃԽԷ. Աղքատն և փքնոտն ագահականութեան
ժողովմայեցւոց.

Որում արդարութեան մայրն է անկեալ յառնէն, յորում որոշեալ է մեղապարտ համարիլ, և երբեմն այնպիսիս չարչարել զանձինս գնով, որք չեն ի կողմն ժողովմայեցւոց. և առատաձեռնել զնմ նպաստս և շնորհս այնց՝ որք բանտարկու և թշնամի յայտնեցան նմ. Տես, ցոր վայր հաստուցանէ իղձ և անձուկ տիրելոյ. Շաղուցանէ զմեզ առ նմ պարտաւորութիւնս և պատշաճողութիւնս. Նա արդարութիւն, յորժամ խոչ լինի մերոց առաջադիր բղձանաց, պատարագէ երբեմն զայն ամենայն։ Արշամի յառաջատիմք ի հաւմէականն պատմութեան, տեսանեմք զի ես քան զես զերձանին և ապախտ առնեն զնախնի իմաստս ազնուաքարդյութեան և իրաւասիրութե, առ գերկս աբկանելոյ քաղաքավարութե իմն հակառակողն նմ կանոնաց առաքինութ. (Վրմն. Հռովմ. հատ. Գ. երես. 698.)

Ոչ ի բնմ ժամանակս են, յորժամ հետե ի պատրզմն յաղթեն արդարութեան, և իրաւունք հէքին յորդորս շահասիրութեան անձին. (Պնոյն. Գ, հատ. 242.)

Ասու-

## Անշքուանք չամ տառանք Ճարտասանաք՝ ծաղկոտաղ հաւաքեալք ՚ի նոյն Մատենագրոյ։

Ահ և երկիւղ՝ անզօր կապանք են սիրոյ․ Ը՛ բառնալ քո զայնոսիկ, սկիզբն տրացեն առել՝ որք դադարեցին երկնչել ։

Աճնցեալքն ՚ի բուն յիւրեանց երկրի, պահեն զնմ զիւրեանց ոյժ և զօրութիւն․ բայց որք փոխադրին յերկիր օտար, ՚ի սուղ ժամանակի այլայլեալ յոռանան․

Ամենայն ինչ վայելչական է քաջատոհմիկ առն․

Ամ նորութիւն է կասկածաւոր։

Այր երկայնամիտ և հեզ՝ բժիշկ է սրտի ցեց ոսկերաց՝ սիրտ հոգած։

Այր վաստակաբեկ հետևող բարեյուսոյ, երբ տեսանէ զնախանձ չարեաց՝ ըննապէս փոխի ՚ի ձանձրոյթ և ՚ի տաղտկութիւն։ Արք չարասէրք սովորաբար խնդրեն պղտորել զիրսն, կարծեն թէ առաւել յաջողի որս իւրեանց։

Անխոհեմ է՝ և նաւավար և զօրավար, որ պէտս ունելով օտարին աչօք առնել զնմ, խնդրիցէ յինքն պատսպարել ընկեանս

կեանս և զբաղդ այլոց:

Անհնա՛ր է բարի առնել ամենուն, բայց հնա՛ր է ցուցանել շնորհութիւն առ ամենեսին: Փո՛ղ է սա՝ որ հաճէ զմիտս բազմաց, բայց ո՛չ նուազէ ինքն զգանձ բաշխողաց:

Անձնական օգուտն իշխեցո՛ղ է մարդկան, մանաւանդ յայնս՝ որք պատաղեալ են 'ի մեծամեծ իրողութիւնս:

Անձինք իսկ համեստք գտանին երբեմն նշաւակ զրպարտ ամբաստանութեանց, և արհամարհանս իսկ ընդունին յանիրաւի, յորժամ իւրք իւրեանց են ը̅ նախանձալլուկ բուռն և խեղաբարոյ թըշնամիս:

Անձինք մեծամեծք չե՛ն միշտ զերծ 'ի ծանակ տկարութենէ:

Անմտութիւն բորբոքեալ 'ի սրտի երիտասարդի, դաւաղան և խրատ հեռի է 'ի նմանէ:

Անյա՛գ է փառամոլութիւն, և չշատանայ դուղնաքեան, որում մա՛րթ է աներկեան ակնկալել:

Ապրուստ նց (ըր կաշառառուաց) բազումք են, սակայն և այն ո՛չ մնասցէ առնոսա ը̅ երկար. քանզի վաստ արանց ո՛չ երբէք հարստութիւն է՛նչ կարէ լինել շատ.

շատ. Դէմոսթէնէս.

Առաջին օրէնք պատմութեան է՝ չիշխել ասել ինչ սուտ. երկրորդն՝ չիշխել ՚ի չասել ինչ ճշմարիտ. և զի ՚ի գրութեան մի կայցէ կասկած ոչ կողմնակալութեան, և ոչ ոխութեան. Կիկերոն.

Առատաձեռնութիւնն է առաքինութիւն մեծահանձանց. որպէս արծաթսիրութիւնն է մոլութիւն փոքրոգեաց և անարգաց։

Աստուած բառնայ երբեմն ՚ի զօրագլխաց զամենայն քաջալերութիւն և ընդունակութիւն.

Արդարև դժուարագիւտ է քաջութիւն և խոհեմութիւն, բայց արդարութիւն դժուարագիւտ ևս է քան զայլ ամ առաքինութիւն.

Բազումս զօրէ բարկութիւն ՚ի սրտապնդել զքաջութիւն։

Բազում անգամ՝ քան ծաղրական՝ քան զդժնեայ քաջ և ՚ի դէպ՝ ըղձմամբ՝ գործ վճարէ.

Բախտն կուրացուցանէ զմարդ՝ յորժամ ոչն կամի թէ զերծցին յաղետից, զոր պատրաստեալ է նմա.

Բարկութիւն առանց հզօր զօրութեան՝

տկար

տկար գործի է վրէժխնդրութեան։
Բուռն հար դիպօղ առթից զմարսից։
Գերապանծ մտաց վերջացեալ յաւէտ՝
արհեստ կառավարելոյ զքաղաքացիս,
քան յաղթահարելոյ զթշնամիս։
Գնայ յուշիկ՝ ուր դժուարին են անցք։
Գնացք խելամտաց անվրէպ կանոն են
հպատակաց, որոց ոչ պիտին 'ի գործել
զարիս՝ հրովարտակք և կարգաւորութիւնք,
այլ բարի օրինակք։
Գովեստ մեծ և սիրտ վեհանձնեայ։
Մեռանիլ աղքատ ընչիւք, այլ Ճոխ առա-
քինութիւք և փառօք։
Գովէր Պլատոն զդարն զայն, յորում
յանցուածք էին համարակալութեան
արժանաւորք՝ զուղնաքեայ ինչ թիթ-
ղունք արծաթոյ։ Սենեկա։
Դատարկութիւն և անգործութիւն՝
վնասակար աղբիւր են մեղկութեան՝
ցոփութեանց և անկարգութեանց։
Դարանք և խառնք 'ի յաջողուածս և
'ի հասարակաց գովասանութիւնս թոյն
ինչ նուրբ, որ գաղտագողի մտանէ 'ի
սիրտս և ազդէ գաղտնի իմն ամբարտա-
ւանութիւն, յորմէ և մեծամեծ խոկ ա-
քանց և իմաստնագունից՝ դժուարին է
լինել զերծ։

Նրաւ

Երախտագիտութիւնն է՛ առաքինութի, որ արդ՚յն է յա̃մ ժամանակի, և յաչս ա̃մ երկրի. իսկ ապերախտութի̃ն մոլութիւն ա̃մ ուրեք նողկալի:

Երանի պետութեան, որոյ երևելի պաշտօնեայք նմա̃ն են օրինաց, որ ոչ պատժեն զոք երբէք կրիւք և ցասմամբ. այլ միայն արդարութ̃ և հասարակաց օգտի դիտողութ̃:

Երբեմն վերին տեսչութիւն կուրացուցանէ զայնոսիկ՝ զորս խորհի պատուհասել:

Երկիր 'ի ընէ արդաւանդ և բարեբեր՝ թէ ոչ մշակիցի, ընդ բարի բոյս՝ բերէ և ըզ̃մ մոլախոտս:

Օիա̃րդ վստահասցի յօտարոտիս, որ թշնամանայ իւրոց ազգայնոց:

Ընդ կրետացիս լեր կրետացի:

Ազատորին մի միայն անուանիկ ամրոց է սէր քաղաքացւոց: Սենեկա:

Ազատութիւն ազգէ յազգ փոխի վ̃ անիրաւութեանց, բռնաւորութեանց, հարստահարութեանց՝ որք գործին 'ի նմա, և վասն դըժողութեանց, որք բաղմօրինակ զօրանան 'ի նմա:

Ժողովրդոց քաջաց է ա̃մ ինչ:

Դէպ

Ի գալ 'ի խոյզ ճշմարտութեան ,
անդ բանն և բարք հակառակ կան ։

Իմաստնոյն պարտ է յերեւելն ը̅ ժամանակին ։ Աղէքսանդր ։

Իմաստուն վարդապետ գանիւք բառնայ 'ի տղայոց զցնորս , որք յետս ընկրկեն զնա յառաքինի գործոց ։

Իշխանաւորն է օրէնք խօսուն , և օրէնքն իշխանաւոր՝ համր ։ Աղէքսանդր ։

Լաւ է յաղթել՝ ըստ կանոնաց գործելով, քան չարաչար հնարիւք յաղթել անիրաւութեան ։

Խստիւ գնալ է այնոսիկ՝ որք կամին դառնալ 'ի զգաստութի, է անխոհեմութի ։

Ծեծեալ զերկաթ , մինչ ջերմ է ։

Կան չար օրինակք , որք չար ևս են քան զնոյն ինքն զյանցուածս ։

Կեանք առանց բարեկամաց՝ չէ 'ի կենաց համարի ։

Կիծ է ը̅ համբոյր գովեստի խածատող ղուի̅ նախանձու ։

Կտրի առանց ինչ ախտակցութե անդամ փուտ , զի մի և այլ անդամք փտեսցին ։

Հաստատել պատիժ 'ի մի յանցանաց յորմէ քստմնի բնութին, է առաւել ուսուցանել մարդկան վարկանիլ զայն ոչ կարելի իմն, քան խափանել ։

Հաս-

Հաստատութիւն միայն է բազում ան-
գամ՝ փոխել զկարծիս։

Ճշմարտութիւնն միշտ մնայ անայլ։

Ճշմարտութեան հնար է ըստ իբրաց ինչ աղօտանալ, այլ ոչ շիջանիլ իսպառ։

Ախտանք և նախանձ են մոլութիւնք՝ որք գիտեն միայն արկանել գերա-
պանծ համբաւոյ։

Ահ և կեանք ներ լեղունի է, և որ յաղ-
թէ նմա, կերիցէ զպտուղ նորա։

Մարդս չէ ամեհի և անընտել. և բը-
նաւորութիւն ՚ի նմա՝ է անընդհատուր մոլութիւն, որում հնար է փոխել փո-
փոխութեամբ բնակութեան և այլազգ-
կենաց. որովհետև այսպիսի հնարիւք ըն-
տելանան և գազանք ամեհիք։

Մեծ յաջողուած յոլովակի է մեծ փորձի։

Մեծարգոյք ընծայեալք առաքինութեն, ճշմարիտ տանջանք են նախանձու։

Մի իմաստուն խորհուրդ աւելի արժէ
քան զհազար բազուկ։

Միաբանութեամբ իրք փոքունք աճեն, անմիաբանութեամբ վատնին մեծամեծքն։

Մի՛ սակս մահու թշնամւոյ քո ուրախ լիցիս, գիտելով՝ զի ամենքին մեռանելոց եմք։

Յայնժամ սկսանի մարդ մեռանել, յոր-
ժամ սկիզբն առնէ կեալ։

Սիրո-

Յիրողութեան մարդոյ՝ խորագիտութիւն և խորամանկութիւն աւելի ազդեն քան զյայտնի զօրութիւն և զբացերև խոր-հուրդ։ Ոչ ի պարտ է գիտել մի ապէս 'ի վեր արկանել զոյժ և զխորագիտութիւն։

Յոլովակի պատերազմն խափանէ զօրէնս՝ որ եղանն 'ի ժամանակի հաշտութեան. և հաշտութիւնն նորոգուցանէ զայնս՝ որոց պատերազմն եղ սկիզբն. որպէս նաւն այլազգ ղեկավարի 'ի խաղաղական պա-հու, և այլազգ յալեկոծութեան։

Յորժամ ծովն է 'ի խաղաղութեան, չիք ոք՝ որ ոչ գիտէ վարել զնաւն. բայց իբրև յառա-նէ մրրիկ սաստիկ, և նաւն լինի ալեաց և հողմոց խաղալիկ, յայնժամ պէտք են առն իմաստնոյ և քաջի, հմուտ և փորձ նաւապետի։

Նախանձն անորդ քան զամենայն մո-լութիւնս՝ կուրացուցանէ զայնոսիկ, որք թշուառք լինին այնմ անձնատուր։ Նա զգուշացեալ սակաւ խօսցէ։

Նախնի բնութիւն էր Հռովմայ

Ներող լինել ժողովրդոց հպատակաց, և գլխահար ամբարտաւան դիմակալաց։

Շարժումն և դղրդիւն առաւել են օդ-ոյն

Շեղջեա՛ ըղձանձ՝ շեղջեա՛ տրդար՝ եթէ բաւեսջ. ապա թէ ո՛չ՝ շեղջեա՛ ըղձանձ՝ ես և բաւես.

Ովրատիոս.

Շուն վաղածին ծնանի լակոտս կոյրս.

Շփոթ է, որ ինչ 'ի փոյթ մանրի. Մենեքա.

Ոգի երկպառակութեան և կողմնասիրութեան կործանումն է իրողութեանց.

Ոչինչ բնաւորութիւն այնքան դիւրամէտ առ նախանձ, որքան որոց տոհմ և բաղդ չէ' օրտիցն զուգական. վասն զի ատեան զառաքինութիւն՝ ոչ բարի իմն արտաքին.

Ո՛չ միշտ գտանի ամ իմաստութիւն 'ի գլուխ զօրագլխի.

Որչափ և բուռն խիզախիցէ ժողովուրդն, անսայ բանի՝ յորժամ լիցի վարիլ ընդ նմա գթութեամբ և արդարութեամբ.

Որպէս դիւրաւ սայթաքին երբեմն արք իմաստունք ը զառ 'ի վայր մոլութեանց.

Որպէս զծնողաց խստութիւն, նոյն զհայրենեաց համբերութեամբ և ժուժկալութեամբ մեղմել արժան է.

Որ ոչ կարէ՝ զոր կամի, կամեսցի զոր կարէ.

Ուր արդիւնք են հաւատարք, հաւատար լինել պարտ է և պատուոյ.

Ուժ

Ուր ինչ մի հակառակ ելանէ շահու անձին, ոչ ջերմ գտանի պաշտօն աստուածայինս։
Ուր յանկ ելանեն պատրանք, սկիզբն առնուն տուգանք։

Զանսալ երբէք Թշնամւոյ, և ոչ երկըն-չիլ 'ի ձախորդութեան, այլ երևեցուցանել առաւել ևս սրտապնդութիւն և յոյս։

Զի՛ք ձախութիւն որչափ և մեծ իցէ, զոր մա-ըեդին շռայլութիւն ոչ վատնիցէ։

Զի՛ք յանցաւորութիւն, որում չիցէ ըն-դունակ մարդկան չարութիւն։

Զի՛ք տեղի դեղոց բժշկութեան, ուր մո-լութիւնք փոխեցան 'ի բարս։

Պայծառանայ յաղթութիւնն՝ 'ի յաղ-թահարելն զմարտուցեալս, և ոչ 'ի ժանտանալն առ պարտեալս։

Պատուասիրութեան հնար է ծպտել և զգենուլ զերևոյթ ամենայն առաքինութեանց՝ առ հասանել իւրոց խորհրդոց, և երևել յաչս մարդկան ցածութիւն, ուղղութիւն, անշահասիրութիւն անձին, և երախտաւորութիւն։

Պարտ է վարել ընդ իշխանաց իբրև ընդ հրոյ, առ որ՝ Թէ առաւել մօտաւորիս՝ այրէ. եԹէ հեռանաս՝ սառնուս 'ի ցրտոյ։

Պօղեբիոս հաստատէ ոչ առ ծ ինչ էակին և հռոմնական մի զօրավարի. Թէ չէ պարտ նմա երբէք դիմագրաւել անձամբ առ վտանգ։

վտանգ, յորժամ պտղովն չէ հանրական որոշեալ. և թէ յայնժամ իսկ պարտ էմք բաւական լինել 'ի վտանգէ ըստ կարի ։

Գինջ ոսկի է անծանօթութիւնն, զորոյ՝ խառնուրդ սնապաշտութեան ոչ կարէ բառնալ զարժէս ։

Սէր հպատակաց առաւել քան հաստապինդ ամրութիւն է աթոռոյ։

Սէրն ծառայէ այլով հաւատարմութ. և նախանձաւորութ. քան զերկիւղ։

Սիրտ պտղատական 'ի ձախորդութիւնս յուսայ, և 'ի յաջողուածս զանգի է 'ի փոփոխութենէ բաղդի 'ի հակառակն ։

Սուտ դըզփուլի, և անմիտ սէր փառաց ։

Ստորադասութիւն և հնազանդութիւն, երկու գլխաւոր պատճառ են մեծութեան և զօրութեան պետութեանց աշխարհաց ։

Սեռամոլք դիւրաւ ըմբռնին 'ի ծուղակ յիւրեանց փայփայեալ կերց ։

Պ——————— ։

Տեսչութիւնն յոլովակի 'ի ձեռն առաջնու զմի չարագործ 'ի պատուհասել զայլ չարագործ ։

Տոյժ համբաւոյ և հաւատարմութեան ապաքէն մեծ է և անկշռելի ։

Ցանկութիւնն կրէ 'ի կապարճս ազգ-ազգս նետից, է՛ որ կապարեայ, է՛ որ

որ ոսկեղէն, և է՛ որ բոլորեղէն. որովք խօ-
ցէ բազմօրինակ. ոմն սիրահարի տարրք
հաճոյից, ոմն ձեւաւորութեան, և ոմն պտղոյ.
ամէն է ցանկութի:

Փորձ կեղծեալ պատերազմի բառնայ
զերկիւղ ճշմարտին:

Բաջաղէպ ելք կուրացուցանեն երա-
բեմն զանձնորդս, և լինին նոցա մա-
հաբերք:

## ՄԵՂՈՒ.



# ՅԱՆԿ

## Ըստ կարգի Այբուբենից


| | Երեսաթիւք |
|---|---|
| Ագահութիւն. | 31.127. |
| Ազնուութիւն մարդկան. | 21. |
| Աղքատութիւն առաքինեաց. | 130. |
| Ամուսնութիւն. | 32. |
| Անիրաւութիւն. | 55. |
| Անիրաւութիւն ծառուժայ. | 195. |
| Անձն խնդրութիւն. | 158. |
| Անձնաւորութիւն. | 124. |
| Անյիշաչարութիւն. | 78.88. |
| Աննախանձութիւն. | 121. |
| Աննիէող խորհրդոնայէ. | 59. |
| Աշահաւորութե կամ աշխատաւորութե. | 170. |
| Աշխատութիւն և հեշտութիւն. | 56. |
| Աշխատասիրութիւն. | 65. |
| Ապերախտութիւն. | 86. |
| Ապաւէ Օգնութեայ. | 86. |
| Ապանձնահեցութիւն. | 9. |
| Ապապաձեանութիւն. | 28. |
| Առաքինութիւն. | 23.134. |
| Ատենաբանութիւն Կիկերոնէ. | 112. |
| Արդարութիւն. | 42. |
| Արժանապատուութիւն. | 107. |

Աբեսողոմայն և հայր որդէ. 157.
Արիութիւն. 27. 105.
Արձանագրութիւն արքայէ. 23.
Բարեխաւսութիւն. 28. 29.
Բարեկամութիւն. 36. 38. 41. 70.
Բարեկարգութիւն զօրաց. 152.
Բարկութիւն. 72.
Բերկրութիւն. 35.
Բանութիւն հայրենասիրութեան. 164.
Բրուտոս Կեսարասպան. 87. 106.
Գողութիւն. 35.
Գովութիւն զօրավարաց. 66.
Գաւակցութիւն. 115.
Դեյոտարոս. 76.
Դիոգենէս [illegible]. 119.
[illegible]. 154.
Զեղխութիւն. 125. 132.
Էշ և [illegible]. 102.
Ընկերութիւն. տե՛ս բարեկամութիւն.
Թագաւորք մարդկան. 23.
Ժամանակաւորութիւն. 53.
Ինքնափառութիւն. 31.
Իշխանք նմանին արեւու. 31.
Լայ Կորնթացի ընդ Դեմոսթենեայ. 84.
Խոհականութիւն Կիւրոսի. 89.
Խոհեմութիւն Բրոտոսի. 190.
Խոնեմութիւն. 26.

ժէ Խոնար-

Խոնարհութիւն. 77.
[illegible] 41.
[illegible] 25.
[illegible] 186.
[illegible] 129.
[illegible] 120.
[illegible] 44. 53.
Կաշառ. 68.
[illegible] 176. 194.
[illegible] 72.
[illegible] 28.
[illegible] 135.
[illegible] 43.
[illegible] 57.
[illegible] 183.
[illegible] 26.
[illegible] 128. 160.
[illegible] 45.
[illegible] 54.
[illegible] 33.
[illegible] 69.
[illegible] 39.
[illegible] 85.
[illegible] 73.
[illegible] 56.
[illegible] 190.
[illegible] 57.

[illegible]

[illegible] 103.
[illegible] 109.
[illegible] 147.
[illegible] 108.
[illegible] 55.
[illegible] 25.
[illegible] 45. 46. 50. 52. 68.
[illegible] 27.
[illegible] 133.
[illegible] 124.
[illegible] 39. 43.
[illegible] 33. 117.
[illegible] 184.
[illegible] 62. 64.
[illegible] 104.
[illegible] 87.
[illegible] 32.
[illegible] 24.
[illegible] 34.
[illegible] 113.
[illegible] 79.
[illegible] 26.
[illegible] 189.
[illegible] 42.
[illegible] 174.
[illegible] 70.
[illegible] 87.

[illegible]

[illegible] հանդերձ [illegible] Տօն [illegible]
[illegible] 93.
[illegible] 67.
Սնոտի պաշտամանց. 36. 48.
[illegible] 20.
[illegible] 120.
[illegible] 50.
[illegible] 173.
[illegible] 84.
[illegible] 102.
Տէրութեան 107.
[illegible] 94.
Տնտեսութեան. 34.
Տօն [illegible] 182.
[illegible] 57.
[illegible] 153.
Քաղաքավարութեան. 9.
[illegible] 191.
[illegible] գրոց. 126.
[illegible] 88.
[illegible] 97.
Օրէնք. 123. 127.

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խնդալից հոգւով գոհաբանեմ պաշտելի Տեառն Ամենատեառն, շնորհ ունիմ բարեգիջուն ժամանակին. որ թոյլ ետ սկզբնաւորս գործոյս հաւաքածոյ՝ փութով 'ի վախճան, և տեսանել զթերամասնեց երկն ձեռաց իմոց 'ի սակաւ միջոցի ապագրութիւն կենդանացեալ, 'ի յիշատակ ինձ և իմոց ազգատոհմի:

Վասն որոյ աղերս 'ի միջ մատուցեալ առաջի մերձաւորաց իմոց աղաչեմ կրկին ներողամիտ տանել ինձ յայս գործ, յոր ձեռնարկի 'ի վեր.քան զձաիմոց կարեաց. զի չէին ինձ կամք

զա-

զանուն գրաւոր սահմանել,
այլ գրաւորի. և ոչ պարծանս նո-
րայցոյց գրատպութե հռչակել
զինէն, այլ նախանձեցուցանել նա-
խանձու բարեաւ զա՛մ զհամազգի
ուսումնասէր Անկունս մեր. յօ-
րինակէ խմբէ քաջալերեալ կամ
պատկառեալ՝ առ այսպիսի ազ-
գաշահ իրողութիւնս ամենացան-
կալի Հայրենեաց մերոց թեւա-
կոխել: Ոի թէ այր անցեալ զե-
րիտասարդութբ և անուս բոլո-
րովին՝ այսչափ փոյթեռանդն երբէ
ջանալ ծանօթանալ գիտութե
Իմաստնոց, և 'ի լոյս ընծայել զա-
ռաքինութիւնս նոցա կամ զմո-
լութիւնս 'ի հրահանգ վարուց և
բարուց մերասէր համբակաց,
որ-

որչափ նոքա կարասցեն հմտա-
նալ, իմաստնանալ և առաքինա-
նալ. եթէ ծնողք նոցա ծանու-
ցանել զճաշակ դրականութեան,
յորդոր լեզւին և մերձակայու՝ ան-
ընդհատ առաջնորդել որդւոց
իւրեանց ՚ի հանապազորդութիւն
ուսմանն, ապախտ արարեալ զայս-
օրեայ վաստակս նոցա: Թերևս
այն այս իցէ պատճառ, զի նոքա
է յոյժ թիւ ուսելոց յազգի մե-
րում. զի ծնողք՝ խաբեալք կոյր
զկուրոյն անխնամ կարծեօք ՚ի
մանանաւոր շահուց՝ զորս որդիք
իւրեանց ՚ի ձեռս բերեն այժմ
անարգ աշխատանօք, զրկեն զին-
քեանս և զորդիս իւրեանց յե-
ղուց ՚ի մեծամեծ յապագայ շա-
հուց:

հոգւ։ Աւա՜ղ, թէ ոչ ըղձատարա-
ցին յայսմհետէ։

Ապաքէն բարոյից ասպա-
րիսեալ զհամարձակութիւն իմ յատ-
եան Գրիգորոց, ընծայեմ զայն
մեծաղուարձ սրտիւ դեռաբոյս
Սուսամնականց այգիս ՚ի վայելս․
պարտաւորելով զնոսա ՚ի յիշել
բարեմաղթութեան ՚ի Տէր զհայր
իմ զԵրեմիա, և զմայր իմ Զա-
յիմ՝ զհանգուցեալս առ Տէր․
դասել զնոսա ՚ի դաս աջակող-
մեան արդարոց․ և զմիածին ժա-
ռանգական ազգատոհմի իմոյ զԵ-
րեմիա ․քահանէհինգամեայ զին-
ուորական Աղայն ՚ի հեծելա-
զնդի (կոչեցելոյ Լէյբ Գվարդեյ.
Ուլանսքէյ Պոլք ) Օգոստոսի Ասյ-
սե․

ներութեան Յուսայ, գլխւ-
ղակերն Աստուածութեան որդւոյն
Աննայի զ. կարգի առնել ողջ մեծ
յօգուտ և ի փառս Հայրենեաց
և սուրբ Եկեղեցւոյ մերոյ: Ըս-
ղալ մի կենդանին և զհանգու-
ցեալս մեր երկնից օթևանաց խն-
րոց արժանին առնելով:

Ամէն:

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Пу..ичная Библиотека
7/VI 1922
имени А. Мясник..на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# Օտապագրութեան

| Սխալանք | որ 'ի Տողս | Երեսաց | այսպէս Կարդա |
|---|---|---|---|
| բէն ․ մին իրի | 1 | 15 | բէ ․ նմին իրի |
| քան գոլեսցեն | 11 | 57 | քան թէ գոլեսցեն զքեզ |
| յաղթեսցես | 2 | 62 | յաղթեսցիս |
| զազդ | 7 | 68 | ազգի |
| հաւատագործութեան | 10 | 70 | հաւատագործութեան |
| զապաւէնէլ | 11 | 72 | չապաւինել |
| մարդ | 9 | 78 | զմարդ |
| էմաստից | 14 | 138 | իմաստից |
| Լուսեցէն | 23 | 139 | Լուսեցեն |
| մի | 2 | 143 | մի՛ |
| վարել | 16 | 144 | վարէ՛լ |
| ճամամասորպաշտն | 6 | 149 | ճամամասորպաշտն |
| այսպիսում | 13 | 154 | այսպիսուն |
| պատուոյ | 6 | 156 | պատուոյ |
| Ալ մանկաբերութեան | 18 | 186 | Ալ մանկաբերութեան |
| Գոէմոռելէնէս | 1 | 198 | Գոիմոռելէնէս |
| Հաստատութեան | 1 | 202 | Հաստատութեան |

Յօրէնաչս էնչ.

Յօրէ